

№ 64

Առզուվագույղը բարեկան նիսթեր

(Գրական լեզուի վերածուած)


Ա. ԳՐԱՎԵԼԵՍ Յ

# ԽԱՐԱԶԻ ՏՂԱՅՑ

Կ Ա Մ

## ԵՐԿՈՒ ԱԽՊԵՐԱՑԵՆ

Հ Ե Գ Ե Ա Բ



Թ. Ի. Գ. Լ. Ի. Ս

Ճպարան Մ. Շարադէ. || Տիպ. Մ. Շարադզ.

1893

Ակրեք

342

2004

ՀԱՅՐԱՎ  
342

Կ. Թոհմանի Հայոց Հրատարակչական Բնկերութիւն

№ 68

Առողջապահութեան նիսթեր

Ա. ՔԵՄԵԼԵՑՅՑ


# ԽԱՐԱՁԻ ՏՂԱՅՑ

1888

ԿԱՊ

## ԵՐԿՈՒ ԱԽՊԵՐԱՑԵԴ

ՀԵԳԵԱՐ



ԹԻՖԼԻՍ  
Յպարան Մ. Շարամակի. || Տիպ. Մ. Պարաձե.  
1893

4448



Ա.

Եղել է մի թագաւոր, անունը Պայտպալ. շատ հարուստ, շատ ունեռոր, ու եօթը աղջկերանց գլխին՝ աչքի սև ու սպիտակ մի տղալ է ունեցել. Ան գլխից տղալ գաւակ շատ էր լինում, ոչ մինը հասուեհաս չեր դառնում. մինը բկացաւով էր մեռնում, երկրորդը ծակոցով, երրորդը մի անմեղ բանով, չորրորդն ու հինգերորդն էլ, ով զիտէ, Բնչ կորած, մոլորուած ցաւերով: Այս տղէն էլ որ կենդան էր մնացել՝ պատճառն այն էր որ Պայտպալ թագաւորը եօթը խաչի գլուխ կոտրելով, մատաղներ մորթելով, խեղճի ու չունեռի ողորմութիւն տալով երկնքի ու գետքնքի սիրտը գումժ էր զցել ու բերել քսան տարուան հասցըել:

Մի անգամ երբ թագաւորն ու թագուհին պարտիզումն էին՝ մի սիրուն ծիտ թռթռալէ նստեց գիմացի ճղանն ու հարցըեց.

—ԱՌ փարթամ հողեղեններ, ձերն Բնչն է պակաս, որ ծալած կռներով արտասուք էք չափում, լիութեան մէջ անտափիլ, անխմիլ հեծում էք:

—ԱՌ ծլվլան ծիտ, Բնչներիս է պէտք փարթամ ապրուսը, որ մի ցաւի ձեռից հովութիւն ու ճար չունինք:

—Ինչ է ձեր ցաւը, ձեր ինդրուածքը, որ ճար չէք գըտնում, հարցըեց ծլվլան թռչունը:

—Մենք մի փափագ ունինք, մի փափագ, Աստուծոյ կամարին մատալ, արսչափ գանձն ու հարստութիւնը ցեց ու կարիճ են դառել ու մեր ջանին թափուած ուտում:



342-2004

| 3832 |  
41 |

28 342

— Զեր փափագը ինչ է որ....

— Մի տղայ զաւակ, մի տղայ զաւակ, միաբերան ձայն  
տուխն երկուսն էլ:

Ծիտիկը քիչ լուռ մնալուց յետով ծլվլալով ասեց.

— Զեր փափագը կ'կատարուի, ձեր ցանկացած տղին կու-  
նենաք, բայց նա ձեզ շատ ցաւ ու վիշտ կպատճառի, գլուխը  
շատ փորձանքների կտայ:

Այսպէս ծլվլաց ծիտը ու թեին անելով թռաւ:

— Յօժար ենք ամեն ցաւ ու վիշտ տանելու նրա պատ-  
ճառով, միայն թէ լինի, ծիտիկ հրեշտակ, լիասիրտ ասացին  
թագաւորն ու թագուհին:

Տարուայ գլխին թագուհին տղայ ունեցաւ: Աշխարհի  
ըոլոր ծալբերից շտապեցին շնորհաւորելու «աչքի լոյս, թա-  
գաւոր, ինդրուածքի առ Աստուած Հասաւ, փափագիդ Հասար»

— Աչքի լուսի կենաք, պատասխանում էր թագաւորը ու  
ամենին պարզեատրում: Երբ մկրտելու օրը Հասաւ, տէր-  
տէրը մանուկին կնքելիս հարցը եց.

— Անուն ինչ դնենք: — Մինն ասեց. Խաչատուր գնենք  
երկրորդը թէ՝ Աստուածատուր. երրորդն ու չորրորդը տե-  
սակ-տեսակ անուններ: Բայց ինչ թագաւորն էր՝ ինդրեց  
թէ. — Տէր Հայր, որդուս անունը Փափագ գիր: Հայ այսպէսով  
տղի անունը կպաւ, Փափագ: Խեղճ հօր սիրտն այնպէս  
սրլսութիւն էր որդու վրայ, որ չէր իմանում, թէ անչափ  
սրեկուց վարդիք մէջ պահի, թէ մանուշակի: Ամիսներով չէր  
թողնում մղալլ գուռս գայ, չինի թէ արև տեսնի, կամ  
անձրւի ցալքուն դիպչի: Տղի բեղատեղը քրտնքել էր, միաբուքն  
էլ կամաց-կամաց ծլում էր, իւր ժամանակի բոլոր ուսումը  
գիտունների միջոցով հասկացել էր, բայց չգիտէր թէ աշ-  
խարհն ինչ տեսակ բան է:

Մի օր ոնց եղաւ, Փափագը մենակ ծածուկ պարտէցն  
էր իջել: Կարծես Աստըծուց մի օր գողացած՝ դուրս թռաւ  
մի կերպ, վանդակից փախած թռչունի պէս, որ տղատօրէն

ման ու ման անի արօտներում ու հովիտներում: Էլ տղբիւր,  
առու, քերծ ու քարափ չթողեց, բոլորը աչք ածեց ու միջնա-  
ժողովն տուն էր դառնում: Այս ինչ ծառաներն ու պալտա-  
կանները նրա ետնից ամերող օրը ման գալուց լոգնած թա-  
գաւորի մօտ էին դարձել, որ գլխին բարձրաչելով իր սև օրը  
լալիս էր: Թագուհին հօ ձեռից գնտցել էր. ջրատար մայ-  
քը մղկիտից անշունչ ընկած նըւում էր:

## Բ.

Երբ յանկարձ Փափագը գուռն ի վեր կացաւ՝ թագուհին  
ուրախագին դէմն ելաւ, հալին էլ արտասուքը ծածուկ սըր-  
բեց, մօտեցաւ որդուն, գրկախառնեց. իսկ Փափագը տխուր  
ողջունից յետով մի կողմ նստեց ու հօրը հարցը ծանրու-  
թեամբ.

— Թագաւորն ապրած կենայ, ով պէտք է ձեզ լաջորդի:

— Ի՞նչ ասել կուզի, որ գուք, իմ սիրելի որդի:

— Կարմանալի բան էք ասում, հայր, ես ինչպէս կարող  
եմ կառավարել ընդարձակ երկիրդ իւր ժողովրդով, երբ ես  
իմ գլուխը կառավարելու ընտելացած չեմ, երբ ինձ քնքուշ  
մանուշակի պէս շուաքից չես հանել: Ձեր ձեռի ատկ սնուել  
եմ ինչպէս կակուղ մոմ, ինչպէս անփորձ տեղովս պէտք է  
կուռեմ ժողովրդին անվանդ պահելու համար անթիւ փոր-  
ձանքների գէմ:

Հայրը գուշակելով թէ որդին ո՞ր լարին է խփում, և  
երկիւր կը լուս բորբոքելուց, նեղսրտութիւն պատճառելուց՝  
մեղմով պատասխաննեց.

— Իրաւ է ասածդ, որդիս, մեղն իմս է, բայց ճարս ինչ  
էր, որ այգալիս չանէի: Աշխարհում հազար ցաւ ու կրակներ  
կան. սատանէն հակառակ է, վախենում էի մի բան պա-  
տահի:

— Ոչ, հայր իմ, լաւ չես արել: Մինչև օրս ինչու չգիտեմ,  
որն է իմ աշխարհը, որո՞նք են հպատակներս, ի՞նչ ցաւեր  
ունին նրանք: Բաւական չէ, որքան կալանաւորի պէս փա-  
կուած մնացի: Վճռել եմ ման գալ մեր աշխարհի ամեն  
կողմերը, մտնել ամենավերջին շինականի խրճիթը ու նրա  
գրութիւնը տեսնել: Ուստի խնդրում եմ տաս ինձ քո ձիերից  
ամենալաւը, քո թրերից ամենակտրուկը:

**Հայրը վեր կալաւ թէ**

— Այ որդի, տեսնում ես, որ ծերացել եմ, ոտիս եղած  
թելն էլ մի կտրիլ ճանապարհորդելը քեզ պէտք չի: Մօրդ  
մտադրութիւնը աւելի լաւ է, պսակուիր ու գլուխդ հանգիստ  
նստիր, ոչ դէս գնա, ոչ դէն:

**Տղէն հակառակի ձիուն նստել էր ու ասում՝**

— Զէ որ չէ, պէտք է իմ խօսքը լինի: Դեռ պսակուե-  
լուս ժամանակ չի, պէտք է փորձուեմ, պէտք է աշխարհ  
տեսնեմ:

Հայրն էլ տեսաւ անկոտրում է, չի լինում՝ ճարահա-  
տեալ ասեց.

— Այ որդի, դէ որ բոլորը քու ասածն ես ուզում՝ թող  
մինն էլ իմ ասածը լինի:

**— Հրամայի, հայրիկ:**

— Աշխարհիս որ կողմն ուզում ես՝ գնա, բայց աղաչում  
եմ Մեծ Սըռի այն կողմ մի անցնիլ: Գըմբ-գըմբ քարափներ  
կան այնտեղ. ասում են, գնացողներին դէպ իրենց են քա-  
շում: Պայ-պայ-պայ, ես վախենում եմ. այնտեղ հասնող երի-  
տասարդը կամ մնում է, կամ եթէ վերադառնում է՝ ոտի  
վրայ բարակ է մանում ու մահիճ ընկնում:

— Հայր իմ, եթէ գըմբ-գըմբ քարափները մեր աշխար-  
հից գուրս են, չեմ գնալ մինչև գրդող պատճառ չլինի: Իսկ  
եթէ եղաւ, հազար թոկով կապես՝ պիտի գնամ: Նատ քըն-  
քոյշ ու վախկոտ մնալն էլ մի բանի նման չի, հարկաւոր է  
մի քիչ էլ լինել տղամարդ:

Պայ-պայ թագաւորը տեսաւ որ թթուելով խախալի  
գլուխը բան չի գցում, որդին էլ զուր տեղը նեղարառում է՝  
բերել տուեց ամենալաւ ձին ու ամենակտրուկ թուրը. ու-  
ղեկիցներ ոբոշեց, նազիրին էլ առաջնորդ նշանակեց, որ իբ-  
րև փորձառու անձ տանի իր տէրութեան երևելի քաղաք-  
ները, տեղերը ման ածի ու ողջ առողջ լետ բերի:

Նազիրի սըտի ուղելիքն էլ հենց այդ էր, որ կարողա-  
նալ օրի վրայ իր նպատակին մօտենալ, Փափագին իրեն  
փեսայ շինել:

## Պ

Ուզի ելան. նազիրը բան գցեց իր աղուեսի լեզուն ու  
սկսեց գովել Փափագի աչքաբացութիւնը. «բա՛, տղէն այդ-  
պէս պէտք է լինի, ասում էր նազիրը, որ ժամանակ ժամա-  
նակ ցոյց տայ, թէ իրենում էլ տղամարդի նշան կայ, ճա-  
նաչի իր երկիրը, իր աշխարհը, որ ժողովուրդը նրան սիրի  
ու հարկաւոր ժամանակ նրա մի խօսքով ոտի կանգնի: Մին-  
չև օրս ես շատ անգամ թագաւորին ասել եմ. թէ թագա-  
ւորագնը մեղք է, նրան հարկաւոր է աշխարհի հետ ծանօ-  
թանալ, թողի մի քիչ գուրս գալ, անձրև արև տեսնի. — նա  
միշտ վշտացել է այդպէս առաջարկ լսելիս: Ո՞վ գիտէ ո՞րքան  
փակ կեանքում պահէր, եթէ դուք չկտրէիք ձեր ոտները  
կապիկող թելը: Լաւ արիք, արիստիրո Փափագ, ամենքին էլ  
դուրալի է ձեր արտծը: Բայց եթէ իրաւունք կտաք, ես մի  
օգտակար խորհուրդ կտամ:

— Ի՞նչ էք ուզում, ասեցէք լսեմ, խօսեց Փափագը միա-  
մտաբար:

— Բաւական ժամանակ է մենք ճանապարհորդում ենք,  
ասեց նազիրը. բայց մի բան ինձ գուր չի գալիս, որ գուք  
ձեզ շատ ցածը էք պահում. դա թագաւորագնին վայել գիրք

չէ: Ուր շէն էք տեսնում՝ առանց զզուելու գետնափոր, խոնաւ տներից՝ մտնում էք այս պուճախը, այն օջախը, որ ինչ է տեսնէք, թէ անգէտ մարդիկ ինչպէս են ապրում: Երկար ժամերով հետները նստում գլխացաւանքութիւն էք անում, որ հասկացնէք նրանց պակասութիւնները: Աշկարայ ականջ դառած նրանք ձեզ լսում են, բայց չէք իմանում, որ աւանակները ձեր քամակից կարող են ծիծաղել: Իմ գլուխն էլ չի վերցնում, դրուստն ասեմ, որ ձեր տեղն արդքան ժիշեցնում էք: Պէտք է իմանաք ձեր հաւասարի հետ նըստել, ձեր հաւասարի հետ խօսել: Ուղիղ է, ուսում շտու էք առել, բայց ներեցէք որ աշխարհի հանգերը չէք իմանում:

Այսպէս խրատներ անդադար ասում էր նազիրը գլուխը տմտմբացնելով, բայց չէք իմանում, որ Փափագին արդէն զզուեցրել էր և կշտացրել իր տափակ խրատներով, որն այս անդամ առանց բարկութեան նշան երևացնելու ասեց.

— Ծերունի սազիր, շատ շնորհակալ եմ մինչև օրս տուած խորհրդներիդ համար: Ալժմ հարկաւոր է որ ես իմ սեպհական խելքով գործեմ ու շարժուեմ եթէ կարելի է մի առ ժամանակ ազատ թողէք ինձ: Ուղեք իւրաքանչիւր քայլիս հետեւեցէք, բայց իմ արած կարգադրութեանց մէջ մի խառնուէք, մինչև հօրս մօտ հասնելը:

Նազիրը ակամայ ընդունեց այս անսպասելի առաջարկը, բայց էլի չհամբերեց որ ծածուկ տնազի առարկալ չշինի Փափագի արածները: Նազիրի այս բոլոր արարմունքները Փափագի ականջն էր հալում ուղեկիցներից մի կտրուկ երիտասարդ, որը թագաւորազնի համար ճամբում զրուցընկերի գեր էր կատարում:

Երբ բաւական գնալուց լետոյ աչքներով մի քաղաք ընկաւ՝ Փափագը հարցրեց.

— Այս ու այն տեղ անհամ, անհետաքրքիր պատմութիւններ լսելուց գլուխս ցաւեց, միթէ մեր աշխարհի հա-

սարակ դասակարգի մէջ մինը մի համով բան չի արել, որ ասես լսեմ:

— Ինչո՞ւ չեն արել, թագաւորազն տէր, պատասխանեց ուղեկիցը, բայց ով է եղել մինչև օրս հասարակ դասակարգի տէրը, որ նա մարդատեղ դնուի, նրա ցաւը աշկարայ լինի:

Փափագը աչքերը հիացմածը չուելով խօսակցի վրայ ասեց:

— Եթէ կայ՝ անվախ ասա, պատմիր. այդպէսների տէրը ես եմ լինելու:

Ուղեկիցը սիրտ առնելով խօսեց.

— Աստուած բարի տայ ձեզ, թագաւորազն տէր, մեզ պէս աղքատները ձեր արել շատ կ'օրհնեն:

— Լաւ, ասեց Փափագը ձիու ասպանդակը հրելով. այնպէս ոչինչ չկայ այս քաղաքում. բան չես լսել որ և է քաջի մասին. պատմիր տեսնենք:

— Ո՞նց չէ. թագաւորազն տէր. ես չեմ տեսել, բայց լսել եմ մի քաջի մատին, որ հէնց այս քաղաքումն է: Նա առաջ է գարձած իր ուժով և իր խելքով. հայր ու մայր չունի. արհեստաւոր է: Հայրը խարազ է եղած, դրա համար ընկերները նրան կոչում են Խարազի տղայ: Եէնք ու շնոհքը բերան բերելու բան չի: Դրա գովքը քաղցրութեան, քաջութեան կողմից տարածուելով հասել է մինչև իշխանի մի հատիկ աղջկայ ականջը, որն իր սրտում Խարազի տղին իրեն փեսայ է լնտրել: Երբ քաղաքի իշխանի մօտ շատ փեսացուներ են գալիս ու ոչ մինին աղջկը ձեռ չի տալիս՝ հօրից անչափ նախատում, յանդիմանուում է: Ու երբ ստիպում են դրա պատճառն ասել՝ աղջկը մօր միջոցով իր սրտի սէրը լայտնում է: Հայրը կատադում է փրփրում, ու տմենակին չի ուզում իր դստեր ընտրած փեսայի մասին լսել. ինչո՞ւ, որակհետեւ նա տղքատ է և հասարակ խարազի տղայ:

— Հատիկ աղջկս պատկեմ, ասում էր զայրացած իշխա-

նը. այն էլ խարազի տղի տամ: ԶԵ, կտոր կտոր կանեմ, չեմ  
թողիլ այդ բանը գլուխ գայ:

Խարազի աղէն միամիտ, իր գործին էր. իշխանը կանչել  
է տալիս իր մօտ:

—Դու անպիտան, ասում է, ոնց ես համարձակուել ան-  
մեղ աղջկանս խելքից հանել և քեզ վրայ տաքացրել:

Խարազի տղէն որ մինչեւ այդ օրը իշխանի աղջկայ երե-  
սը չէր տեսել՝ պատասխանում է:

—Ողորմած իշխան, իմ վիճակս ձեր վիճակից այնքան  
հեռու է, որքան ենկինքը երկրից. ես աղքատ տեղովս ինչ-  
պէս կարող եմ ձեր աղջկան գլխից հանել: Դա թշնամու  
խօսք կլինի, տէր իմ, որ ուզում է ինձ վնասել: Կանչեցէք  
ձեր դստերը, յոյս ունիմ որ այդ կասկածը նա փարատէ: Եթէ  
կհաստատուի, որ ես որևէ է կերպ աշխատել եմ այդպէս հա-  
մարձակ բան անել՝ ապա յօժար կլինեմ քաշելու ինչ պատիժ  
ուզենաք:

Կանչում են աղջկանը, որ Խարազի տղին տեսնելուն  
պէտք ականջակոթերից յետ կարմրատակում է: Իշխանը խըս-  
տութեամբ դառնում է աղջկանը:

—Արդեօք այս լիրը չէ, որ քեզ ճամբից հանել է: Ա-  
սա ճշմարիտը:

Խարազի տղէն այս խօսքի վրայ յուզուած մէկ ուզում է  
վեր կենալ իշխանին՝ զորս դու պատուիրեցեր՝ տեսնել, մէկ էլ  
սրտատրով սպասում է աղջկայ պատասխանին:

Աղջիկը առաջ հօր անողոք դէմքին է նայում, յետոյ  
խարազի տղի աչքերին ու հոգի առնելով դառնում հօրն ա-  
սում:

—Զուր ես այս մարդուն մեղադրում, հայր, ինչ արել  
եմ, ես եմ արել: Առանց ծածկելու խոստովանում եմ, որ  
այս Խարազի տղին սիրում եմ: Ով ուզում է ինձ մեղադրի:  
Հաւանել եմ դրա ունեցած արժանաւորութիւններին, առանց  
աչքի առաջ ունենալու դրա աղքատ վիճակը: Ինչ էլ իմ ո-

բոշման դէմ ասէք՝ ես ընդունողը չեմ: Վճիռս անդարձ է:  
Իսկ եթէ դա ձեռ կքաշի ինձնից — այդ էլ ինքը լինի, իրեն  
Սատուածը:

Այս ասմունքի վրայ իշխանը կատաղած ամպերի ուժով  
գոռգոռում է:

— Ա՛յս դու անզգամ և լիրը գաւակ, ինչպէս թէ հա-  
մարձակուես ինձ հակառակ գնալ. թողես իշխանազուն պա-  
տուական տղէքը, խելքաւաղ լինես մի խարազի տղի վրայ:  
Սպասիր, քեզ ցոյց կտամ ընդդիմութիւնը: Այնքան բանդար-  
կած պահեմ, դու ինքդ զգաս քո անզգամութիւնը:

Խարազի տղէն որ առիւծից ուժեղ էր՝ թող է տալիս  
աղջկայ սիրու, որ իրեն էլ բանդարկեն: Կարծում էր, որ վաղ  
թէ ուշ՝ իշխանի սիրու գումար կընկնի:

Խարազի տղի սիրու մեղմէրէց տալով սկսել էր թէժ  
կրակի նման ալրուել աղջկայ սիրու: Նա ամենենին չէր զգում  
իշխանի մարդկանց տուած անսրգանքները: Բանտարկութիւ-  
նը շարունակում էր, և իշխանը խարազի տղին հաւասար  
չարչարում էր և իր աղջկանը, որովհետեւ ոչ մինը չէր ու-  
զում իր խօսքից յետ կանգնել: Երկար չքաշեց, աղջիկը հե-  
ւանդացաւ մաշող մտածմունքների ձեռից ու մուրազաշոր  
մեռաւ: Իշխանուհին սգաց իր մինուճար դստեր մահը, իսկ  
իշխանն աւելի կատաղելով՝ երդուեց Խարազի տղին մուժ-  
բանդում այնքան պահել, որ ոսկորները փտելուց քըքըուեն:  
Իր սիրուհու մահից ահա քանի տարի է անցել, գեռ Խարա-  
զի տղէն տեղեկութիւն չունի: Զրատարը նշանածի յուսով է  
ապրում: Ասում են, նրա նման ընկերասէր, անձնուէր ողջ  
քաղաքում չկայ: Գովում են նրա տեսքը, բայց ինչ ասել  
կուզի, որ հիմի կոտրուած կլինի:

Փափակը գոհութեան ժպիտը երեսին դարձաւ ուղեկցին  
ասեց:

— Ապրես, շատ ապրես, եթէ ասածդ իրաւ լինի՝ ես քեզ  
նըտիր ընծայ կտամ:

— Մազաշափ սուտ չկայ ասածիս մէջ, տէր իմ, խօսեց ուղեկիցը, քաղաքն առաջներիս է, կդնանք, կստուգենք տեղն ու տեղը:

— Նէնց հիմա գնանք, շտապով վրայ բերեց Փափագն ու ձիու ընթացքը արագացնելով ուղեկցի հետ առաջ ընկաւ:

Նազիրը բաւական ետ էր: Թագաւորագնը մի քանի ըռպեկից յետոյ քաղաքի բանտի բակում կանգնած էր:

— Խարազի տղի կապանքները արձակած բերէք դուրս, Հրամակեց պահապաններին:

Մի առ ժամանակ բանտի պահապանները շուարած մընալով՝ տեսան որ Հրամայուղը ուրիշ հանգի է, իսկոյն կատարեցին Հրամանը: Փափագի առաջ տնկուեց մի ջլոտ, ածովի տղամարդ, երեսհարքը այնքան դժնեայ չէր ինչքան ահարկու:

— Դու ես Խարազի տղէն, Հարցրեց թագաւորազը կարեկյութեամբ:

— Այն, ես եմ, ողորմած պարոն, պատասխանեց Խարազի տղէն, զարմացած աչքերով նայելով Փափագի մատղաշ հասակի վրայ: Արդեօք դուք չէք վախենում իշխանից, որ նրա կալանառը արձակում էք: Ես մի անբաղդ մարդ եմ, ինչու իմ պատճառով դուք փորձանքի մէջ էք ընկնում:

Տեսնելով որ երիտասարդը հզօր իշխանի անունը լսելիս այնումը չի գցում՝ խարազի տղէն կարծում է թէ սա հրեշտակ է մարդու կերպտրանքով եկած, որ լոիկ մնջիկ շարունակ իրեն է նայում:

Լուրը շուտափոյթ հասնում է քաղաքի իշխանին, թէ մի յանդուգս երիտասարդ եկել խարազի տղին բանտից հանել է տուել առանց իրեն մարդատեղ գնելու: Ոգին կարուած օձի պէս իշխանը վրայ հասաւ, հէնց ուզում էր Փափագին ձիու վրայ կտոր անի, նազիրը փողոցի ծալըում ուղեկիցներով երևաց: Իշխանի թուքը մնաց կած: Ծեր նազիրի կերպարանքը նրան լաւ ծանօթ էր: Ժողովուրդը հետզհետէ

խմբւում էր. Հրապարակում էլ ասեղ գցելու տեղ չկար: Իշխանը բարկութիւնը զսկելու համար սրոշները կծոտում էր և շուտ շուտ նազիրին նայում, իսկ սա անտեղեակ պատահարից՝ առաջ եկաւ և խոր յարգանքով գլուխ տուեց Փափագին:

— Թագաւորագն տէր, ասեց նազիրը, քաղաք մտնելուդ պէս պէտք է իջնէիք իշխանի տանը, հանգստանալիք, ճամբի փոշուց մաքրուէիք, ապա ժողովրդին երևալիք: Միթէ յոդնած չէք, տէր իմ, գնանք հանգստանալու իշխանական պալատում:

— Եթէ կարիք էք զգում հանգստութեան՝ կարող էք, ես էլ շուտ կգամ. բայց իշխանն արժանի չէ այն շնորհին, որ նրա մօտ իջևանենք:

Խարազի տղէն ուրախութեամբ իմացաւ որ իր ազատիչը թագաւորի որդին է. իսկ իշխանը խելքը թոցրածի պէս չէր իմանում՝ ինչ հանգով շահի թագաւորազնի սիրտը: Գող—սիրտը գող: Իշխանը տեսաւ, որ իր արարմունքը դստեր մտին թագաւորազնին հասկացնող է իղել՝ ճարը կտրուած ընկաւ Խարազի տղի ոսները.

— Ես արի, դու մի անիլ. մեղք արի ծերութեանս: Վընան ինձ է գիտել, աղջիկն իմն է կորել իմ բոնութեան պատճառով: Գլուխս շատ ծեծեցի, եղնից չհասայ. ալժմ էլ եթէ քարափից ընկնեմ, ձեռդ ինչ կընկնի: Սրի իննալիք ալիքներիս, միջնորդիր թագաւորազնին ինձ ների, ինձ պատուից ըլցից:

Սրա նման շատ աղաչանքներ արեց իշխանը Խարազի տղից, բայց նա մնացել էր լուռ.

— Ես չէի հաւատում, շարունակեց իշխանը թագաւորազնին դառնալով, որ դուստրս կարող էր մի աղքատ երիտասարդի համար վշտամեռ լինել: Իմ գլուխը չէր վերցնում որա պէսին փեսայ ճանաչել, կարծում էի, թէ կարող եմ աղջկանս համոզել սրանից ձեռ վերցնելու: Ես չարաչար սը-

Խալուեցի և իմ ձեռով իմ տունը քանդեցի: Երբէք չգուշակեցի որ կարող է սրա մէջ Աստծու մատը խառը լինել աղջիկ շունչը փչեց սրա անունը լիշելով, իսկ սա մինչ օրս հաւատացած է, թէ նա կենդանի է:

Խարազի տղէն տխրեց այս միջոցին և քթածակերից ծուխն ու մուխը գցեց: Փափագը մօտեցաւ թեր բռնեց.

—Քաջ կաց, Խարազի տղայ, արի ինձ հետ. քեզ հասցը վշտի փախարէն իշխանն իրենը կստանայ, խօսեց Փափագը իշխանի վրայ թթուելով, իսկ Խարազի տղէն դարձաւ թախանձգին խօսեց.

—Թագաւորազն տէր, մի բան եմ աղաջում: Խնչպէս երեսում է աստուծոյ Հրեշտակի միջոցով ամեն բան իմ մասին իւշում էք: Աւելորդ է կրկնելը, միայն չէի հաւատում թէ իմ խաղաղ սիրտս տակն ու վրայ անողը կարող է ալդպէս շուտ թառամել: Եղածը եղած է, այլ ևս նա կենդանալու չի, ուստի թող տուր իշխանին, իմ պատճառով մազաչափ էլ թող վնաս չըհասնի. նրան դիպած վիշտն ել բաւական է:

Սլո խօսքերից լետոյ թագաւորազնը աւելի քաղցր նայեց Խարազի տղի վրայ, իսկ իշխանը մօտենալով Փափագի առջև չոքեց.

—Թէպէտ հասակով գուք ինձնից շատ փոքր էք, ասեց, բայց թոյլ տուէք ծունկ չոքած մի ողորմութիւն խընդրելու: Տեսնում էք որ ես մի վշտակոծ հալր եմ առանց մի մխիթարութեան: Ուր էր թէ Խարազի տղէն ինձ իր ձեռքով սպանէր, ինչպէս ես սպանեցի իմ աղջկան—նրա սրտի կիսին: Ահա աշխարհը տեսաւ, որ այսօր անհուն բարեսրտութեամբ իմ կեանքը ինձ է բաշխում և դրանով այնպիսի թանգագին դաս տալիս ինձ՝ որ մինչև օրս ոչ մէկից ոչ լըսել եմ, ոչ տեսել: Զուր չէր դուստրս դրան հաւանել ու սիրել: Կոյր աչքերս այժմ բացուեցին, ես էլ սիրեցի Խարազի տղին և կուզեմ որ դա ինձ մի շնորհ անի: Դա աղքատ է և անծնող, իսկ ես հարուստ և անզաւակ: Թող դա ինձոր դի

լինի, ես դրան սիրող հալր: Ալսպէսով կարող կըլինինք մխիթարուել մեր վշտերից: Նազերը որ լուռ լսում էր՝ մէջ եկաւ և ասեց.

— Եատ հիանալի միտք է և հեշտով իրագործելի. ապրի Խարազի տղէն, թող գայ իշխանի ձեռը համբուրի:

— Ես էլ հաւան եմ այդ մտքին, ասեց Փափագը. իշխան վեր կաց և առաջ գու համբուրիր այդ արժանաւոր երիտասարդի ճակատը,

Իշխանն ու Խարազի տղէն համբուրուեցին, խոնուած հասարակութիւնը յնծալից աղաղակներով շնորհաւորում էր նրանց բարեկամութիւնը և օրէնում թագաւորազնի արևը:

— Այ, ինչ ասեմ, հիմա ժամանակ է հանգստանալու, մեծապատիւ նազիր, գնանք ուր կուզէք, առաջարկեց Փափագը:

Դիմեցին ուղղակի իշխանի պալատը, ուր պատրաստուած էր ճոխ սեղանը: Սգաւոր իշխանուհին լսած լինելով իրողութեանց մասին, սրտատրով սպասում էր հիւրերին: Խարազի տղին իւր մօտ կանչելով քաղցր գգուանքով հանդերձի փեշը նրա գլխովը փոեց ու սկսեց կարօտ սրտով համբուրել ճակատէն, գլխէն, երեսէն:

Ողջ քաղաքի հասարակ դասակարգը խնդումի մէջ էր: Սեղանին սպասաւորում էր Խարազի տղէն, որին այդ օրը ամեն կողմից իշխանորդի էին կանչում:

Սուածին կենացը նրա համար խմեցին.

— Խարազի բարի տղայ, բարով տեսնենք քո սպակը, գուշեցին ամեն ծալրերից:

— Ոմէն, ամէն, լիաբերան վրայ բերեց իշխանը: Դեռ ձաշի վրայ շատերը իրենց մէջ խօսում, որոշում էին, թէ իշխանը ում աղջիկը կուզի իր հոգէորդուն:

Դ.

Նաշը վերջացրել, քնել, կազդուրուել էր Փափագը, պատրաստում էր ճամբար ընկնելու. «Գնանք, նազիր, ճամբառներս երկար է, եթէ ամեն տեղ այսչափ ուշանանք՝ ժամբառակին չենք կարող թագաւորի մօտ հասնել. և նա կասկածի կդալ, որ մեզ փորձանք է պատահել:

Նազիրի քէփովը չէր այդ որ ճամբար ընկնելը, ուզում էր իշխանի հետ կերուխումը շարունակել, բայց Փափագը վճռակի ասեց, որ գնալու են: Նազիրը չուզեց հակառակուել իշխանին. նա աւելի ուրախանում էր որ իր փեսէն այդպէս կտրուկ է: Առաջինն ինքը հեծաւ ձին և ուզեկիցների գլուխն անցաւ, իսկ Փափագը ձեռք դրած Խարազի տղի ուսի վրայ ընկերաբար քաջալերում էր և առաջարկում շուտով կարգուել ուրիշ աղջկայ վրայ և վիշտը մոռանալ:

— Թագաւորագն տէր, վճռական չեմ կարող խօսք տալ ամուսնանալու համար: Եթէ լինի ել՝ իշխանի ստիպմամբ պէտք է լինի, բայց իմ կողմից խոստավանում եմ, որ ես միինչարուած ու սփոփուած եմ ձեր վարմունքով, ձեր ողորմածութեամբ: Ես այնքան ամուսնանալու մասին չեմ մտածում, որքան ձեր արած լաւութեան փոխարինութեան մասին: Աստուած չանէ, որ դուք իմ օգնութեան երբ և լիցէ կարիք ունենաք: Բայց հոգուս պարտքը լինի ձեռ մեկնել ամեն կարուեալի, ամեն անկարի լանուն ձեր: Դրանից ել ինձ համար քաղցր բան չի լինի՞ւ:

Փափագը մնաո բարեւ ասեց ու Խարազի տղի ձեռք թօթուելով առաջ անցաւ դէպի քաղաքի փողոցնելը. Ժողովուրդը ցնծալից աղջակներով նրան ճանապարհ գցեց:

Բաւական տարածութիւն կտրել էին, նազիրը մօտեցաւ Փափագին.

— Տէր իմ, այսօր հրաշալի գործ կատարեցիք և ամբողջ քաղաքը միխթարեցիք, բայց մոռանում էր, որ ծնողքը

նոյն կերպ սպասում են, թէ մեր Փափագը երբ պէտք է ամուսնանալու ցանկութիւն լայտնի: Հայրդ քանի անգամ խընդրել է, որ իմանամ թէ ում վրայ է ձեր սիրաբ: Հրաւէրքների ժամանակ հօրդ պալատը անթիւ աղջիկներ են գալիս, նրանցից մինն ու մինը ընտրած կլինէք: Դուք պէտք է ինձ ասէք ձեր միտքը, որ ես էլ լայտնեմ ձեր հօրը: Աշխարհի կարգն այսպէս է:

Փափագը լսում էր ու չէր պատասխանում:

— Դեռ դրա ժամանակը չէ, նազիր, խօսքը կարճ կապեց Փափագը, գեռ առաջ գնանք, տեսնենք ինչ կալ մեր աշխարհում, ինչ չկալ: Ասեց ու ուզեկցի հետ զրոյց տալով ձին թռցրեց: Նազիրը չհամբերեց, եղնից ձայն տուեց.

— Տէր իմ, դա շատ ուրախալի է որ ձին այնպէս էք բանեցնում, կործես վրէն բառած, բայց գլխաւորը մոռանում էք, որ այդ ուզգութեամբ գնալով մեր աշխարհի սահմանից շեղում էք ու ընկնում Մեծ Սրբակ փէշերքը, որի ձորեն ու ծործոները գնացողը՝ շահ չի բերում:

— Ո՞նց թէ շահ չի բերում, հետաքրքրուեց Փափագը, այնտեղ հարամի խօ չկալ: Ֆիթէ իմ թուրս ու ձիս ինձ չեն օգնիլ այդ հարամու դէմ:

— Ո՞չ, աէր իմ, փախփախելով սկսեց նազիրը, հարամի չկայ, բայց դէ ասուած խօսք է, ես էլ լսել եմ, ասում եմ, որ լաւ չի այդ կողմ գնալը:

— Սիր ինչո՞ւ լաւ չի, պնդեց Փափագը, ինչո՞ւ ես իմացածդ ծածկում: Ձէ որ հայրս քեզ նրա համար է հետս դրել, որ հետաքրքիր տեղերի, առարկաների, մասին քո ունեցած տեղեկութիւնները չինայես:

— Հաւատացէք, տէր իմ, որ այդ կողմի մասին աւելի բան չգիտեմ. ինքս չեմ գնացել, լսել եմ որ վտանգաւոր է: Բայց թէ վտանգն ինչից է գալիս՝ ինքս չգիտեմ:

Փափագը, որ այն գլխից նազիրի վրայ լաւ աչք չունէր, կարծելով որ շատ բան գիտէ ու չի ասում վճռեց հակառա-

348 - 2004

884

(3932) 41

կուել նազիրին ու գնալ դէպի Մեծ-Սըռը, որի միայն անունն էր լսել: Խնչան էլ նազիրը սաստեց թագաւորի անունով՝ Փափագը բանի տեղ չդըեց, ուղեկցին հրամայեց իրեն հետեւել:

Քամու պէս թե առած թռչում էին ձիանը. քանի գընում տեսարաններն այնքան հրապուրիչ էին դառնում: Նազիրը շատ ետ էր մնացել: Փափագի քէֆը գալիս էր երբ իր ձին հովի պէս թռչում էր ու չէր դադրում: Սիրտն ուզեց որ մէկ էլ դէպի գէմուգէմի անտառը քշէ. և քշեց, բայց ձիու վրընջոցի ու սմբակների գրըմբոցի վրայ ի՞նչ տեսաւ իր առաջև վազելիս: Մի սիրուն չալիկ-մալիկ կիսար: Հովի պէս սրանում էր, ուսովը երբեմնապէս ետ եշում. էլի գընում, էլի ետ եշում: Փափագի սիրտը քիչ մնաց հալուի, չէր զըմըշում ուսից նետ ու աղեղ հանել: Հանէր էլ, ձեռքը ո՞նց կզօրէր խփելու: Կիսարը անտառի խորքը մտնելուն պէս աներւութացաւ: Երբ Փափագը սրաատրով դէս ու դէն ականում էր կիսարին՝ յանկարծ մի կինարմատի շողքը ընկաւ նրա աչքով ծառերի արանքում: Այնքան հրապուրիչ և սըրտագրաւ էր նրա աեսքը, որ կիսարը մոռացած պատրաստում էր ձիու գլուխը կինարմատի երեցած կողմը դարձնել, մէկ էլ յանկարծ կիսարը լոյս ընկաւ ու բոլորովին մօտից անցնելով թռաւ ձորի վերև, որ տեղից մի վճիտ առու էր քչքում:

Փափագը ճարահատած ձին կիսարի ետնից քշեց, քիչ էր մնում հասնի, մէկ էլ աչքը բաց արեց, աեսաւ կիսար չկայ, այլ ալբիւրի գլխավերւ թփերի կողքին մի աննման, լուսաթաթախ աղջիկ, կասես ամպերից կաթած, այնքան մաքուր ու սիպտակ էր շորը: Արիաջան ձին ալստեղ էլ ճիգ թափելով ուզեց ակնթարթում հասնել աղբիւրի մօտ և տիրոջ սիրտը շահել, բայց նորից կընդուռշոտրիկ կիսարը աղբիւրի միւս կողմից գուրս պրծաւ ու—տչքդ բարին տեսնի—դէպի Մեծ-Սըռը:

Փափագը նոր գլխի ընկաւ, որ հրաշագեղ աղջիւր փոխարկում գտունում է կիսարը: Էլ ձիու մէջ ոյժ չէր մնացել. խեղճ անասունը հեռցն ընկած գողում էր, սմբակներից հետ ու քրտնքում մտել էր: Բայց Փափագի սիրտը քիչ էր մնում բերանով գուրս գալի. կրակի պէս տաքացել՝ պող էր կտրուել, թէ ինչու ձեռից այնպիսի որսը գցեց: Խնքն իրան մոռացած՝ թողեց ձիու սանձը, ոտով կամեցաւ բարձրանալ. դեռ տասը քայլ չարած՝ շնչասպառ վէր ընկաւ խէճի ու զուէճի վրայ, որոնցով ծածկուած էր Մեծ-Սըռի կատարը բարձրացող կածանը:

Անցել էր ժամանակ: Ձիու հետի վրայ Փափագին եկաւ, գտաւ իր հաւատարիմ ուղեկիցը. խտելով դրեց թամքի մէջ ու հասցեց անտառի ծալըը, ուր սպասում էր նազիրը միւս ուղեկիցների հետ: Թագաւորազնը թմրտծ, ուշը կորցրածի նման ճամբար ընկաւ անձայն, անմոռնչ: Տուն հասաւ թէ չէ՝ մահիճ մտաւ:

Աշխարհը Պայտպայ թագաւորի գլխին սեացաւ, երբ տեսաւ տղի լեզուն կապուած: Գանձարանը բաց արեց, բժիշկներ հրաւիրեց աշխարհի ամեն ծալըերից: Գեղ ու գեղապետ չժողեց, մեծ ու փոքրի հարց ու փոքր արեց, հնար չեղաւ, չիմացուեց թէ նրա ցաւը ինչիցն է: Մինը պնդում էր, թէ մըսել է, մինն ասում էր, թէ վախեցել է: Փափագը ոչ ուտում էր, ոչ խմում. ամեն բանից սրտմա եղած, երեսը բարձի մէջ թաղած լալիս էր ու օրի վրայ հալ ու մաշ լինում: Բացի մօրից ոքմին չէր մօտ թողում. ջրատար մայրն էլ տեսնելով որ որդին ձեռից գնում է մտածեց տատմօրն վմաց անել: Տատմէրը մի գիտկան կնիկ էր, քաղցը լեզուով օձը բնից հանող, լեռ քարին խօսեցնող: Պալատը հասնելուն պէս չոքեց թագուհու առջեւ:

—Իմ երեսը քու ոտի տակը. ինչու համար ես կանչել: Շաւտ ասա, թէ մինուճար Փափագիդ արեը կիրես: Հարցա-

լոլս \*) ես կանչել, թէ հարցափորձ: \*\*)

—Հարցայնս, մէրա ջան, հարցափորձի ինչ սիրտ ունիմ: Փափտղս այն հալի է, որ աշխարհը գլխիս մթնել է: Յոյս քեզ եմ գցել պէտք է մի ճար անես, սրա հիւանդանալը դուռն երեսներիս լետ է արել, մեզ ողջ-ողջ կոտորուծ:

## Ե.

Փափագը դռան թեթև ճռռալուց յետոյ ոտնաձայն լըսեց: Կարծում էր թէ մայրն է, բայց երբ տեսաւ Զառի բիբելը դլխավերև կանգնած՝ սրտումը մի բան տպաց. «աշխարհիս անմեղ, անփորձ արարածները սրան են իրենց գաղտնիքը հաւատում. ինչ կլինի, կլինի, ես էլ իմ սրտինս ասեմ. եթէ հնար չլինի՝ սիրտս գոնէ կը թեթեանայ»: Ուղղակի տատմօր աչքերին նայեց ու թառամած շրթունքներով մի սալարած ժայռ արեց: Զառի բիբել տղի երեսն ի վեր ցնծալով խօսեց.

—Իմ սիրեկան թագաւոր որդի, բիբել չարըդ տանի, գլըխովդ ման տալ, քու անսիրա մայրը քեզ այս ինչ օրն է գցել:

Այս խօսքերի վրայ Փափագի սիրտը հովացաւ:

—Զառի բիբել, արի նստիր կողքիս: Մինչեւ օրս շատն է ստիպել, աղաչել, որ սրտիս ցաւն ասեմ՝ ոչովի խնդիր չեմ լսել: Բայց երեսի Աստուծոյ մտքումը ինձ ճար անելը կար, որ քեզ ուղարկել է ինձ տես:

Վրայ եկաւ, անկողնում նստեց Փափագը և ծանր ու բարակ պատմեց անտառի անցքը: «Խելքս միտքս այն կիսար

\*) Հարցնել լիայոյս լինելով մէկի շնորհը վրայ.

\*\*) Հարցնել միայն փորձելու, ևելքը չափելու վրայ.

աղջկայ եղնից է: Մէնակ լինի, թէ ընկերով՝ պէտք է գնամ գլուխս քարէքար տամ, նրան ձեռք բերեմ: Թէ ծնողքս կօս ժարուին ինձ օգնելու՝ կառողջանամ, եթէ չէ, թող գնան գլխները լաց լինին. ես մեռնելու եմ:

Զառի բիբել Փափագի սրտի գալը նկատելով խոտոր գցեց և ճակատից համբուրելով տսեց.

—Հանգիստ պահիր սիրտդ, թագաւոր, շուաքիդ մեռնիմ. խնդրիդ կատարելը իմ աչքիս վրայ, միայն քոնն այն լինի, որ ուրախ կենաս, հետզհետէ ուշի գաս:

Զառի բիբելն ուրախերես գուրս եկաւ. թագուհին նրա առաջը կտրեց. «Չնատ տսա, տանի, սիրտս մորթած հաւի պէս թրպտում է, ինչ հնար արիր, լոյս կայ թէ չէ:

Տատմէրը երկու խօսք թագուհու ականջում փսփսաց, նրա սիրտը մի թիզ եղակալացրեց.

—Ալժմ որդուդ կեանքը կախուած է քեզանից, նա մի մզմեղած պատրուգէ, քու մի խօսքը կարող է նրան վառած պահի կամ հանգնի:

Պառաւին առատօրէն վարձատրելուց յետոյ թագուհին մտաւ թագաւորի մօտ.

—Բա չես ասիլ, մեր ձեռով մեր տունը քանդել ենք:

—Ի՞նչպէս, հարցրեց թագաւորը:

—Թէ բա այսպէս այսպէս: Մենք մեր մտքումը նազիրի աղջկան ենք հարսնացու ընտրել, տղիդ ուշքը ուրիշն է խլել կիստարի կերպարանքով ու թռել Մեծ-Սըռի գլուխը: Ել զուր ժամանակ կորցնիլ հարկաւոր չի. ինչ անելու ես, արա, թէ չէ սուս մնալով մեր տունը բըիշակ է լինում:

Պահ-պայ թագաւորը փորձանքից շատ պատրաստ մարդէր. այդ լուրի վրայ տիսրեց. ճակատը կնճռեց, ունքերը կիտեց ու մտահոգ գէմքով խօսեց.

—Եթէ մեր որդին միայն աղջկայ համար է հիւանդացել՝ շատ զուր է, ամօթ նրան: Թէ խելօք տղայ է, թող

Համաձայնի նազիրի աղջիկն ուզենք. թէ չէ լսողն բնչ կը թքի, որ հարսնացուն դռանը թողած՝ սար ու ձոր ընկնենք: Մեր աշխարհի ամեն մի հովտում մի իշխան է նստում ու ամենն էլ գովական աղջկերը ունին: Մեր արարժունքը իսկի նրանց դուր կզմի, կամ իմ մահից յետոյ Փափագին բնչ աչքով մտիկ կտան:

Թագուհին թէ՝ տղէն նա է, նազիրի աղջիկ չի ուզում, ինու ուժով գլուխը չես կապելու. նազիրի ու վէղիրի պատճառով խօ որդուդ լաջ չես անելու: Ո՞վ կովի քեզ, որ անկոտումութիւնովդ մի հատիկ գաւակիցդ էլ զրկուես:

Այս սիրելի, մեղմաձայն խօսեց թագաւորը. զիցուք դու ասում ես Ծմակասարը քանդեմ. եթէ գլխից առաւել քեզ սիրելիս լինեմ, խելքդ բնչ է կտրում, կարող եմ քանդել: Քու տղի ուզածը այն աղջիկն է, որ անմիւ թագաւորներ, հազար գեեր իրաք գլխով է տուել նրանց կոռուի խնձորը դարձել Եօթ թագաւոր խօսք մին արած շատ տանջուեցին, չկարացին ձեռ գցել: Այստեղ գնացողը մի կամ երկու հոգի պէտք է լինի, և՛ քաջ և՛ իմաստուն, որ կարենալ նրանց հազար մի առաջարկները կտարի: Ինչքան լսել եմ այնտեղ գնացող ոչ մի տղայ չի յետ եկել: Ես որ խնդրում էի որդուդ, թէ Մեծ-Սըռի վրայ չգնաս՝ սրա համար էի ասում: Յամառի պէս ինձ շլսեց, գնաց ու պատուհաս բերեց գլխներիս: Հիմա ես ոնց անեմ, բնչ սրտով աչքիս առ ու սպիտակ մի որդուն հարամու բերան գցեմ, քեզ եմ հարցնում:

Թագուհին խոռվայով սրտով եղունգները կրծոտելուց յետոյ լոռութիւնն ընդհատեց.

Որդուս ցանկութիւնը պէտք է անպատճառ կտարուի: Աչքիս տակն եմ կալել՝ գանձ, հարստութիւն, ամեն ինչ զոհել, դէն ածել՝ Փափագիս խնդրուածը կտարելու համար: Մարդիկ ուղարկիր, թող աշխարհի ծալքերից քաջասիրտ իշխանազունները ժողովուեն: Միթէ նրանց մէջ գէթ մի շնոր-

հալին չի լինիլ, որ իր քաշ ոսկի ստանալ և Գըմբ-գըմբ ձորը գնայ Կիտար աղջկանը բերելու:

Թագաւորն առ ժամանակ չէր վստահանում իր համաձայնութիւնը տալու, բայց յետոյ մտածելով որ իշխանազուններից ոչով չի լանդգնիլ միայնակ գնալ Գըմբ-գըմբ ձորը, կամ իր որդուն ընկերանալ, առանց ուղեկցի էլ Փափագը ոտ ոտի առաջ չէր գնիլ, ուստի իշխանազուններին հրաւելոներ ուղարկեց ամեն կողմ, յայտնելով թէ ինչի համար է նրանց կանչում: Նազիրին էլ կանխապէս պատուիրեց, որ եկող երիտասարդների միացը թագուն թէ յալտնի պղտարի, ահ տայ, որ ոչով չյօժարուի այդ վտանգաւոր ուղւորութեանը մասնակցելու:

❖

Խարազի տղէն իր վեր ու նիստով, իր խօսք ու զրուցով իշխանի և իշխանուհու արմանքը բերել էր: Յաւում էին իրենց արած սխալի վրայ, էլ ետնից չէին հասնում: Կենում էին կենում մուրազաչոր աղջկանը ողարմի տալիս, իմաստուն ընտրութեան վրայ գլուխներն օրօրում էին ու ասում. «ախրինչն մեր անողորմ վճռով յուսահատեցրինք խեղճին, վաղաժամ գերեզման դրինք»: Այդ տխուր մտքերից ազատուելու համար ամեն օր խնդրում, աղաչում էին Խարազի տղին, մատը մի աղջկայ վրայ գնի, պսակուի: Զքաւոր ընտանիքից լինի, աւելի լաւ: Իրենց միակ ուզելիքն այն է, որ սգաւոր օրերից յետոյ խնդրութիւն տեսնեն իրենց օջտղում, աշխարհից համ առնեն հարս ու թոռան միջոցով, միւս կեանքն էլ մի միթարութիւն տանեն:

Երկար տատանուելուց յետոյ Խարազի տղէն կամք տուաւ

— Ոէ որ ալդպէս է, ասեց, թողէք գնամ, որոնեմ ձեր և իմ ուղած աղջիկը ուրիշ աշխարհներում. քաղաքի աղջիկ-

ները իմ քոլրերն են այն օրից, երբ սդացին սիրուհուս վըշտալի կորուսար. վայել չեմ համարում նրանցից ինձ հարսնացու ընարել:

— Խելօք խօսք է, հաւանութիւն տուին իշխանն ու իշխանուհին. գանձարանը բաց է, որքան կամենաս վերցրու, քանի ձիաւորով ուղում ես շրջիր: Այսուհետեւ խօսքը քոնն է, մենք լսող կատարող ենք, մեր քաղցր հոգեորդի:

— Ո՞չ ձի է պէտք, ոչ ուղեկից, ասեց Խարազի տղին: Մի քանի քսակ ոսկի վերցրեց ու ճամբու ընկաւ: Նրա անունը, համբաւը վաղուց, շատ վաղուց տարածուել էր հեռու քաղաքներում, աշխարհներում: Ծպտուած էր շրջում շատ տեղ, որ թողնեն ճամբէն հանգիստ շարունակելու, թէ չէ օրիերով պահում էին այս ու այնտեղ, պատում, պատուասիրում: Մի տեղ նրա քաջութիւնն էին պատմում, միւս տեղ խելքը, երրորդ տեղը սրտի անհուն ողորմը: Նարունակ շըրջ-շըրջելով Խարազի տղին, շատ բան տեսնելով ու փորձելով վերջապէս մի օր նստել էր մի աղբիւրի՝ կողքի, նախաճաշ էր անում: Մի սիրուն ծիս կանգնեց դէմի ծառի ճղանը, քաղցրիկ կլափը բաց արեց.

— Խարազի բարեսիրտ տղայ, քեզ մի ուրախ լուր եմ բերել, ականջդ ինձ արա, լսիր: Թագաւորի տղին մի անցք է պատահել, ցաւալի անցք: Նրան օգնելու համար կանչուած են աշխարհիս բոլոր իշխանորդիները, նրանցից ոչ ոք արիւութիւն չի ունենալու առաջարկը կատարել: Ամենքը փախչելու են, թագաւորազը հաւատարիմ ընկեր գտնելու համար պէտք է մնայ շուարած: Հասիր այնտեղ շուտով, որ նրան ողջումախպէր դառնաս ու նրա պահապան հըեշտակը լինես: Դու պէտք է հասարակ տոհմովդ շատերին նախանձելի դառնաս: Ինչպէս մինչև այժմ ոյժերդ դէպի բարին ես գործադրել, նոյն կերպով էլ շարունակիր: Բոլոր տարերքները, զօրութիւնները քեզ հետ միանալու և օգնելու են, երբ հարկաւոր լինի: Ճամբէդ Ծմակասարովն է ընկել, դեռ շատ բաներ կտեսնես:

Քաջ կաց, ես խորհուրդներս քեզնից պակսեցնելու չեմ:

Մինչև Խարազի տղին բերանը կբանար շնորհակալութիւն անելու՝ ծիտը դէպի տղին կուլ-կուլ եղաւ, դէպի վերև ծուլ-ծուլ եղաւ ու ժոռաւ:

Խարազի տղին այնպէս թուաց, թէ երազ է, որովհետեւ երազումը գրա նման երեսիթներ շատ էին սպատակել: Վերկացաւ ու գնաց: Գնալիս լանկարծ մի ճղճոց ընկաւ նրա ականջը. «այս ինչ պէտք է լինի, ընդհատեց մտմտուքը և քալերն ուղղեց դէպի զոբրոց-ճղճոցը, որ հետզհետէ սաստկանում էր: Մօտեցաւ, տեսաւ մի հորի միջից է գալիս ալդուկը: Կռացաւ բերանի ահագին խուփը դէն գցեց: Իրար ետնից սասումի պէս դուրս թափուեցին սատանէքը և քջապատեցին Խարազի տղին:

— Բարի և հուժկու հողածին, քեզ ենք պարտական մեր կետնքը և ուրախութիւնը: Դու մեզ ազատեցիր այս հօրից, ուր հարիւրաւոր տարիք փակուած ճշում, պաղատում ենք. ոչ մի շնչաւոր այնքան արիւութիւն չունեցաւ որ մեզ մօտենայ, և ոչ այնքան ոյժ, որ մեր փականքը վերցնի: Այսուհետեւ քո ծառաներն ենք. ինչպէս ուղում ես աշխատեցրու: Ահա իբրև նշան, վերցրու այս երկու մազը, ասեց սատանաներից ծերագոյնը, դժուար տեղն ընկած ժամանակ իրար քսիր, մօտդ պատրաստ ենք: Իսկ այժմ մենք զնում ենք կերակուր ճարելու:

Խարազի տղին ըոիկ շնորհակալ եղաւ, մազերը գդակի ծալը դնելով նրանց թողեց, առաջ գնաց: Նատն ու քիչը Աստուած գիտէ, տեսաւ մի զոչ, թոկով կապած, առջելը հոտած միս դրած, իսկ խոտի կապուկը հեռու մղած: Մեղքն եկաւ անասունի վրայ, որ սովածութիւնից վիզը թուլացրել, գլուխը կախել էր: Միսը սոտվ դէն գցեց, խոտը առաջ քաշեց, այնքան սպասեց, որ զոչը կշտացաւ ու լեզու եղաւ խօսեց.

— Ա՛յ տղայ, այս լաւութիւնը ոչ մի հողածին չի արել.

դրս փոխարէն քեզ մի վէզ կտամ. կարիք ժամանակ գցիր,  
մօտղ պատրուստ եմ:

Խարազի տղէն գրանը դրեց վէզը և առաջ գնաց: Տե-  
սաւ ճամբի վրայ մի պախրայ ծարաւաչոր եղած: Մօտլ մի  
լիճ կալ, վիզը մեկնում է ջուր խմելու, առաջևի թուփը  
արգելում է: Խարազի տղէն անասունին խղճալով թևերը  
վեր քաշեց և մատներով ահագին թուփը պոկեց, հարթեց:  
Պախրէն ջրից կշտացաւ ու օրհնեց.

— Ա՛յ տղայ, դու որ եօթը տարուայ ծարաւ պախրին  
ջուր տալու համար ալդքան նեղութիւն քաշեցիր, միթէ ես  
քեզ պարտական պէտք է մնամ: Ա՛ռ պողերիցս մի ճիւղ, ես  
քեզ մի օր պէտք կը գամ:

Խարազի տղէն ծտի ասած նշանները լիշելով՝ պախրի  
պողն էլ ծոցը դրեց, գնաց:

Առաջն եկաւ մի անտառ. առուն բռնած աղբիւրին մօտե-  
ցաւ ջուր խմելու. տեսաւ մի աղաւնի՝ թեսի մինը կախ, աղ-  
բիւրի կողքին վէր ընկած, տանջւում է ու չի կարողանում  
թռչել: Խարազի տղէն բռնեց, թեր խնամքով փաթաթեց:  
Աղաւնին թռաւ, նստեց ծառի ճղանն ու ասեց.

— Ի՞նչքան բարեսիրտ ես, այ տղայ. բոլոր հողեղէնները  
ձգտում են ճանկ ընկած անճարին սպանեն, իրենց զուար-  
ճութեանը ծառայեցնեն: Ինձնից էլ անճար ու լաւ խօրտիկ:  
Բայց դու գութ ունեցար, փոխանակ ինձ ոչնչացնելու, ընդ-  
հատկառակը վարուեցիր և կեանքս խնայեցիր: Քու լաւու-  
թեան փոխարէն առ այս թեր, մօտղ ունեցիր, մի օր քեզ  
պէտք կգամ:

Խարազի տղէն ջուր խմեց, ճամբէն շատ շարունակեց  
թէ քիչ՝ լայտնի չէ. միայն երբ անտառից դուրս էր եկել՝  
նկատեց որ մըջիմներն իր առջեւ զժվժում են ճամբի տուկ  
ու գլուխ լիք: Մեղքն եկաւ կոխ տալով անցկենալու, իսկա-  
կան ճամբէն թողեց, գնաց սարերի լանջերով, դժուարակոխ  
տեղերով անցաւ, ոչ մի մըջիմ չսպանեց: Մըջիմների թագա-

գաւորը եկաւ Խարազի տղի առաջը կտրեց.

— Այ տղայ, դու որ մեզ խզճալով, քեզ նեղութիւն  
առւիր, ճամբէդ սարովդ գցեցիր, մենք հաց ուտող ենք, քու  
արած լաւութիւնը հասկանում ենք: Ա՛ռ մեզանից այս եր-  
կու թերը, նեզ ընկած միջոցին փոքր մըջիմներիս միտ բեր-  
ծառայելու պատրաստ ենք:

Խարազի տղէն այս թերն էլ գդակի ծալը գնելով ա-  
ռաջ գնաց: Մշուշապատ լեռների ստորոտում երևին էր տա-  
լիս մեծ բնակութիւն. «Երանի թագաւորազնի քաղաքն այս  
լինի, ասեց Խարազի տղէն ու քայլերն ուղղեց դէպ այն  
կողմբ:

Խարազի տղին թողնենք ալդտեղ, մենք գնանք Փափա-  
գի հօր քաղաքը:

## Ե.

Թագաւորական հրաւերը ամենի ականջն էլ ընկել էր-  
անթիւ երիտասարդներ ոտով թէ ձիով տէրութեան ամեն  
կողմերից շատակել էին քաղաքը թափուել: Իւրաքանչիւրն էլ  
մտադրուել էր իւր կտրկութիւնը ցոյց տալ, Փափագին ըն-  
կերանալ, բայց պալատի դուռ հասնողը այն ահարկու և  
զարհութելի զբոցներն էր լսում նազիրից ու նրա մարդկան-  
ցից, որ սարսուռը ջանն առած լիւտ էր փախչում փութով  
իր աշխարհը: Կամ եթէ քաղաքում մնում էր, սարսափում  
էր երկրորդ անգամ պալատի կողքով անցնելու:

Այն, նազիրը իր և նարովի ահարկու պատմութիւններով  
համարեա թէ բոլոր եկող երի սիրտը կոտրեց, եկած ճամբէն  
փոշմանացընց: Վերջն էլ միամիտներից շատերին զբաւեց  
հետեւեալ խօրամանկ ձեռով: «մնացէք, մի դառնաք իսկոյն  
ձեր աշխարհը. ձեզ համար թագաւորը փառաւոր ճաշ է պատ-  
րաստել, որ վայելէք ձեր կրած նեղութեանց փոխարէն: Եթէ

Ես ձեզ համար ձեռնոտու չեմ համարում Զըմբ-զըմբ դևերի աշխարհը գնալը՝ ինչ ասել կուղի, որ թագաւորն իսկի կամք չի տալ իր մինուճար որդուն գնալու. բայց որովհետեւ որդին սատանի ձին նստել, ուզում է գնալ, առանց կշռելու իր գլխին գալիք փորձանքները՝ դրա համար մի հաւատարիմ առաջնորդ ընկեր է հարկաւոր նրան: Նրա ուզած ընկերը գժուար է գտնել հիմիկուայ հողածինների մէջ: Դըժուար է նրա համար, որ այնտեղ գնացողը գլխից ձեռք վերցրած պիտի լինի: Դատ էլ թագաւորը իր գանձարանի կէսը խօստանում է տալ ձեզնից մէկն ու մէկին: Որ Գըմբ-գըմբ ձորից ողջ-կենդան լետ չէք գալու, չէք վայելելու, ինչ օգուտ կամ ինչ մխիթարութիւն այդ գանձը: Ինքներդ լաւ էք տեսնում, որ ձեր բարիքն եմ ուզում: Ձեր քաջութիւնն այն կլինի, որ սեղանի վրայ ձեզնից որին Փափագը մօտենայ, թէ ինձ ընկերացիր, ախալէրացեղ դառ, իւրաքանչիւրդ մի պատճառ բերէք: Նա ջահէլ անփորձ տղայ է, կը տեսնի որ իրենից քաջասիրտները այն մահահոտ ձորը գնալու սիրտ չեն անում՝ ինքն էլ կհանդարտուի և գլխից կը հանի այն վտանգուոր ուղևորութիւնը: Բացի այն որ թագաւորը ձեզ բոլորիդ առատօրէն կալարգեատրի, ես էլ լիառատ կերուխումով ձեզ կպատուեմ:

Ամենքն էլ խոստացան խորագէտ նազիրի առաջարկի համեմատ շարժուել և անհամբեր սպասում էին արքայական սեղանին: Փափագն այդ բաներին տեղեկութիւն չունէր, ընդհակառակը լիայուս էր, որ իշխանազուներից շատերը պէտք է ցանկութիւն լայտնեն իրեն ընկերակցելու:

— Ինձ մի ընկեր է հարկաւոր, չգիտեմ որին թողեմ, և որին աանեմ. ցաւում եմ որ շատերի սիրտը այդպէսով պէտք է կոտրեմ: Բայց գոնէ այդ ապացոյց կլինի նախ որ իմ աշխարհում քաջ, անձնուէր հոգիք շատ կան, երկրորդն էլ որ իրենց թագաւորի որդուն չափազանց սիրելուց կեանքները մահու են տալիս:

Այս էր մտածում Փափագը իր սենեակում, որ մայրը եկաւ, լայտնեց թէ հիւրերը եկած են, սեղանը պատրաստ է:

— Մայր իմ, խօսեց Փափագը կերկերուն ձախով, սուրբ բերնովդ բարեմաղթիր գործո լաջուղուի:

— Ուրախ գնա, որդիս, գեռ լոյս ունիմ, որ այնքան լայն ճակատաւորների, պարթև հասակաւորների մէջ մի անվախը կլինի և քեզ ձեռ կմեկնի. իսկ եթէ հօրդ կառավարութեան միջոցին ժողովուրդը թէ փափուկ ապրելովը և թէ երկար տարիներ պատերազմ չտեսնելովը այնքան բթացած կլինի, այնքան ողորմելի գարձած, որ իր միջից որդուս մի ընկեր չի տալ... այն ժամանակ իմ մինուճար Փափագ ջան (մայրն աչքերը լցրեց և ձեռքը որդու ուսին դնելով) մենակ չես մնալ, մայրդ արևիդ մեռնի: Ինչպէս քեզ խտած մեծացնելով այս հոտակն եմ հասցեր, լոյս ունիմ քեզ ինձ բաշխող Աստծուց, որ ինձ ոյժ տայ, ինձ թեւ տայ քեզ շալակելու, քեզ Գըմբ-գըմբ ձորը հասցնելու:

Փափագն այս խօսքերից սիրտ առած գնաց ճաշարան: Երիտասարդները ոտի կանգնեցին. Նազիրը մէկ-մէկ ներկայացրեց թագաւորազնին. բոլորն էլ խոր գլուխ տալով իրենց տեղերը դարձան: Քիչ միջոցից լետոյ Պայ-պայ թագաւորն եկաւ, քաղցրութեամբ հրաւիրեց նստել: Ինչ ասել կուզի որ սեղանը ճոխ էր: Կերան, իմեցին, զուարթացան. միայն նազիրը չէր ուտում, նա ոտի վրայ ծառալում, գուրս ու ներս էր անում: Քաղաքափառութեան համար թագաւորը հրաւիրեց իր մօտ նստելու, բայց խորամանկ նազիրը թէ:

— Ուրախութիւնը շատ ժամանակ հացի տեղ բռնում է. այսօր իմ ամենասիրելի թագաւորազն Փափագը իւր բաղդաւորութեան հասնելու համար սեղանակիցներից ընկեր է ընտրելու: Ուրիշների հետ իմ սիրտն էլ տրոփում է, թէ արդեօք սրանցից որին պէտք է մեկնի աջը և ով է լինելու այն բաղդաւորը, որ այդ ահաւոր խորհուրդը իրագործի: Առաջինը ես պէտք է այն կտրուկ երիտասարդի ճակատը համբուրեմ: Այդ

մատճառով, տէր թագաւոր, խոստովանում եմ, որ առանց, ճաշելու կուշտ եմ. ինձ նման ծերուկին մեծ պատիւ է ձեր հզօր տէրութեան քաջ իշխանազուններին ծառայելը:

Այս տօնելով նազիրը պտտեց սեղանի գլխով պատուէրներ տալով ծառաներին տանելիք ամանների և բերելիք կերակրէնների համար. Երբեմնապէս աչքով կամ ունքի նըշանով իշխանազուններից սրա կամ նրա հետ խօսում էր, որին սաստելով, որին հաւանութիւն տալով: Վերջապէս եկաւ այն բոպէն, որ Գըմբ-գըմբ ձորը գնացողների կենացը պէտք է խմեն: Թագաւորն առաջարկեց որդուն կանգնել: Փափագը բաժակը ձեռն առաւ.

— Քաջ իշխանազուններ, խօսեց թագաւորը, ձեզ շատ լաւ լայտնի է ինչ նպատակի համար որ ժողովուել էք այստեղ: Այժմ ամենիս ցանկութիւնն է տեսնել, թէ ով է ձեզ պանից Փափագիս ընկերանում:

Սմենքն էլ գուշները կախեցին: Երկար ժամանակ ձայն չեն հանում.

— Հայր իմ, լուսութիւնն ընդհատեց Փափագը, ես կարծում եմ ամենքն էլ հաւասարապէս վճռած կլինին ինձ ուղեկցելու. բայց եթէ ոչ ոք մատ չի բարձրացնում, դրա պատճառը ամօթխածութիւնն է: Թոյլ տուէք նստող երիտասարդներից ես մէկին ընտրեմ, նրա կենացը իմի հետ վայելեցէք:

— Շատ բարի ես հրամայում, որդի, պատասխանեց թագաւորը և վախուկ ակնարկ ձըգեց նազիրի վրայ: Նազիրը գլխի շարժումով փարատեց թագաւորի յայտնած երկիւղը: Իսկ իշխանազունները խոսվածի պէս իրենց առջեն էին նայում մտահոգ դէմքով: Փափագը մօտեցաւ սրտոտ երևցող մէկին և ձեռը դըց ուսին:

— Իմ հաւատը բոլորից շատ քեզ վրայ է, խօսեց անվըստահ ձայնով, արժի քեզպէս ուաշեղին ընկեր ունենալ:

Դեռ խօսքը չէր աւարտել Փափագը, նրա հաւանած երիտասարդը վերկացաւ ու օրօրուելով այս խօսեց.

— Թագաւորն ապրած կենալ, ես բախտաւոր կհամարէի ինձ Փափագին ընկերանալու, բայց հայրս տկար է, և ընտանեկան գործերը մնացել են իմ վզիս. ցաւում եմ, որ անկարող եմ անորոշ ժամանակով տնից հեռանալ:

Փափագը մնաց տպուշ կտրուած, չէր ուզում ականջին հաւատալ, թէ լսածն ուղիղ է:

— Փոյթ չի, որդիս, ինչո՞ւ ես ախրում, ուրիշին ընտրիր, քաջերի թիւը իս մէկով չվերջացաւ:

Փափագը սրտակոտոր մօտեցաւ երկրորդին:

— Դու գուցէ կարենաս ընկերակցել:

Սա էլ թէ:

— Ծնողներս և՝ զառամած են և՝ հիւանդ. նրանց միակ յոյսը ես եմ, եթէ ոչ ուրախութեամբ կընկերակցէի քեզ թէկուզ մինչև Աստրծու պատի տակը:

— Ոչինչ, խօսեց թագաւորը, երրորդին դիմիր:

Փափագը կոները թուլացած՝ փորձեց դիմել երրորդին, չորրորդին, հինգերորդին: Սմենքն էլ մի մի հնարովի պատճառը բերին: Ոչ մինը անկեղծ չխոստովանեց, թէ անշնորհք եմ, վախկոտ եմ, չեմ կարող քեզ ընկերանալ: Փափագի շլինքը մնաց ծուռ, շուարած, բաժակը ձեռին: Թագաւորը լուռէր, իսկ նազիրը սրտուծ ուրախացած՝ ծառաներին զանազան պատուէրներ տալու համար դէս ու դէն էր ընկնում: Երբ Փափագը չգիտէր ինչ անի ամօթահար եղած՝ թագաւորն այս ասեց.

— Սմենասիրելի որդիս, այս էլ մեր աշխարհի իշխանազունները, որոնց քո սիրոյ համար ժողովեցի այստեղ: Մասսամբ ինքս էլ տխուը եմ, որ չաշողուեց քեզ ընկեր գտնել սրանց միջից. բայց երեկ Աստրծու մատը խառն է, որ այդպէս է լինում: Մինչ այս վայրկեան քո բոլոր խնդրածները ես կատարել եմ, այժմ մի բան ես եմ խնդրում իրեւ ծնող: Հեռու աշխարհ գնալը ինչպէս երեսում է այլ ևս զլուխ չի պատճառով: Բայց փոյթ չէ, հարսնացու ճամենակութեանդ պատճառով:

ըելը գիւրին է մեր քաղաքում. այս պատուական իշխանագուններն էլ կլինին քո թանգագին մակառները. Մեր տչքի առջև պատկենք, անցնի գնաբ. Ի՞նչ կամէք որան, ծերունի նազիր, այ խելօք երիտասարդներ:

— Այդպէս լաւ է, հիանալի է, հաւանութիւնն տուին ամեն կողմից:

Փափագը առանց ձախն հանելու կամ որ և է շարժումով հօրը պատասխանելու՝ դուրս եկաւ բազմականների միջից, սրտի լուզմունքը ծածկելու համար պարտէզն իջաւ: Դեռ նոր էր նստել այլայլուած դէմքով մի ծառի տակ՝ ահա լսում է մի ծլվոց.

— Փափագ, քաջ կաց, մի վհատիլ: Դէն թող դասն մըտածմունքներդ, վեր կաց զուարիթ դիմաւորիլ Խարազի տղին — ահա գալիս է:

Փափագը ուրախ վեր թռաւ, որ աւետաբեր ծտին տեսնի և իւր անհուն ուրախութիւնը յայտնի, մի քանի քայլ չփոխած՝ թուչունի տեղ մօքը հանդիպեց, որ կարմրած աչքերով թփերի քամակից դուրս եկաւ ու որդու վզով փարուելով ասեց.

— Իմ քաղցը մինուճար ջան. անշնորհք իշխանագունների վարմունքը սիրսո շատ խոր խոցեց. պարտէզ շտապեցի որ արտասուքներս ոչով չտեսնի: Զօրեղ երկցող երիտասարդների թուլութիւնը աեսնելով այժմ ես վճռում էի կամ թոյլ տեղովս քեզ ընկերակցել կամ գալ ոտներդ ընկնել, որ ինձ խղճաս, հեռու աշխարհ գնալու մաքից ետ կենաս: Բայց պարզ տեսնում եմ որ քո ցանկացած գործի մէջ Աստրծու կարող մատը խառն է, որը ծախ կերպարանքով իւր հրեշտակին ուղարկեց քեզ միտիթարելու: Ել ըուիէ մի կորցնիլ: Գնա և այդ ընտրեալ մարդուն պալատ հրաւիրեր:

Դնաց Փափագը Խարազի աղին դիմաւորելու. իսկ թագուհին որ պալատ մտու՝ թագաւորը տիսուր դէմք առած՝ Թագուհի, ասաց, թէպէտ շատ անհաճոյ թուաց ինձ

Հետ և մեր պատուական նազիրին, որ Փափագի ուղեորութիւնը չաջողուեց ընկեր չգտնուելու պատճառով, բայց դուաւելի ուրախ պէտք է լինիս, որ պատրաստուում ենք որդուդ մեր քաղաքում պսակելու իշխանագունների ներկայութեամբ:

— Եթէ որդիս ուզենար պսակուել մեր քաղաքում, աղջիկ էլ կճարեինք, արժանաւոր մակառներ էլ բայց Փափագը չի յօժարուիլ ալժմէն պսակուելու, քանի որ մտագրուած ճամբէն պէտք է գնալ անպատճառ:

— Անպատճառ ինչպէս պէտք է գնայ, քանի որ այս փառաւոր երիտասարդներից ոչով չհամաձայնեց նրան ընկերակցել, վրայ պրծած հարցրեց թագաւորը, իսկ ես միայնակ չեմ թողնիլ քաղաքէց ոտ դուրս դնի:

— Իմ որդին այլ ևս կարիք չունի այդպիսի ալճնասէր իշխանագունների, որոնց կերած հացն էլ ափսոս է, եթէ առանց երես պահելու խօսենք. իսկ Փափագը կըգնալ, որովհետև ընկեր ունի և այն էլ ընտրեալ ընկեր:

— Ի՞նչպէս թէ ընտրեալ ընկեր, զարմանքով հարցրեց թագաւորը նայելով նազիրին:

— Սուտ բան է, տէր թագաւոր, վրայ բերեց նազիրը:

— Սուտ ոչինչ չկայ, աշխարհիս ստախաբները գուք էք, բարձրածայն գոչեց Փափագը, երևալով դառն շէմքում, կուռը մի վիթխարի երիտասարդի վզովը ցցած: Հէնց որ իշխանագունները նկատեցին՝ «Խարազի տղէն է. անիրաւը ո՛լուելից բսաւ, կարծես ականջն ի վէր կանչած լինին», փսփսցին իրար մէջ և ահ ու գողով մէկ նազիրին նայեցին, մէկ թագաւորին: Դեռ ամենքն էլ անակնկալ դէպէրի վրայ ապշած, լուռած էին, Փափագը ցնծագին խօսեց.

— Թագաւորն ապրած կենալ, մինչև հիմա պատճառ էիր ըերում, թէ ընկեր չունիս, չես կարող Գլ՞մբ-Գլ՞մբ ձորը գնալ, այժմ ինչ արգելք կայ, ինչ պէտք է ասես:

Հայրը մնացել էր պապանձուած, կարծես սրտում կռիւ մղելիս մի ինչ որ զգացմունքի հետ:

— Հայր իմ, այդքան լոելուց յետոյ անշուշտ մի հանգամանք ես առաջ բերելու որ խափանես. բայց լաւ իմանաս, որ հաստատ վճռել եմ ամեն փառքից ձեռ քաշել, ամեն պատուից զրկուել ու գնալ: Կամ կմեռնեմ, կամ ողջ յետ կդառնամ: Եւ հէնյ այսօր պէտք է պատրաստուեմ ճամբալնկնելու:

— Ետք էլ լու կանես, որդի, խօսքին ոյժ տուեց թագուհին, այսքան ձայն ի վեր չպէտք է լիներ քո գնալը, բայց երբ ամեն տեղ հռչակուեց, հարիւր կապ ու կշկուսի դեմ ընկաւ նրանցից յետը անկատար թողելը ամօթ է: Թէպէտ ծանր է մի մօր համար իր մինուճարից զրկուելը, բայց առաջինը ես եմ ասում որ քեզ պէս երիտասարդին ամօթ է արգելքներից վհատուել, ընկճուելը: Առաջ արի, իմ որդուս ապաւէն, քու անունն ու համբաւը շատին զարհութեցրել, շատին էլ արմացրել են. իսկ ինձ պէտք է ուրախացնի: Իմ որդուն քեզ եմ պահ տալիս, քեզ էլ Աստրծուն: Արի, Փափակ, ախպէրացեղութեան նշանը վեր գրէք:

Երկու երիտասարդները աջ թերթերունքից մի մի մազ պոկեցին տուին թագուհուն: Թագուհին էլ իր ծամից մի մազ պոկեց. երեքը միասին կոլուեց ու ասեց.

— Այսօրուանցից ես մէկի տեղ երկու որդի ունիմ, որոնք մէկ մէկու պէտք է սիրեն, ոնց որ իրենց անձը: Այս մազերը իմ ձեռով թագում եմ հողի տակ. երկուսիցդ որը դաւաճանի այս սուրբ ուխտին ու բարեկամութեանը խէթ նայի՝ ոչ արժանի լինի հող մտնելու, մազերից երկուսը տէդ դառնան սրտումը ցցուին, իսկ միւսը պատան դառնայ և խեղդամահ անի ուխտադրութին: Քեզ որդի, Փափակ անուանեցինք, որովհետև մեր փափագածը աշխարհիս վրայ մի տղայ գաւակ էր, այժմ չդիմադրելով քո բուռն ցանկութեան՝ թողում եմ քեզ հեռանալու մայրական գրկից գուցէ անդարձ կերպով: Բայց տեսնելով որ քո ուղերութեան մէջ խառն է Աստրծու ամենակարող մատը, որ նա է ուղարկել այս անձ.

Նուէր երիտասարդին հասարակ ժողովրդի միջից՝ ուստի անուանում եմ սրան Ապաւէն: միայն սրա անձնութրութեանն ու իմաստութեանն եմ ապաւինում, որ քեզ հոգեհարազատ քնկեր դառնալով, ողջ կտանի և ողջ կաշխատի վերադարձնել: Ես հաւատացած եմ, որ Ապաւէնը ոչ մի ջանք չի խնայելու իւր անունն ու հռչակը պայծառ և անարատ պահելու, դու ևս աշխատիր վեհանձն լինել բոլոր գործառութեանցդ մէջ և պարզ պահել ծնողիդ երեսը, որը քեզ աչքի լուսի պէս սիրելով, հարկաւոր աեղը չի խնայել իւր լանդիմանախառն խրատները:

— Խօսք եմ տալիս, մայրիկ, անդաւաճան ընկեր լինել, անպայման հնագանդել Ապաւէնի ամեն մի խորհրդին, ամեն մի պատուէրին, հաստատ գիտենալով որ նա երբէք իմ վատը չի կամենալ: Իբրև գրաւական ահա համբուրւում եմ և ողջում ախպէրութեան սրբազնն ուխտը կնքում:

Մինչ սրանք գրկախառնուած հոմբուրում էին մէկ մէկու թագուհին էլ մօտեցաւ, սկսեց մալրական գորովով նայել մէկ սրան՝ մէկ նրան և առանց ձայն հանելու համբուրել երկուսի ճակատիցն էլ: Ուզենար էլ, չէր կարող մի խօսք հանել բերանցից. մինչև կոկորդը զբնած էր:

Խարազի տղէն, որին այսուհետև Ապաւէն պէտք է կանչենք, կարծես երկինք էր վերացել ուրախութիւնից. իր սըրտում անսաւելի ուրախանում էր, որ իր ընկերակցութիւնը ալսքան թանգ է գնահատում:

Ապաւէնի լով ընկնելով նազիրի սրտին մահացու նետ գիպաւ: Արդէն նա իւր մէջ Փափագին փեռայ էր որոշել պլծել: Այդ յուսով էլ աղջիկը սպահում էր: Տեսնելով իր մտքի հիմնովին խռոտակութիւնը, Ապաւէնի վրայ ալնպէս թըրթուած, կըզնուած էր երեսում, որ կասես մաղձն ունքերից կաթում էր: Միայն ինչ կանես, որ խորամանգ նազիրը դեռ յովս ունէր, թէ ինքը անպատճառ կյալթի, Ապաւէնի միտքն էլ կպղառի: Ծեր աղստէսն իր հաշւում սխալուեց: Ապաւէ-

նը վաղուց նազիրի ճակատի վրայ կարդացել էր նրա սրտի  
միջինը, կերպիցն էլ հասկացել էր, թէ ինչ օձն է, աշխա-  
տում էր նրա թօռը ընկնել:

Թագաւորը մի անգամ էլ փորձ փորձեց խափանելու  
Գըմբ-Գըմբ ձորը գնալը, բայց տեսնելով որ տղէն հակա-  
ռակի ձին նստել է, վէր չի գալիս, թագուհին էլ միւս կող-  
մից է բորբոքում և իր խորհրդին ընդդէմ գնում՝ ակամայ  
յօժարուեց,

— Թող գնա՞ր: Խը աչքը դուրս կդայ, ուրիշն վնաս չի  
լինիլ:

Ճամպի պաշարը արդէն կապած էր: Թագաւորն ու թա-  
գուհի լալ աչքով ճամբու դրին Փափագին Ապաւէնի հետ:  
Ժողովուրդը խունուած սպասում էր հրապարակի ծալրում.

— Բարով գնաք, բարով գաք, աղաղակիցին ամեն կող-  
մից և գդակները թափահարում էին օդում երկար ժամա-  
նակ, մինչև ողջումախպէրները աչքից ծածկուեցին:

Նազիրը կամենում էր ուղեկցել մինչև Մեծ-Սըռի տակ  
այն նպատակով, որ կարողանալ Ապաւէնին գլխից հանել,  
ճամբակիսից յետ բերել քաղաք, բայց սա հէնց պալատի դը-  
ռանը բացէ ի բաց մերժեց ասելով.

— Աստընու վրայ յոլս գնողները կողմնակի մարդկանց  
օգնութեան կարօտ չեն: Ձեր գալը զուր է:

Ժողովրդի մէջ շատ ցաւողներ եղան, թէ իրենց բարե-  
սիրտ թագաւորազը անդարձ կորաւ, թագաւորական գահը  
թափուր է մնալու ծերունի թագաւորի մահից լետով: Իսկ  
թագուհին միանդամայն լիայուս էր, որ որդին վաղ թէ ուշ  
գառնալու է: Այդ յուսով միխթարւում և միխթարւում էր  
մերձաւոր բարեկամներին:

L.

Երկու ողջումախպէրները բռնեցին այն ճանրէն, որ  
տանում էր Զըմբ-զըմբ դևերի աշխարհը: Կանաչ տափաս-  
տանների, սաւն ալբիւրների, անտակ ձորերի վրալից անցնե-  
լով դէմ առան մի սրուի, որ ոչ ոտն էր բըռնում, ոչ եղունգ,  
այնպէս էր լոսուած ինչպէս սատանի երես: Մատնահան ու  
ձեռնահան լինելով Մեծ-Սըռը բարձրացան, որի ետեր դևե-  
րի աշխարհն էր: Առանց ժամակորոյս լինելու Ապաւէնը գա-  
գաթին մարդաչափ հոր կտրեց և ասեց.

— Անգին Փափագ, հարկաւոր է նախ գնալ այս նոր աշ-  
խարհի տեղադրութեան ու բնակիչների հետ ծանօթանալ,  
վտանգները կշռել, ապա թէ գործ սկսել: Այստեղ մարդակեր  
գագաններ շատ կլինին, ապահով մնալու համար պէտք է  
մտնես այս հորը և սպասես մինչև իմ գալը:

Փափագը յօժարուեց: Ապաւէնը հորի բերանը տափակ  
քերծով ծածկեց, կողքից տեղ թողեց օդ մտնելու համար:

— Հը, ինձանից քեզ խրատ. բան է, եթէ տափը ժաժ  
գալ, չինիմ, չիմանամ վախենատ:

Այս ասելով հեռացաւ Ապաւէնը ու իջնելով սըռից՝ մը-  
տաւ հաստարմատ ծառերի ծմակը: Կածանը երկու բաժա-  
նուելիս չիմացաւ սկզբից որով գնայ: Աջ կողմից ականջով  
դորոց, խօսխօսոց ընկաւ, այդ կածանը բռնեց, գնաց: Ա-  
ռաջեւը բացուեց մի կալատեղ—բոլորիշուրջ նստած են եօթն  
անտառիներ, իրենց կերպարանքով մամուակալած կաղնինե-  
րից չեն զանազանւում: Ուզէր չուզէր պէտք է մօտենար,  
որովհետեւ աչքներովն էր ընկել: Սրանց թափ տալու հա-  
մար՝ գնաց առաջները տնկուեց: Քերծաչափ շնչաւորները սը-  
րան աներեւովթ հոգու տեղ դրին ու երկիւղի մէջ պաշարուե-  
ցին: Ի՞նչ կերեակային, որ մի ադամորդի երեսում այնքան  
փուշ ունենայ, որ սիրտ անի Զըմբ-Զըմբ դևերին երեայ

ու տեղն ու տեղը չալուի: Դեերից ծերը հենց ուղեց տեղից շարժուել.

— Զլինիմ, չտեսնիմ մինը վերկենայ, ծղըտաց Ապաւէնը այնպէս ահարկու, որ բոլորի լերդ ու թոքը ջուր կտրուեցւ Ովքեր էք, ինչ սրտի տէր էք, որ անտառը խարոյկ շնել կրակում էք: Ո՞վ է ձեզ իրաւունք տուել:

— Մենք Գըմբ-Գըմբ ձորի տէրերն ենք, պատասխանեց կաղ գել, իսկ գուլ, գլխապտառ աղամորդի, ով ես, որ մեղնից իրաւունք ես հարցնում:

— Ես, ես, չես տեսնում, բարձրաձայնեց Ապաւէնն ու գմբուզը օդում թափ տուեց.

— Ես տեսնում եմ որ դու գլխապտառի մինն ես ու եկել ես կամ ծեծուելու կամ գլուխդ այս ծառերից մէկի տակ թողելու, պատասխանեց Շիլ դևը:

— Ի՞նչ ի՞նչ, գեռ համարձակում էլ ես, վրայ պըծաւ Ապաւէնը կաղ ու շել դեերին մի մի գմբուզ հասցնելով իրար վզով գցեց: Զեռքը արճընի ակս ծանր էր, պողւատի պէս ամուր.

— Հաստագլուխ կաղնիք, հենց իմանանք ձեր աշխարհումն եմ, միթէ հիւրին այսպէս կընդունեն, այսպէս կըպատուեն, խրոխտաց Ապաւէնը: Կրակի վրայ եօթն ունկնանի պղինձը դրած զլլում էր, անչափ շփոթուելուց մոռացել էին կերակը եփը.

— Թուք որ ալդքան մեծաբերան էք, անուններդ էլ դւ էք դրել, ապա կրակի վրայից մի ձեռով վերցրէք ալդպղինձը ու ինտոյ հարցրէք իմ ովլ լինելը:

— Դրան գեի պղինձ կասեն, այ մեծախօս աղամորդի, ոնց կլինի մէնակ վեր քաշել, այն էլ կրակի վրայից. չէ որ մէջը լիսուն բախրա, վաթսուն կխտար կայ, ձեր աշխարհի պղնձները չիմանաս որ մի հաւով լցուում է: — Բայց էլի փորձեցք վերցնելու, որա լեզուի տակ չմնաք, ասեց մեծ դել միւսներին:

Հերթով տեղներից վեր կացան, փորձեցին մէկով, փորձեցին երկով, փորձեցին երեքով, չեղաւ:

— Ոնց տեսնում եմ, տնազով խօսեց Ապաւէնը, վերջը եօթ հոգով պէտք է վերցնէք, որովհետև եօթն ունկն ունի: — Ա՛հ ձեր կազմուածքին ու ձեր կերակին ի՞նչ ասեմ. այս խօսքում վրայ վազեց գեերին հեռացրեց. ձեռը մեկնեց, խըտիը կալաւ պղինձը. որ դրըմբալէ վէր չգրէց, տափը հետը հետին ժամ եկաւ: Դեերը մնացին արժացած, ծմրանները կտրած. էլ միսները կերել էին, որ առաջին ծպան ունի լինելը հարցնեն: Սկսեցին լետ-լետ քաշուել, ու ակնածութեամբ նայել վրան:

— Ա՛խ, ի՞նչ բաղդասոր կլինէի՞նք, որ սա մեր վեսէն լինէր, ասում էին մտքներում:

— Ես ուզում էի Զըմբ-զըմբ գեերին տեսնել. նրանց կացարանը որ կողմն է, հարցրեց Ապաւէնը վստահութեամբ:

— Մենք ենք ձեր ասած գեերը, վախով ու ամօթով պատասխանեցին նրան:

— Դուք էք, հիասթափուած հարցրեց Ապաւէնը, միթէ:

— Այս, մենք ենք, նուաստացած առաջ եկաւ աւագդել, ի՞նչ կլինէր ձեր ծառաների մօս շնորհ բերէք:

— Ի՞նչ կայ որ, ձեզ տեսնելուն տեսայ:

— Բարեհաճէիք հիւր գալ մեր կացարանը, մեր ապարանը:

— Յետոյ՝ ձեր կողմ եկածներին, ասում են, կենդան չէք թողում:

— Զեզպէսների համար չի ասուած: Մենք աւանդական սովորութիւն ունինք քաջերին պատուել և նեղ ընկած տեղը խնայել. իսկ եթէ քաջութեան հետ շնորհ, խելացիութիւն էլ ունենայ՝ նա կլինի մեր որոնածը, որին կլանձնենք Գըմբ-Գըմբ ձորի ամենաթանգագին ընծան:

— Ի՞նչ է այդ ընծան, միամտաբար հարցրեց Ապաւէնը:

— Ոլոր ընծան, շարունակեց առաջ գել, այն էակներից

մինն է, որ իբրև հազուագիւտ մարդարիտ՝ աշխարհների կը-  
ռուածաղիկն է, որի պատճառով շատ թագեր ու գահեր են  
կործանուել: Նատ ուժեղներ եկել են այդ մարդարիտը, որ  
մեր քոլըն է, տանելու, բայց պայմանները կատարելու մէջ  
անկարող լինելով, որոնք կոտորուել են, որոնք կապկապուել:

—Ի՞նչ են ձեր պայմանները:

—Այդ կիմացուի միայն իւր կատարման տեղը: Ձեր բաղ-  
դից օրերումս մի երիտասարդ է գալու, որին երազում մեր  
քոյրը տեսել է. կարող էք նրա հետ մասնակցել մրցահան-  
դէսին:

—Ուրեմն ես շուտ եմ եկել, կգնամ ու դարձեալ յետ  
կդամ ձեզ այն երիտասարդի հետ:

—Մեր գլխի վրայ տեղ ունիք, հրամալեցէք երբ կա-  
մենաք:

Դեերի ուզածն էր որ շուտ ազատուեն այդ սոսկալի  
մարդու ներկալութիւնից, շուտ իրենց բնակարանը հասնեն  
ու քրոջը մանրումաս հարցնեն, թէ իւր տեսած երիտասարդը  
ի՞նչ հանգի, ի՞նչ կերպի էր:

Իսկ Սպաւէնը դեերին թողելուց յետոյ շտապեց ծմակն  
ի վեր նապաստակի արագութեամբ հասաւ ողջումախապօրը,  
փակը դէն շարտելով հարցրեց:

—Արա Փափագ, ո՞նց ես, դուրս արի տեսնեմ:

— Լաւ եմ, Սպաւէն ջան, բայց շատ սպասել տուիր, մի-  
այն ուշանալդ ու գէօրա տղայ ես, թէ աղջիկ:

—Ես տղայ եմ, այն էլ տղամարդ տղայ, բայց այն ա-  
սա, ի՞նչո՞ւ է քիթդ արիւնլուիկ:

Փափագը մատներով քիթը շինելով պատասխանեց.

—Ոչինչ, երևի փուշ չանգուած կլինի:

Բայց ճիշտն այս էր, որ Սպաւէնի գնալուց յետոյ Փա-  
փագը մտածմունքի անձնատուր լինելով նղղել քնել էր:  
Երբ Սպաւէնը պղինձը վեր դրեց, չէ որ տափը ժամ եկաւ,

Փափագն էլ այդ միջոցին սաստիկ ցնցուեց, քիթը հորի պա-  
տին դիպաւ:

Սպաւէնը գիտէր այս. ուստի ժպտալով ասեց.

—Գնանք, մատաղ, գնանք, նեղ տեղը սրանից յետոյ է.  
Քը մը-գը-մը ձորը մեզպէս շատերն են եկել, բայց գլխակեր  
դեերի ճանկից ոչով իր տուն շահ չի տարել: Յուսդ դիր  
Աստըծու, լետոյ ընկերիդ վրայ և դու ուզածիդ կհասնես.  
մէ վախենալ:

Համբուրուեցին ու սկսան իջնել ձորը: Ամեն մի ոտ  
փոխելիս տափը գըմբքըմբում էր և հեռու, շատ հեռու տա-  
րածւում ոտնաձալները, իսկ ամենահաստրակ շըբխոց կամ  
հազոց այնպիսի աղմուկի էր փոխում, որ ձորը դըմդըմբում,  
գըմբքըմբում էր ու անտառի անլեզու բնակիչներին ոտի  
հանում, խրտնացնում, սարսափահար անում: Սպաւէնը ու-  
րախ էր, խօսում էր շարունակ. իսկ Փափագը լուռ, մտա-  
հոգ հետեւում էր:

Ճամբին ի՞նչ զարհուրելի տեսարաններ ասես, որ չկալին,  
ով ասես որ չէր եկել այդ արիւնկեր ձորը: Անժիւ գանգեր  
ցցուած էին քերծերի լանջերին, երևի նշանաւոր քաջերի  
էին պատկանում, ինչպէս մատը թողած նշաններից երևում  
էր: Ի՞նչքան զարհուրելի էր արիւնկոտով այդ ձորը, նոյն-  
քան հրաշալի էր բուսականութեամբ ու գեղեցիկ վալրերով:  
Սարալանջերն ու բլուրները՝ անցնողի երեսին ցնծին էին  
տալիս ու դրախտակին քաղցրութիւնով նրա սրտի թախիծը  
փարատում: Ծմակները խօ իրենց խորութեամբ, վեհութեամբ  
և ամպաթաթախ կատարներով մարդու վրայ և՛ հիացք, և՛  
աշ և բերկրանք էին ազգում:

Ողջումախպէրները հասան դեերի բնակարանին, որ  
բաղկացած էր շատ շինութիւններից. նրանց հարստութիւնը  
ամբարուած էր անմատչելի պնդոցների մէջ, որ կողքէ կողք  
փորուած էին քերծի լանջերում: Դեերը աւանդական հիւ-  
րասիրութեամբ քաղցր ընդունեցին եկուորներին փառաւոր

օթևաններում և հետևեալ օրը դիմեցին հետևեալ հարցով.

— Թուք անշուշտ յալտնի նպատակի համար եկել էք ձեր բաղդը փորձելու, այսպէս չէ: Բայց որովհետեւ հերթով են կատարուելու պայմանները, արդեօք ձեզանից ո՞ն առաջ կուզի փորձել իւր բաղդը: Եթէ մեզ մնար՝ ճշմարիտ ասած, մեր քոյրը ձեզանից մէկն ու մէկին կտայինք, անհամար երիտասարդների մեզք ընկնելուց լոգնել ենք: Բայց նախնեաց պայմանները քանդել անկարող ենք:

Նոյն բանը աւագ դեկի հետ կրկնեցին ծպուտ, Քաջքոտ, Մաղձոտ, Արնոտ դեերը, որոնց խօսելու ժամանակ կացարանը զըմբզըմբում էր: Դրա պատճտով ուրիշ աշխարհներում այս դեերին ասում էին Զըմբ-զըմբ դեեր:

Փափագը պատկերով քնքոյշ էր, տարիքով մատաղ, որա վրայ դեերի ատամը մազ էր մանում, բայց Ապաւէնի երեսի փուշը, աչքերի հուրը տեսնելիս, մանաւանդ որ ձեռի խաշուն խմել էին, ահ քաշելով՝ իրենց քաղցրութիւնը դրին ու կրկին այս առաջարկն արին.

— Եկեք մեզ լսեցէք, հրապարակ միք մտնիլ, մեզք էք, պայմանները դժուար բաներ են. թէպէտ մեր ձորը եկողը կենդան չի վերադարձել, բայց ձեզ կինայենք ու ընծաներով ճամբու կդնենք:

Այս ասմունքի վրայ Ապաւէնը վիրաւորուած խօսեց.

— Ի՞նչ են ձեր պայմանները, առաջարկեցէք տեսնենք. ուժի բան է, թէ խելքի:

— Եւ այն եւ այն:

— Նրանից էլ կայ, նրանից էլ, զուր մեզք միք դալ, ասացէք. երկուվ կկատարենք ձեր պայմանները. եթէ անկարող կլինենք, թող երկոխ մահը միատեղ լինի, այսպէս է մեր ուխտը: Համաձայն էք, հարցը Ապաւէնը:

— Համաձայն ենք, երկուվ կատարեցէք: Եթէ աշնորհք դուրս կգաք՝ մեր կամքից կախուած կլինի, որիդ կուզենք, կսպանենք, ասացին դեերը:

— Մենք էլ եթէ բոլոր պայմանները լրիւ կկատարենք, որը կուզենք՝ ձեր քրոջը կվերցնենք, դուք իրաւունք չունիք խառնուելու, պատասխանեց Ապաւէնը:

— Լաւ, դրան էլ համաձայն ենք, ասեց Աւագ դեն ու դէպ քերծը կանչեց.

— Հատրամ:

Այս խօսքի վրայ մի խոյ դուրս պրծաւ, կեռ ու ոլոր պոզերով, քաջքոտ աչքերով:

— Եթէ մի խոյ կըերէք, որ սրան յաղթի՛ մեր քոյրը ձերն է:

— Շատ բարի, պատասխանեց Ապաւէնը. Փափուկի ականջում փափսաց ու հեռացաւ թաքուն տեղ: Իր մօտ զըտնուած խոյի վէգը բերանը գցեց ու կեռ ու մեռ պոզերով, շէխ-շէխ անելով Փափագի կողքին լոյս ընկաւ. վագեց Հատրատի ճակատի մէջտեղին խփեց պարան գցեց ու անլարտացաւ որ կերպը փոխէ:

— Հետևեալ օրը հարցըեց.

— Ել ինչ պայման ունիք, ասացէք:

Ապաւէնը շատ լաւ գիտէր, որ Հատրատ խոյը կաղ դեն էր, միայն կերպը փոխած, այժմ էլ միւսները պէտք է իրենց հնարները գործ դնեն:

— Եթէ այսպէս եղջերու կըերէք, որ մեր եղջերուին յաղթի՛ ձեր տարածն է:

— Արդ էլ լաւ, առաց Ապաւէնը: Արա Փափագ, սարերը եղջերուներով լիքն են, սպասիր գնամ մէկը զրկեմ, կըռուացըրն:

Այս ասելով պախրի նշանը թաքուն բերանը գցեց ու պոզերը սազի պէս կանգնացրած վազեց Փափագի մօտ: Դեւերի եղջերուն սրան տեսնելուն պէս ջանը դող գցեց, վախից պնուկ արաւ: Այն ինչ Փափագինն էր, ուրախ վշլի տուեց հանդը և կերպը փոխեց:

Ապաւէնը գիտէր որ դեերի քոյրը երեռող շինութիւն-

Ներից մէկում պէտք է լինի, միայն հաստատ չէր իմանում  
որի մէջ: Գդակի ծալից հանեց աղունակի թւը. լուսին  
նշանց տալուն պէս ինքը դարձաւ աղունակ: Թռաւ այս շի-  
նութիւնը, թռաւ միւսը, այս կողմ ականեց, այն կողմը նա-  
յեց, չկար ու չկար: Վերջը նկատեց տեսաւ մի բարձրաբերձ  
շինութիւն կայ տնկուած սարի քամակին, թռաւ որ այնտեղ  
հանգստանալ մինչև լոյս բացուելը: Հանդէպի լուսամուտի  
վրայ թառ եղաւ և զարմանքն իրեն կալաւ: Երկու սպա-  
սուհիք գոների մզակում քնուած, ներսը սեղանի վրայ աշ-  
խարհիս ամեն տեսակ կերակուրներ շարուած, գևերի քոյլն  
էլ մի շաղաթաթախ, լուսաթաթախ աղջիկ հանդիսու, իսա-  
ղաղ քուն մտած: Երկու վառ աշտանակներ, մինը գլխավերեւ,  
միւսը ոտի տակին: Մտաւ թէ չէ՝ թւը բերանից հանեց, իր  
կերպն առաւ. բայց մի թոյլ արարածի մօտ քաջ և սրտոտ  
տեղովը մնաց կարկամած: Դեռ հաստատ չէր իմանում, սա  
գևերի քոյլն է, թէ ուրիշ աղջիկ է: Ահոելի գևերից ու ա-  
մեհի գաղաններից իր կեանքումն այնքան չէր քաշուել, որ-  
քան ալժմ, որ ցուրտ ջրի մէջ ընկած մարդու պէս զընդը-  
զընդը էր անում: Զէ, տեսաւ որ սոված փորով շատ պէտք  
է դողդողայ: նստեց կերակուրները մին մին ճաշակեց: Լու-  
սադէմին աղջկանը անթարթ աչքով երկար նալելուց յետով,  
հազիւ կարողացաւ ալնքան մօտենալ, որ աշտանակները փո-  
խութեց ու աղունակ դառնալով թռաւ: Այն ժամանակ հա-  
սաւ, որ Փափագին գցել են բրդով լիքը մի շտեմարան.  
պէտք է մի գիշերում բոլոր բուրդը գցի, մանի, ներկի, կար-  
պետ ու գորգեր գործի: Թէ կատարեց, լաւ, թէ անկարող  
եղաւ, պէտք է շլինքը տան: Փափագը կծիկը կոտրած պա-  
ռաւի պէս մնացել էր մտքամոլոր կանգնած: Ապաւէնն ու-  
րախ ողջունեց ու շտեմարանի մի անկիւնը քաշուեց: Փա-  
փագը մին էլ այն տեսաւ՝ թմփթմփալէ չալտըպուրիկ ոք-  
միններ ներս թափուեցին, շարուեցին երկար ու մէկ. բուր-  
դը վեր ածեցին: Որը գգեց, որը մանեց, որը թել ներկեց,

որը գործեց: Որձակը մէկ բերան չկանչած, աւարտեցին գոր-  
ծուածքը, գարսեցին ու աներեւութացան:

Սուաւոտը կազիկ գնը եկաւ տեսնելու, թէ տղէն ինչ  
տեղն է չարչարում, բայց աչքի տեսածը երազ կարծելով  
մնաց պելացած: Փափագն ու Ապաւէնը գդակները գլխա-  
տակերը դրած քնել էին: Կազիկը զարմանքից ծնկներին խը-  
ֆելով եզբարների մօտ հասաւ.

— Օրհնուին այն հողն ու ջուրը, որ այսպէս քաջ ու  
շնորհալի ծնունդներ ունին: Բա չէք ասիլ, ամեն բան վեր-  
ջացրել են ու անուշ քուն մտել:

Ամենքը զարմացան:

— Արժանի է մեր քոյլը այդ տղերանց, եթէ միւս պայ-  
մաններն էլ կատարեն:

Ապաւէնն եկաւ խնդրեց մնացող պայմանն ասել, ե-  
թէ կալ:

— Կայ, ի հարկէ, կայ, պատասխանեցին գևերը, և ու-  
րիշ աշագին շտեմարան ցոյց տուին կորեկով ու աւազով  
լիքը: Մի գիշերուայ մէջ պէտք է իրարից ջոկէին, տոպլակ-  
ներ ածէին և ջոկ-ջոկ գարսէին: Փափագը յուսահատելու  
վրայ էր. Ապաւէնը քաշալերեց.

— Ի՞նչ ես նեղանում, հոգիս, գու գնա, նստիր շտեմա-  
րանի մէջ, ես ամեն ինչ կիարգաղը: Բան կայ, սատանի  
ձեռով պէտք է շինել, բան կայ՝ Աստծու:

Փափագը միամտուեց ու քնեց: Ապաւէնը թել թեկին  
քսելուն պէս մըջիմները սասումի նման ներս թափուեցին,  
կորեկն աւազից ջոկելով, առանձին տոպլակներում տեղաւո-  
րեցին ու գեռ որձակը երկու բերան շկանչած աւարտեցին  
ու քիշ քիշ եղան:

Սուաւոտէհան ձմբոստ գել ներս մտաւ ու մնաց բե-  
րանը բաց: Առանց նրանց զարթեցնելու ինքն իրեն խօսեց.

— Ադամորդուց այսքան զարմանք լսուած չի, հալաւ լի-  
նի սրանց իմ քոյլը իրենց մօր կաթի պէս:

Գնաց, իմացրեց. դևերը կանչեցին.

— Այ աղէրք, աստղներդ քաղցր է. բոլոր պարմանները կատարել էք բացի մէկից. թէ այն էլ կատարէք, մեր քոյրը ձերն է ու ձերը. Մի օրուայ մէջ պէտք է այս աշտարակից մինչև մեր քրոջ կացարանը այնպէս ուղիղ ճամբա շինէք, որ ձուն այս ծալրում դնենք, այն ծալրից երեալ:

Այս վերջին առաջարկը ոչ թէ Փափագին այլ և Ապաւէնին դժուար ու անկարելի թուաց, որովհետև մէջտեղը մի ահագին ապառաժոտ լեռ կար. Երկուսի վրայ էլ վհատութիւնը իր թևերը փռել էր. Փափագը սրտում լալիս էր, իսկ Ապաւէնը ափսոսում էր քաշած նեղութիւնները. Եթէ վերջին պայմանը չկատարէք՝ կամ ձեռնունայն յետ պէտք է դառնար կամ յօժարակամ մահ ընդունէր. Խարազի տղի համար ամօթ էր այդքան նուաստանալ. Վճռեց իր ուժին ապաւինել, կռիւ սկսել և դևերին կոտորել. Դեռ այդ մտադրութիւնը Փափագին չառած՝ ուզեց վերջին անգամ դևերի քրոջ մօտ մտնել. Ապաւէնի աղունակ դառնալու խորհրդին ոչ ով տեղեակ չէր. միայն աղջիկը կարծիքի էր եկել, որ իր բնակարանը մտնող կայ, որ կերակուրներն ուտում, աշաանակները փոխում գնում է. Աղջիկը արթուն կացաւ որ եկողին անշուշտ բռնի: Սուտ իրեն քռւնն էր դրել, գիշերուայ ժամին նկատեց, որ լուսամուտով մի աղունակ մտաւ, փոխուեց, դարձաւ երիտասարդ, նստեց կերակուրներից կերաւ, իր կենացն էլ խմեց, աշաանակները փոխուեց, մօտեցաւ որ իրեն համբուրի ու հեռանայ, աղջիկն անխօս վրայ թռաւ, երիտասարդին բռնեց.

— Օձն իր պորտով, ծիսն իր թևով չեն կարողանում այստեղ կոխել, դու ինչ սրտի տէր ես, որ բարձրանում ես շարունակ ու այդ յանդգնութիւնն անում:

Ապաւէնը կանգնեց ու սրտակոտոր, իր գալըստեան շարժառիթն ասեց: Աղջիկը մնաց մտածման մէջ. նա լսել էր որ երկու հոգի իր պատճառով դևերի ձեռին չարչարուում

են. և ամեն պայմանները կատարում են: Սրտով ուզում էր դրանց միանգամ աչքով տեսնել, բայց եղբայրներից ահ էր քաշում: Ոյժմ չգիտէր դէպքից ոնց շնորհակալ լինի, որ բաղձանքն ինքն իրեն կատարուում է.

— Ուրեմն գու ես այն երիտասարդը, որի քաջութեան, իմաստութեան վրայ աշխարհը զարմացած է: Երեի տարերքները քեզ հետ բարեկամ են, որ ալսքան ժամանակ կենդան ես մնացել Զըմբը-զըմբը դևերի ձեռին: Եթէ սրտիդ մէջ վիշտ ունիս, ասա համարձակ, բան մի ծածկիլ:

Ապաւէնը սիրտ առած խօսեց.

— Ո՛վ աշխարհների կռուածաղիկդ, որտեղից է երևում իմ քաջութիւնը. ալսքան չարչարելուց յետոյ եղբայրներդ այնպէս պայման են առաջարկել, որ ստիպուած պէտք է լինիմ դատարկաձեռն դառնալ կամ ողջումախազօրս հետ միասին կռուել եղբայրներիդ դէմ ու անհաւասար կռուում մեռնել: Արդէն վճռել եմ, բայց ողջումախազօրս խնայում եմ. բացի այն որ թագաւորացն է ու ծաղիկ հասակում, այլ և իր մօր մինուճար գաւակն է ու նրա ապաւէն կարգուած եմ ես իր գորովագութ մօր կողմից: Պատասխանատւութիւնս ծանր է, ուստի մեղմ միջոց եմ վընտուում մինչեւ արիւնոտ վճռիս դիմելը:

Աղջկայ սիրտը շարժուեց և այս կերպ խօսեց.

— Դու ձեռովդ եկածը չես խնայել ողջում ախազօրդ համար, չես վհատել. այժմ էլ պատրաստ ես նրա համար կեանքդ զոհելու. Տար Աստուած ողջումախսպէրդ ալդչափ սիրուն լինէր: Սիրտ իսկի էլ մի կոտրիլ, քեզ պէս անձնուէր ընկերի համար կեանքս չեմ խնայիլ: Ինչ որ քեզ գժուարութիւն ու մտատանջութիւն է պատճառում, ահա նրա ճարը:

Այս ասելով իր ծամերից զըմբալէ երկուսը պոկեց.

— Սրանք կտանէք, կացնի բերանին կը դնէք, ասեց, սարին կխփէք, ապառաժ քար էլ լինի, փուլ կգայ և կհար-

թուի: Այժմ ապահով գնա ընկերիդ մօտ, նրա պատկերը լիշտում եմ, ինձնից էլ բարև տար:

Ապաւէնը դարձաւ Փափագի մօտ, աղջկալ պատուէրով վերջին պայմանն էլ կատարուեց:

Դևերը ժողովի կանչեցին Ապաւէնին ու Փափագին.

Այս պատուական ագամորդիք, մենք կատարելավէս հաւան ենք ձեզ և արժանի ենք համարում մեր քոյլը ձեզ տաշու: Այն գլխից ասացինք, որ սրբազան պարտականութիւն է մեզ համար քաջերին պատուել ու մեծարել ձեզ հետ այլ ևս կռուաբան չունինք: Ոհա այն սարալին իր միջի անհուն հարստութիւնով կազմում է մեր քրոջ բաժինքը. մենք էլ մեր կողմից ընծաներ պէտք է տանք: Մնում է որ ինքներդ որոշեք ձեր մէջ, թէ որդդ էք ուզելու, որ նրա վրայ նշնենք. մի շաբաթ էլ հիւր պահենք մեր փեսալին, նրանից յետը Աստուած ձեզ հետ. ճամբու կդնենք ձեր աշխարհը:

Ապաւէնն այստեղ պատմեց Փափագի մանրամասն պատմութիւնը, թէ ով է և ինչ նպատակով է եկել, կամ ինքն ալտեղ ինչ գործ ունի: Դևերը աւելի մեծարեցին, երբ առաջներին տեսան խարազի տղին, որի մասին շատ զրոյցներ էին լսել: Սօտեցան, Փափագին հերթով ձեռ տուին բոլոր դերը, բարեկամացան, յետոյ խմբովին գնացին քրոջ մօտ:

Աւագ դեք կանչեց.

Հուրհեր, դուրս եկ, զոյգ փեսալացու են եկել ձեռքդ խնդրելու: Մենք երկսին էլ հաւան ենք, մնում է քո սրտին ընտրել նրանցից արժանաւորը և իբրև նշան խոնարհութեան մազերդ նրա ոտի տակ փոել:

Ելաւ Հուրհերը, ամենին ողջունեց և սիրալիր հայեաց-քով Փափագին դիմեց.

Իմ պատճառով շատ երիտասարդներ են զրկուել իրենց քաղցր արևելց, շատ գահեր խորտակուել: Ոչ մէկի վայելչութեան բաժին չեմ դառած: Մինչեւ օրս կռուածաղիկ եմ եղել անունս լսողների համար: Երեւ իմ մէջ արժանա-

ւորութիւն գտնում են: Զգիտեմ այդ իմ արտաքին գեղեց-կութեան մէջ են որոնում, թէ անհուն բաժինքիս, հարս-տութեանս մէջ: Իսկ ես ընկերոջդ մէջ տեսնում եմ մի այն-պիսի յատկութիւն, որ առաքինութիւնների պսակն է: Իր անձնուիրութեամբ յաղթել է ամեն արգելքների և յաջողե-ցրել ձեռք բերելու ինձ, Զը մը զը մը գեերի քրոջը: Ես այս բոգեիս քո ողջումախպօր օրինակին եմ գերուած: Տալ Աս-տուած որ դու էլ քու հերթում այդպէս վարուես, կեանքդ մահու տաս անձնուեր ընկերիդ համար: Դյանով աշխարհը կհամոզուի, որ ողջումախպէրութեան սուրբ ուխտ յարգո-զը, կարող է ամուսնութեան սրբազան ուխտն էլ նուիրական պահել:

Այս խօսքերի վրայ Ապաւէնի սիրտը ճիսաց, մխիթա-րուեց. մոռացաւ կրած նեղութիւնները, երբ իրօք համո-զուեց թէ ինչ արժանաւոր հարսնացու ձեռք բերելու հա-մար է եղել այդ ամենը: Փափագն էլ միւս կողմից ուրախա-ցաւ իր մտքում ասելով, «այսպիսի խելօք աղջիկ մեր աշ-խարհը հարս տանելու համար արժեր այնքան ընդդիմու-թիւնը թէ հօրը թէ միւսներին»: Առաջ ամանչեց Փափագը և հետևեալն ասեց:

—Խօսք եմ տալիս ամենի տուած, երախտագէտ լինել ող-ջումախպօրս, որի օգնութեամբ արժանանում եմ ձեզ: Եթէ ես երախտամոռութեան փոքր նշան ցոլց տամ, թող կատա-րուի գլխիս մօրս անէծքը, որ ամենասոսկալին եմ համա-րում աշխարհիս վրայ:

Հուրհերը ուրախասիրտ երկար ծամերը փոեց Փափագի ոտների առաջ: Դևերը բարձրածալն շնորհաւորեցին նշանա-դրութիւնը: Ապաւէնը ուրախութեան արտասուքն աշքերին մօտեցաւ Փափագի ճակատը: Համբուրեց, Հուրհերի էլ ձեռը և գնաց դեերի հետ սեղան նստելու, իսկ նշանադրեալներին առաջնորդեցին դեերի հին օջաղը, նրանց պապերի կաց ս-րանը, որ այնտեղ եօթն օր անցկացնեն, ծանօթուեն իրար

մինչև բաժինքի պատրաստելը, հակների մէջ տեղաւորելը թէ ոսկի, թէ արծաթ և թէ ակնեղին։ Այդպէս էր գեերի սովորութիւնը։

Թ.

Հուրհերին ուղղվներ, նրա ձեռք խնդրողներ մինչև այդ օրը անթիւ էին եղել։ Գետի աւազին համբարք կար, նրա ուղղվներին չէ։ Ով ասես իր բախար փորձելու չէր եկել այդ ձորը, բայց միշտ էլ յաղթուել էր ու տանջանքի մատնուել։ Երբ Ապաւէնը յաղթեց Զըմբ-զըմբ գևերին ու Հուրհերին արժանի արաւ Փափագին՝ նրա առաջին գործը եղաւ բոլոր կալանաւորներին ազատութիւն տալ։ Չորի ամեն կողմը ժայռերում փորուածներ կային և անթիւ հոգիք թափած մէջները. հանեց փականքից, լաւ կերուխում սարքեց, մեծարեց ու արձակեց ասելով։

Գնացէք ու Խարազի տղին չճռուանաք, որը ապաւինած է ընկերսիրութեան ու անձնուիրութեան ամենազօրեղ ուժին։ Ով գիտէ, փոփոխական աշխարհ է, ամեն ժամանակ մի մարդու երեսի չի ծիծաղիլ։ Հաւատում եմ որ արած լաւութիւնը չի կորչել. կարելի է, մի օր էլ ես ձեր օրումը լինիմ։ Գնացէք, Տէր ընդ ձեզ։

Այդ ազատուղները ամենքն էլ ընտրովի քաջեր, հուժկու գեեր լինելով՝ վերագարձան իրենց հեռաւոր աշխարհները. բայց ում հետ էլ բերան էին բաց անում՝ միշտ Խարազի տղի գովքն էին անում ու նրա քաջութիւնը, անձնուիրութիւնը ամեն տեղ պատմում։ Էլ սիրտ չկար, որ նրան չկարութէր, էլ աչք չկար, որ նրա տեսութեան չփափագէր։ Ամենքն էլ ուղում էին տեսնել, թէ ինչ նշանի, ինչ աստղի ադամորդի է։

Դևերը ամեն հնար գործ էին դնում Ապաւէնին ուրախ պահելու։ Ուտել խմելուց լետոյ զննազան խալեր էին սարքում, կռանթոփի տալիս. քարագըրդոնների չափ բուրթի էին շպրտում, որ կռների ոյժը փորձեն։ Հալի-հալի տալիս, լըդրանոց գնդերը ծուլ էին անում դէպի վեր, մի կողմի գցածը միւս կողմը չանթում էր։ Սալերը շուտ լրացնող կողմը հակառակ կողմի խաղաղողների ուսւերին ձիավարի նստում էր. քառակուսի կանգնում էին հրապարակում ու գնդերը իրար վրայ գցում փոփոխակի և ալդպիս շարունակում մինչև էշը փալան անելը, ալիսինքն գունդը ընկնելուն պէս տակինները վերեկնների ուսւերին բաղմում էին ու նոյն կերպ շարունակում խաղը։ Ճոխտուփանդի խաղալիս՝ Աստուած թափի, թէ ինչպէս էին ճլում երկուվ միւսների եգնից, քերծերի գլխով թռչում էին։ Այսպէս էլ կափարանքի տալիս, երբ երեք հոգով կալած էին լինում, ինչքան էլ մէրը հսկում էր, դարձեալ ժռչում նստում էին կասկարանքուած գևերի գլխին, մէջքին. գոյանում էր մի սարաբլուր։ Որ կողմն ընկնում էր Ապաւէնը՝ միշտ այն կողմը շահ էր լինում, միշտ նրա ընկերները յաղթում էին։ Խաղերից յետոյ նետ ու աղեզները առնում գնում էին որսի։ Դևերը դէս էին ընկնում, գէս, հարիւր քերծի վրայից, հազար ծառի տակից ծկրակում, հազիւ յաջողում էր մի քանի որս անել, ջարդուած, կոտրատուած վերագառնալ, իսկ Ապաւէնը, տեսնում էին, վերագառնում է որսատեղից ոչ թէ սպանած որսերով, այլ կըխտար, բախրա, նապաստակ կենդան ու ողջ առաջն արած նախրի պէս քշում է, իսկ պահապան շների տեղ էլ երկու գալլ, ականջներից բռնած կոնդունալով քաշ է տալիս։

Ամեն գիշեր խարայներ էին վառում սարերի գագաթներին, որ հեռու տեղերում իմանան, թէ Զըմբ-զըմբ գևերը խրախճանքի մէջ են։ Սարալի առաջ գերանաչափ անծխակոթերը իրաշ անելով, զօրեղ կրակ վաւելով որսերը պէտում, խանձու, խորովու անում, ուտում, խմում զուարձա-

Նում էին և Ապաւէնին իրենց հետ կցում, որ եօթն օբը ձանձրալի չերևալ:

Մինչ սրանք այսպէս էին՝ Փափագն ու Հուրհերը շողոմքոր գառների նման իրար տեսնում, իրար հետ խօսում, իրար պատկերի նայում, իրար քաղցր աստղով խնդում էին: Փափագը խելօք էր, նրանից առաւել էր աղջիկը, որն առանց երկար ուշ գնելու անմեղ խաղերին՝ աւելի զբաղուած էր ուղևորութեան պատրաստութիւններով. ամեն ինչ ինքն էր անել տալիս, ինքն էր կարգադրում: Փափագը մասսամբ մատնուած էր պարապութեան, աչքերով հետեւում էր Հուրհերի եռանդով աշխատելուն, ինքն էլ կամենում էր մասնակցել, նշանածը չէր թողնում ասելով.

—Մենք հիւրին սովոր ենք ծառալել, ոչ թէ ծառալեցնել:

Քաղցր կերպով հրում էր և ուղարկում զբօննելու:

Հինգ օրն անցել էր Փափագի համար, երջանիկ ժամերով: Վեցերորդ օրը Հուրհերը գլուխը կախած զբաղուած էր. Փափագը նրան չխանգարելու համար մտաւ գլերի պապենական տունը, որ քառակուսի շինութիւն էր չորս սալանի, չորս տալանի: Այնքան մեծ էր, որ մի պուճախից միւս պուճախը չէր երեւում: Փափագը հաստ սիւներին և վրալի նախշերին հետաքրքրութեամբ նայելիս՝ նկատեց մի փունջ բանայիք: Տան արևելեան պատի մէջ մի դուռը կար. ժամանակ անցկացնելու համար Փափագը կամեցաւ այդ դուռը բանալ և իմանալ մէջը ինչ կայ: Դրա համար չուզեց Հուրհերին բանից գցի, բանալիները դուան վրայ փորձեց, ու քիչ միջոցից լետոյ դուռը բացուեց: Դատարկ սենեակ էր ու միջով ուրիշ դուռը կար: Հետաքրքրուեց այն էլ բանալու, տեսնի մէջն ինչ կայ: Նրա բաղդից այդ էլ բացուեց, կրկին դատարկ էր ու դարձեալ միջով ուրիշ դուռ: Ինքն իրեն մըտածեց.

—Ոնպատճառ այստեղ մի հետաքրքիր պահուստ պէտք

է լինի, որ մինչև օրս Հուրհերը ինձնից ծածուկ է պահել, շտապեմ մնացածն էլ բանալու, քանի որ զբաղուած է:

Այսպէս իրարու եղնից վեց դուռը բաց արեց, ըոլորն էլ դադարկ: Եօթներորդ սենեակից մի մոնչոց լսեց, որը Փափագի սիրացը լցրեց թէ երկիւղով և թէ անզուսալ հետաքրքրութիւնով:

—Բանամ տեսնեմ, սա ինչ կլինի, ասեց ու բանալին շարժեց: Երբ դուռը բացուեց՝ Փափագին պաշարեց մի սարսափ և ոտից մինչև մտզի ծալը ցնցեց:

Ո.Հագին դարբասի մէջ եօթ գլխանի մի զառամեալ գե, գլխները երկաթէ թոկերով կապկապած պուճախների հաստ սիւներից: Քերծաչափ գեր տափակուել դարձել էր ցամաքած կոճզ: Հեռու դըած էր ջրի ահագին տաշտը, գերի պինչը չէր հասնում. ամիսներով ծարաւ էր, հէնց ալդ էր նրան խեղճացրել, նիհարացրել: Փափագին տեսնելուն պէս՝ աղի աղի լաց եղաւ.

—Ո. ազնիւ տղայ, ասեց, թէ սիրուն արեգ կսիրես, ինձ մի պուտ ջուր տուր: Մեղք արի զառամեալ հասակիս, եօթը տարի է այստեղ կապկապուած եմ: Բաւական չէ որ արմեից զըրկուած եմ, սին ջուրն էլ խնայում են. աչքիս առաջ տաշտը ջրով լիքն է, ես այստեղ ծարաւ պապակում եմ: Ի՞նչ կլինի ալդ ջուրը մօտեցնես, խմեմ և քու արեն օրհնեմ:

Միամիտ Փափագը հաւատաց նրա կեղծ աղաչանքին, մի կերպ տաշտը մօտեցրեց առանց իմանալու, որ եթէ ըլլը չոր եղած գեր ջրից կշտանայ՝ կորած ոյժը լետ կգայ: Դեռ բոլոր ջուրը ծրծոքեց, ցամաքեցրեց տաշտը, ու որ մի չսկըսեց ճլըմկոտալն ու գլուխները թափահարելը—թոկերը դըրնթալէ, զըրնդալէ բաց ընկան: Դևն արձակուեց, վրայ բերեց Փափագին էլ կոնալոր մի թաթալոշ կպցրեց, գետին փռեց, դուրս եկաւ Հուրհերին շալակն առաւ, օր ցերեկով փախցրեց:

Դսերն ու Ապաւէնը միատեղ որսատեղ էին։ Հուրհերի ծղրացը ձորերը կալել էր, ոչ ոք չկար, օգնութիւն հաս-նէր։ Եօթը գլխանի դեր գնում էր իր թանգաղին բեռնով։ Սա գրաւուած Կոռմբալ թագաւորի խոստումներով՝ եկել էր որ կրուի բոլոր դեերի հետ և ուժով տանի։ Բայց Զըմբ-զըմբ գեերը կապկապել էին. ոչ ուտելիք էին տալիս, ոչ խմելիք. ջուրը հեռու դրել էին, որ աչքը տեսնի սիրաը ցանկանալ, պինչը չը հասնի, հալ ու մաշ լինի։ Նրա վրայ հսկելը կաղ դեի պարտաւորութիւնն էր, որ շաբթական մի անգամ կալանաւորի քնած միջոցին բաց էր անում տեսնում, էլ լետ փակում, բանալիները իր ձեռով պահում։ Քրոջ նշա-նադրութեան դէպքը այնպէս ուշագրաւ էր արել բոլորին, որ զուարճութիւններով զբաղուած՝ դեն էլ էին մոռացել, բանալին էլ։ Որսատեղում կաղ դեը մտաբերեց, որ բանալի-ները թողել է սիւնի ճակատին կախ։ Կասկած ընկաւ սիր-տը. — Հինք Փափագը քրոջը հարցնի, թէ սրանք ինչ բանա-լիներ են, քոլրն էլ միամըտաբար ասի ու երկսով դժբաղդու-թեան պատահեն։ Այս մտմտուքից յետոյ իսկոյն քայլերն ուղ-դեց դէպի տուն առանց եղբայրներին իմացնելու։ Ա՛յս ու փիշ անելով հասաւ պատական սարալուն. բարձրացաւ տե-սաւ ոչ քոլը կայ, ոչ փեսալ։ Ամօթից ու սարսափից թուքը կսաւ, ուժիքթնեց։ Վազեց բանալիների մօտ— չկային։ Գոռ-գոռաց, դոբըռաց— ոչով պատասխանող չեղաւ։ Իմացաւ բանն ինչումն է, վազեց բաց սենեակները և տեսաւ տաշտի կող-քին Փափագը փոռուած, բերանն արիւնլուիկ. դեռ սիրտը տրբիում էր։ Մինչև կաղ դեը ջրի կվազէր, մինչև ուշի կը-ելիէր՝ միւս դեերն էլ հասան, թըմբթմբալէ ներո դառան-

Փափագը ուշիտրացաւ, գլխին եկածը մին մին պատմեց ու իրեն յանցաւոր զգալով մնաց պուշկած արիւն ծովումը։ Միտք էր անում ինքն իրեն և կշռելով իրեն հասած դը-բաղառութիւնը՝ քիչ էր մնում խելքը թուցնի.

Ապաւէնը երբ նկատեց, որ թաքուն տշկարալ դեերը

տրտնջում են Փափագի դէմ, քիթըցից են թէ իրեն և թէ ողջումախալոր հետ՝ սկսեց խիստ հայեացքով աչքերը խո-ժոռել նրանց վրալ.

— Ի՞նչ էք նոթերնիդ կիտել, անտառիներ, բաւական չի որ սառ նստել, չէք ուզում տեղներից՝ շաղժուել, դեռ-իրաւունք էք համարում թոնթորալու էլ։ Զեր քոյրն է փախց-րած, իմ հարսը. այս փորձանքի մէջ աւելի մեղաւոր էք դուք, որ ինձնից ծածկել էք ձեր վտանգաւոր գերին։ Ինչ եղել է, անցել է, մէկմէկու վրայ մեղագրանք գցելն աւե-լորդ է։ Դուք, ալդ է, փէշներդ թափ տուել մի ձայնի ձեր քոյրն էք պահանջում, իսկ ես այս նամուսի տէրը չեմ, որ թողեմ հարսիս դև փախցնի, թէկուզ եօթ գլխի տեղ քսան-եօթ ունենայ։ Ողջումախալորս թողում եմ ձեզ մօտ գրաւ և գնում Հուրհերի եղնից մի ամիս ժամանակով։ Թէ բերի ժամանակին, մեր բաղդն է, թէ չբերի նշանակում է ես կեն-դան չեմ. ընկերիս արիւնը ձեզ հալալ։

Զըմբ-զըմբ գեերը համաձայնուեցին։ Ապաւէնը «մնաս բարե» ասեց նրանց, գնաց, իսկ Փափագը մինչև ձորի բերա-նը մզկըտալով, արտասունք չափելով հետն եկաւ։

— Ա՛յս, հառաջում էլ նա, ինչ անբաղդ արարած դուրս եկայ։ Այնտեղ խեղճ ծնողացս աչքը արիւն արտասունքով թողի, բաւական չէր կարծես այդ վիշտը, այստեղ աշխարհի ադամանդը իմ անմտութեամբ ձեռէս թուցնելուց յետոյ, ալժմ էլ քեզ եմ կորցնում անյոյս, Ապաւէն ջան։ Արգեօք արժի ինձական տիմարի պատճառով այդչափ նեղութիւն յանձն առ-նելը։ Առաւել լաւ չի այս դետի ալիքներին կուր շինես ինձ ու անձդ նորանոր փորձանքների չենթարկես։

Ապաւէնը քաղցը ժպիտով գլուխը թօթուեց ու սրտա-կոտոր Փափագին դարձաւ.

— Արա Փափագ, միթէ այդքան է քու տղամարդու-թիւնը։ Ա՛րա, Հուրհերին կորցնելը թեթև անպատճութիւն-ես համարում, համ։ Ասենք թէ դու սրտիդ մորմոքից այդպէս

ես խօսում. բայ իմ ընկերսիրութեան նշանը ո՞րն է, թող անեմ Հուրհերի մազը թեքուիք: Չէ, մատաղ, ողջումախպէրդ գեռ կենդան է, լոյսդ մի կտրիլ: Մինչև ինձ մաս-մաս չանեն, աշխարհի չորս քամիների բերան տան՝ ես Հուրհերի հետքը չեմ բաց թողիլ. մինչև ինձ խաղահան չանեն, սանդի մէջ չածեն, չեծեն՝ ընկերի պատուի հատուցումը մտահան անողը չեմ: Յետ դարձիր, մատաղ, ես մօրդ խօսք եմ տուել կարմիր ուսկապդ նա պէտք է կապի. առանց Հուրհերի քեզ սրտակոտոր նրա երեսը ո՞նց տանեմ: Ինձնից միամիտ կաց, ողջումախպէրութեան Աստուածը գօրեղ է, նա անպատճառ ինձ օգնականներ կհասցնի, որ գնամ, ուր էլ լինի, Հուրհերին բերեմ, որը գիշերը քունըդ է կտրում, ցերեկը ուներիդ թելը:

Երկու ողջումախպէրները իրար փաթթուեցին. Ապաւէնը թռաւ գետի այն կողմը, այն գնալն էր ինչ գնաց առանց ուսով յետ նախլու, իսկ անփորձ Փափագը բարձրացաւ մօտակալ ժայռի գլուխը, աչքն այնքան Ապաւէնի ճամբին կթեց, որ տեղն ու տեղը նղեց, քնեց: Կազ դեղ, որ առանձին սէր էր զզում դէպի Փափագը՝ կարեկցելով նրան ուրոնեց ու մթնաժոռին քարափի գլխին գտնելով սիրտ տուեց, քաջալերեց ու տարաւ իր օթևանը:

## Ժ.

Աստըռու անունը տուած Ապաւէնը գնում էր բունած ճամբէն. Նա կարող էր լաւ ձի ճարել ու նստել, բայց նախոնարհ էր, չէր ուզում երևացնի թէ ինքը ո՞վ է, դրա համար երկար ճամբէն մտադիր էր ոտով գնալու:

Հասաւ մի շոք երկիր. տեսաւ հանդում մի վարնորդ եօթ լուծ գոմէշն առաջին: Դու մի ասիլ առաւօտահացը ուշացրել են, սովոր բարկացել, մաճը թողել է ու դարսուած

ճըմբները փլանչա-փլանչա կուլ է տալիս հացի տեղ: Դութանը զոթալէ ճղում է գետինը, ճըմբները կիտում, բայց էլի վարնորդին վրայ չի հասցնում: Ապաւէնը հետաքրքրութիւնից մօտեցաւ:

— Բարի աջողում, վարնորդ եղբայր. այդ ինչ զարմանալի շնորհք է, որ բանացնում ես, աշխարհիս ճմբները հաւաքում ես, չես կշտանում:

— Աստըռու անհատ բարին քեզ, խոնարհ տղայ. շնորհքն այս չի, որ կոպտաբար բանացնում ենք. շնորհքը Խարազի տղինն են ասում, որ ուժով ու խելքով Զըմբը-զըմբ դերին յաղթել է ու նրանց կոռածաղիկ քրոջն առել:

— Առել էլ է, տանուլ էլ է տուել. թէ շնորհք ունի, թող այսուհետեւ բանացնի, աշխարհում ամօմով շմնար:

— Ինչու, ինչ է պատահել, ինչպէս, հետաքրքիր հարցրեց ճմբակուլը:

Ապաւէնը մէկ մէկ պատմեց: Վարնորդը իմանալով թէ առաջն ով է կանգնած՝ կարեկից սրտով ասեց.

— Ինչ գիտէիր թէ քու սրտկերին էի կարօտ, անձնուէր տղայ. Եթէ իմ շնորհքը քեզ պիտանի կարող է լինել կեանքս քեզ մատաղ, գնանք, ուր անս ընկեր եմ:

Եւ յետոյ գիմեց գութանի լծկաններին.

— Ել գութանաւորներ, լաւ լսեցէք, մինչև իմ վերադը սարերի խոտը կուտէք, այս երևող դաշտերը կը վարէք: Եթէ ականջ չէք դնիլ կաշիներդ կմաշկեմ:

— Երբ որ առանց քեզ էլ գութանը կբանի, գնանք, ասեց Ապաւէնը. մէկ չլինենք, երկու լինենք, քու շնորհքը անշուշտ կհարկաւորի:

ճամբալ ընկան: Գնալիս ինչ պատահում էր՝ դաշտում, անտառում, թէ օդի մէջ՝ Ապաւէնը նետով վեր է ածում ընկերին կերակրելու համար: Բայց որսն այնքան առատ էր, որ շալակելուց ճմբակուլի ուսերը ցաւում էր: տեղ-տեղ իջեւանում էին, որսերը թեփրում, պլոկում, կիսախորով, խան-

ձուխորով անում, ուտում, կըկին ճամբէն շարունակում:

ճմբակուլի աչքը լոյս էր եկել, այնքան կիտարի ու  
բախրի միս էր կերել:

Նատ սար ու ձոր անցնելուց յետոյ տեսան խոր ձորի  
մօտ՝ փորսիվէր ընկած մի աժդահալ մալնչում է.

—Վայ, ծարաւ մեռայ:

Դու մի ասիլ այդ ձորի տեղը ծով է եղել, միջի բոլոր  
ջուրը խմել է և գեռ ծարաւ է: Մօտ որ գնացին Ապաւէնն  
ասեց.

—Պա քու տունը չծակուի. այդ ինչ շնորհքի տէր ես, որ  
տարած ծովը մրզոքել ես ու գեռ աչքի ջրումն է:

Ծովակուլը պատասխանեց.

—Ե՛, օտար եղբայր, իմ արածը ինչ շնորհք է Խարազի-  
տղի մօտ: Շնորհքովն այն տնաշէնն էր, որ Զըմբ-զըմը դե-  
ւերին ճռըմեռել յաղթել է ու կոռուածաղիկ Հուրհերին տի-  
րացել: Ես ինչ մարդահաշիւ եմ նրա կշտին:

—Նա տիրացաւ, բայց իւլոյն էլ խեց. թէ շնորհք ու-  
նի, սրանից յետը թող երևացնի, խօսեց Ապաւէնը:

—Ի՞նց, ինչպէս, այդ ինչ էք ասում, հետաքրքրու-  
թեամբ հարցըեց Ծովակուլը:

—Բա՛, ինչ կասես, Ծովակուլ եղբայր, այսպէս, այսպէս,  
Ապաւէնի տեղ պատասխանեց ճմբակուլը, գովական Խարազի-  
տղէն սա է և Հուրհերի ետնից է գնում:

—Վայ դրա արեին մատազ, վեր թուաւ Ծովակուլը.  
Թէկուզ ջրչոր եղած լինիմ՝ դրա սիրու համար աշխարհ տակն  
ու դրայ կանեծ, որ դա տիսուր չլինի, որ դրա անձնութրու-  
թիւնը փառքով պսակուի: Գնանք, ես էլ եմ դտլիս, եր-  
կու չինեք, երեք լինենք:

Հնկերացան ու գնացին:

Ճամբին ինչ սրս պատահում էր՝ ալքնում չկար, Ապա-  
ւէնը նշանակի տալով թրմփացնում էր, ճմբակուլն էլ նա-  
յում չեր, սոված ժամանակ բերանն էր տալիս թուչունքը

փետուրներով, կխտարը պֆեղներով, պտուղները կորիզներով,  
շատ անգամ էլ ոստերով, տերևներով: Ծովակուլի տունն էլ  
այնտեղ շինուի, ինչտեղ առու կամ ջրի հետք էր տեսնում,  
վազում էր ակը գտնում, խմում, ցամաքեցնում:

Մի խօսքով սրանց անցկացած տեղերում էլ շնչաւոր չը  
մնաց, ահի ու ծարաւի ձեռից գլուխ առան, կորան: Ման  
գալիս տափը նրանց ոտների տակ գողում էր. գոռում գո-  
չիւնով սար ու քար որոտ-որոտ էին գցել:

Նատ-քիչ գնալը Աստուած գիտէ, դէմ եղան մի լեռ-  
նաշղթայի. այդ էլ գլխավէրելով մտան մի ձոր, տեսան մի  
գետ վրխալէ գնալիս: Ափէ ափ տերևախիտ ծառեր ու փումփ-  
խիկ թփել: Աջ ափին կանաչ տեղում մի ադամորդի նստած  
մի բանի վրայ ածում է: Համա ածելը այնքան հրաշալի է,  
այնքան դիւրալի է, կասես հրեշտակի բերանից բղխելիս: Հե-  
ռուից լսողը չի իմանում ինչից է դուրս գալիս այդ ձայնը:  
Մէկ կարծում է, թէ տաւիդ է, մէկ էլ յանկարծ մըմնջում  
է գլդլացնում. քիչ կացած քաղցրաձայն քնարի է փոխում.  
յետոյ բամբ ու նուագ լսում գործիքի ծոցից, կարծես բամ-  
բիո ու նուագարան էլ մէջն ունենար: Ածողը ամեն մի  
եղանակ առանձին, թէ միասին՝ իրար ծոր բռնելով այնպէս  
ճարտար հիւսում էր, որ հողածնի ոտը երկրից կտրում եր-  
կինք էր վերացնում: Այդ էր պատճառը, որ աշխարհիս եր-  
գասէր թռչունները հաւաքուել էին այդ ձորը, ճլուլուել  
ծառերի վրայ: Ճղնելն ու սստերը այնպէս էին զարդարուել  
թեաւորների նախշուն փետուրներով, որ էլ կանաչ տերև-  
չէր երեւում: Թռչունների այդ ծանրութեան տակ բոլոր բու-  
սեղներն առ հասարակ ճռըխել, կոտցել էին, տափից կպել:

Ածողը տեսնելով Ապաւէնին ու ընկերներին, աւելի ո-  
գեռուեց ու սկսեց բոլոր շնորհքը ցոյց տալ. երգել ու ա-  
ծել, ածել ու երգել: Երգելու ու ածելու թունդ ժամանակ  
բոլոր ծառեղէնն ու բուսեղէնը սկսեցին պարելով պտտել  
ածողի գլխով: Թռչուններն էլ խելքամաղ եղած, դողտըիկ

կտուցները երկարացրած, կլափները կիսաբաց դամ էին պահում երգին՝ ուրախ մնչելով, ծլվալով, կլկալով ու բռւսեղնների հետ պտտելով:

Այս զարմանքը տեսնելով՝ Ծովակուլն իր ծարաւը մոռացաւ, ձմբակուլն իր քաղցը. տեղն ու տեղը ականջ դարձած՝ մնացին բերանները բաց, իսկ Ապաւէնը հիացումով ասեց.

— Կեցցես երգիչ, դու էլ, քու շնորհքդ էլ. Ուխալ, ձայնիդ մատաղ. Արարիչը քեզ մէկ է ստեղծել, բայց եօթ շնորհքը միասին պարզեց, որ համ լացացնես, համ ուրախացնես, համ խորովես, համ սփոփես, համ զարհուրեցնես, համ հիացնես, համ երկինք տանես Աստծուն ի տես: Կատարեալ շնորհքը դա է. Աստուած կեսանքդ երկար անի:

Ածողը դադարեց ու շնորհունակ Ապաւէնին շնորհալի պատասխան տուեց.

— Ե՛, եղբայր, դու զմայլուած ես իմ շնորհքով, որն անզօր եղաւ սրտիս փափակը կատարելու և Հուրհերին ձեռք բերելու: Սա ի՞նչ շնորհք է որ զարմանում ես. շնորհքը Խարազի տղինն է, որ Զըմբ-զըմբ գեերին յաղթեց ու աշխարհիս կռուածաղկին արժանացաւ: Միակ խնդիրս Աստծուց այն է, որ մի անդամ նրա երեսը տեսնելու բաղդ ունենամ, մի անդամ երգելուս ու ածելուս ձայնը նրա ականջը դցեմ, յետոյ որ մեռնեմ սրտումս դարդ չի մնալ:

— Երգիչ եղբայր, ի՞նչ գիտես թէ Խարազի տղէն ալսօր ի՞նչ նեղ օրումն է ու քու ածելուն է կարօս, որ տխուր սիրտը բացուի, ունեցած կոկծից սփոփանք դանի: Բայց աշխարհի բանին տես, որ քեզ հետ շատ շատերը նրան են երանի տալիս ու նրա բաղդին նախանձում:

Այս խօսքում Ծովակուլն ու ձմբակուլը մաղուած խելքները հաւաքեցին ու ածողին մօտենալով ասին.

— Բա ասիլ չես, քու սրտի ուզածը հէնց սա է որ կայ: Երգիչը ցնծագին բարեեց, երեքին էլ իր մօտ մարգագետնի քնքոյշ խոտերի վրայ նստացրեց, ու նրանց սիրոյ

հայար համ ածեց, համ երգեց: Սրանց ուղեռութեան պատճառը իմացաւ թէ չէ:

— Իմ կեանքս ու շնորհքս Խարազի տղի պէս անձնուեր ընկերին մատաղ է, ասեց, մինչեւ Հուրհերին գտնելը սուրբ պարտքս լինի ածել ու երգել, որ տիրութեան տմաքերը չը համարձակուեն քաջի ճակատի վրայ բազմել: Թէպէտ իմ հեռանալով այսքան արարածներն ու բուսեղէնները կիսամահ են լինելու, բայց փոյթ չի. թող դրանք էլ իրենց զուարծութիւնը զոհ բերեն ամենամեծ քաջին: Գնանք, երեք չինէք, չորս լինենք:

Միացան ու ճամբէն երգով, խնդումով շարունակեցին: Նատ գնացին, թէ քիչ, Աստուած գիտէ, տեսան կաղնուչափ հսկայ մարդ, լոշտակ ականջը դրել է տափին, տագ արել:

— Այ մարդ, բարի աջողում, այդ ի՞նչ ես անում:

— Սուս կացէք, նոր նոր համբաւներ կան, զոքը ըուցը շատ է, ջոկում չեմ ի՞նչ են ասում:

— Պա, ի՞նչ շնորհք է. ամեն տեղից, ամեն գործից տեղեկութիւն ունիս, նախանձում եմ քեզ, ասեց Ծովակուլը:

— Ե՛ եղբայր, սուր լսողութիւն ունենալը ի՞նչ մեծ բանէ որ: Գովասանքի արժանին Խարազի տղէն է, որ մօտ ժամանակս եօթ աժդահայ գեերի քոյրը ձեռք բերեց: Նրա վրայ պէտք է զարմանալ, թէ չէ ես ի՞նչ

— Ականջեղ, եղբայր, տիրազէմ խօսեց Ապաւէնը, Խարազի տղէն ես ասում, այդ ես եմ: Հուրհերը ձեռ գցեցի, ուղիղ է, բայց ի՞նչպէս է որ չես լսել նրա փախցնելը: Գործը այս դրութեան մէջ է, մենք գնում ենք նրան գտնելու: Թէ շնորհքդ բանացնելու ախորժակ ունիս, գու էլ արի:

— Ի՞ չեմ գալ, քեզ մատաղ, չոլս չլինէք, հինգ լինենք:

Առաջ եկան մտան մի աշխարհ, տեսան մի երէց, եօթը գիւղ է հովում, այնքան սրտացաւ, այնքան բարեսիրտ է, որ չի ժողում ժողովուրդը ոչ մի օր անժամ մնայ: Մի տեղ

ժամը վերջացնելուց յետոյ գեղի եկեղեցին շալակում է, գոտիով տանում միւս գեղերը ման ածում, ժամ ասում ու էլ եա շալակած բերում իր տեղը դնում: Խարազի տղին տեսաւ թէ չէ՝

— Փառոց կենաս, տէրտէր ջան, ասեց, համա ուժով ես հայ, կարգի ու պատարագի լինես, երբ որ այդքան շնորհքով ես:

— Ա՛յ որդի, թէ ուժից ես խօսում, Խարազի տղի անունը տուր, որ եօթ թագաւորի հոգում նրա գովքն են անում: Ես ի՞նչ եմ նրա կշտին, ափսոս հողը մինն է ծնել. նրա մայրը եօթը պէտք է բերէր, լաւ լինէր:

— Աստըծու փառքը շատ լինի, տէրտէր ջան. Երբ ես լսել, որ քաջ հերոսը հեշտ հոգով իր փափագին հասնի ու վայելի: Նատ կարելի է Խարազի տղին գովում ես, որովհետև Հուրհերին առաւ, բայց տանողն էլ տարաւ: Այժմ Խարազի տղին ինձ պէս գլուխը փէշում դրած երկրէ երկիր ման է գալիս, որ Զըմբը-զըմբ դեմքը քրոջը գտնի:

— Օրհնեալ լինի նրա ծնունդը, ուր էր թէ մեր կողմն էլ գար, գովական պատկերը տեսնէինք ու դարդին մի ճարանէիք:

— Հէնց քու ուզածը այս հինգ հոգուս մէջն է, ա տէր. թէ կարենաս ճանաչէլ. Հարցրեց ճմբակուլը:

— Հոգին սուրբը վկայում է, որ խօսակիցս պէտք է լինի: Զարմանալի էլ չի, Աստուած շնորհքները խոնարհներին է տալիս. բայց ոնց տեսնում եմ սիրաը շատ կոտրած է: Օրհնեալ լինիք, որ ընկերացն էք միիթարելու համար: Բայց դուք որ քաջին, արժանաւորին դնահատել գիտէք, հէնց ես եմ ալարկութը: Դնանք, հինգ չլինէք, վեց լինենք:

— Տէրտէր ջան, հեռու ճամբայ ենք գնում, արի ժամ ասա. ժամի կարօտ չըմնանք, խնդրեցին ուղևորները:

— Այ որդիք, դուք ժամ մտէք. ինչու էք ժամի կարօ-

տելու, տէրտէրն էլ է ձեզ հետ գտլիս, ժամն էլ, սլատարագն էլ:

Ներս մտան թէ չէ, Տէրտէրը գոտիկը պատ տուեց ժամի չորս կոզմով, շալակն առաւ ու «Տէր, սւղդեա զգնացս մեր»... տսելով ճամբայ ընկաւ վարար ջրի պէս:

## ԺԱԿ

Ժամասէր երէցը աղօթք ասելով գնում էր. Ականջեղը յանկարծ գոռաց:

— Ա՛յ նրէց, կանգնիր, ականջս տժտժում դըռդըռում է, այս մօտիկ տեղը մի բան կայ: Տէրտէրը կանգնեց, Ականջեղը տափից կպաւ ու բղլալէ վեր թռաւ:

— Մօտիկ քաղաքում թունդ իրարանցում կայ. Հարսանիքի պատրաստութիւն են տեսնում, գնանք:

Ոյս լսելով ամենքն էլ շտապեցին, վուազ-վուազ հասան քաղաքը: Իրաւ որ ժողովուրդը խլիլում էր, դատարկ ոտնատեղ չկար փողոցում: Ապաւէնն ու ընկերները հնար չըգըտան քաղաք մտնելու: Քաղաքից դուրս մի խրճիթի մօտ ոտն եղան: Նրանց կանչին մի պառաւ գուրս եկաւ.

— Ա՛յ նանի, այս ի՞նչ խաբար է, ձեր քաղաքը միշտ այս պէս լիքն է լինում:

— Դուք ո՞րտեղացի էք, որ խաբար չէք: Եօթ գլխանի դեր թագաւորի համար Հուրհեր աղջկանը բերել է. քանի տարի էր հայ, որ գնացել էր: Հիմի նրա հարսանիքն է:

— Բախշի մեզ, նանի, օտարական ենք, տեղեկութիւն չունինք. միայն մի խնդիր ունինք, թէ կարելի կլինի, մեզ այս գիշեր օթևանելու տեղ տուր, առաւօտանց գնալու ենք:

Ապաւէնը նկատեց, որ պառաւը չեմ ու չում անելով ուզում է գլխիցը ցանի՝ խկոյն մի բռնակ փող պառաւի գոգն

ածեց: Պառաւն այդ տուրքի վրայ կակղեց, առաջ գնաց թե-ներից կախ եղաւ.

— Օտար եղբայրներ, բարի հազար բարի, իմ գլխի վրայ էք եկել, հիւրն Աստղծունն է, ինչո՞ւ չեմ ընդունիլ, տունն էլ է ձերը, դուռն էլ:

Մեր ճամբորգները պառաւի հրաւերով ներս մտան հան-գլստանալու, իսկ տէրտէրը իր շալակը վեր դրած՝ աղօթում էր գործի յաջողութեան համար: Մթնելու վրայ էր, որ թա-գաւորի սպասաւորները թաղէթաղ, տնէտուն ընկած բոլորին իմաց էին անում՝ պալատը հարսանիք գնալու: Մինն էլ ե-կաւ խրճիթը պառաւին հրաւիրելու.

— Գնա, ասա, կարող չեմ տանից հեռանալ, հիւրեր ու-նիմ, շատ շնորհակալ եմ.

Կանչող սպասաւորը գնաց, յալտնեց որ պառաւը չի գա-լիս, որովհետև նրա տանը հիւրեր կտն այս ու այն նշանի:

Պալատում հետաքրքրուեցին թէ այդպէս մարդիկ ին-չո՞ւ պէտք է պառաւի տան վեր գան. կասկած տարան նը-րանց վրայ, որ շահաւետ մարդիկ չպէտք է լինին: Պալատա-կաններից մի քանիսը հարկաւոր համարեցին դրանց սպանել, ոչնչացնել: Բայց այդ միջոցին աշկարայ կռիւ սկսելու ան-յարմար էին տեսնում, մտածեցին խաբէութիւնով մահացնել այդ կասկածելի մարդկանց: Կրկին ոքմին ուղարկեցին պա-ռաւի տուն թէ՝ թագաւորը խնդրում է քո հիւրերով հա-մեցէք. իմ ուրախութեան մէջ աղքատն ու օտարականը ա-ւելի պատուաւոր տեղ ունին:

Այդ ժամանակ Ականջեղը մտել էր ժամը, չոքել ական-ջը տափին գլել: Ի՞նչ էր լսում. պալատականները թագաւ-որի հետ խորհուրդ էին անում, որ վեց բաժինների մէջ թոյն խառնեն. օտարական հիւրերը ուտեն թէ չէ մէջներից ճաքեն:

Ականջեղն այս ամենը յալտնեց Ապաւէնին, սա էլ սկա-ռաւին առեց որ համաձայն են իրենք էլ հարսանիք գնալու:

Սպասաւորը լուր տարաւ որ զախս են, իսկ Ապաւէնն ու ըն-կերները ժամում տէրտէրին ներկայաւթեամբ խորհուրդ արին, կարգադրեցին, թէ ով ի՞նչ պէտք է անի թագաւորի պալա-տում սուփրի վրայ ալսպէս պատրաստուած գնացին պալատ: Թագաւորն ինքը դիմաւորեց ու պատուով ընդունելով պա-տուիրեց սեղանի կառավարչին, որ իրենց արժանաւոր տեղը բազմեցնեն նորեկ հիւրերին. ուտելիք խմելիքն էլ լիառատ անեն:

Պատուէրը ճշտութեամբ կատարուեց: Երբ սեղանը պատ-րաստ էր, ամենքը նստած էին ու կամենում էին հաց կըտ-րել՝ երդիչը գործիքը ձեռն տռաւ, սկսեց ածել: Բազմական-ները ձեռները հացից ու կերակրից յետ քաշեցին: Խելքամաղ եղած լսում էին. հենց իմանում էին թէ հըեշտակները ի-րենց թռթլուացնելով տանում են երկինք: Երբ ածելու հետ երգելն էլ սկսեց, աննկատելի կերպով սեղանը ժամ ընկաւ տեղից ու վրայի բաժիններով սկսեց պատուել: Երբ թունա-ւոր բաժիններն անցաւ թագաւորի, նազիրի, պալատականնե-րի առաջ երգիչը լուեց: Երգեցալութեամբ հիացած ժողո-վուրդը ծափ տռեց, շնորհակալութիւն արեց երգին և ձեռ-մեկնեց կերակրի, հացի: Ոչ ով էլ չէր նկատել թէ սուփրի մէջ ի՞նչ փոփոխութիւն է եղել:

Ճմբակուլը գեռ բլուզը չէր լցրել՝ թագաւորի ու մօ-տիկ մարդկերանց փորի ցաւը բռնեց: Դեղնակոթեցին, սը-փարթնեցին: Զէին կարողանում տեղները հանգիստ նստել. բղկում, զկրտում էին, բայց բղկոցով ու զկրտոցով օգնու-թիւն չէր լինում: Պալատականները թագաւորին ու միւսնե-րին փորսուվէր ցցեցին ու մէջքները կոխ տուին, քթները հաղաղեցին, ականջներից ձգձգեցին—ճար ու հնար չեղաւ: Թագաւորն ու ընկերները աչքները սկըսանեցին ու քոչեցին հանդերձեալ աշխարհը: Ժողովուրդը մնաց արիւնապարտ. որն ասեց. սա տեսիլք էր, որը թէ Տէր ինքը յօժար չէր այս պսակին, որը թէ Հուրհեր հարսնացուի մեղքիցն է, որ մի

սենեակում փակուած արիւն արտասուք է թափում:

Սուփրի վրալ ինչ որ հաց ու մաց կար՝ ծմբակուլը ածեց ըռեխը մի բլդուղ շինեց. Ծովակուլնէլ ինչ որ ջուր ու գինի կար՝ մի կում արեց, պլծաւ: Եօթ գլխանի դեր վազեց տաշտերով հաց, կարասներով գինի խտած բերեց:

— Այդ ինչ բանի ես, մենք հանաքի գլուխ չունինք, այսօր մեզ համ հարսանիքի ճաշ պէտք է տաք, համ հոգեհաց, խելքներդ որտեղ է: Գնա, հացի պատրաստութիւն տես, սրանցով բան չի դառնալ, ասեց ծմբակուլն ու տաշտերը դարդակեց.

— Պա, քու դուրս եկած աշխարհը խորտակուի, այս ինչ տեսանք, խօսեցին զարմացած բազմականները:

Ծովափուլն էլ կարասները գլխին քաշելով, մինչև տակները ծրծոքեց ու դէն շպրտելով:

— Այս ինչ անշնորհք պուլիկներ են, կատիկս էլ չեն թրջում. սրանց վարպետը որ մի քիչ մեծաւուն էր շինել, վախենում էր լիսնահղող հատնի:

— Պա, քու դինոս տունն էլ այդտեղ քանդուի, ասեցին նստողներն ու խօսք մին արած գդակները վերցրին:

— Տղերք, փախչենք, թէ չէ մեզ էլ են ուտելու: Յրուեցին ահից սարերը: Պաշար էին ուգում ծմբակուլն ու Ծովակուլը—ուշ դարձնող չկար: Ապաւէնը որ մինչև այդ ժամանակ բացակայութիւն էր ներս եկաւ, կանչեց եօթ գլխանի դեկին ու շլնքակոթում որ մի չհիւսեց, Տէր Աստուած, ինչ դրընդոց էր որ բարձրացաւ. կասես երկինք գիտենք ժաժ եկան:

— Քու ինչ ըռեխդ է Զը մեզը դեերի քրոջը փախցնել Խարազի տղի ձեռից, երբ շնորհք չունես նրա ընկերների ուտելիքն էլ հասցնել:

Եօթգլխանին քաւթառել էր՝ դեռ իր օրում ալդպիսի դմբուղ, ալդպէս զօրեղ կուտած հարուած չէր կերել: Էլ չիմացաւ, արճիճ էր, պողւատ էր, որ դիպչելուն պէս աչքերը սեացաւ ու տափէն կպաւ: Շատ կմնար վէր ընկած, բայց

հէնց որ Ապաւէնը ծղրտաց թէ՝ «շուտ արա, թէ չէ մէկէլ որ խիեմ, կկորչես իստիպուճախը» դեր վեր կացաւ ու ազողորմ դիմեց ժողովրդին:

— Ով որ թագաւորին սիրում էր ու ինձ էլ նրա հաւատարիմ ծառալին մեղք է գալիս՝ թող գնայ իր տանից որքան կարող է ուտելիք ու խմելիք բերի:

Այս ազաշանքի վրայ ժողովուած մարդիկ ցրուեցին ու տներից խոնչով, խուրջինով, մաժրաթով ուտելիք, բղուղով, հոթով, պուլկով, կժով խմելիք բերին, առաջները շարեցին: ծմբակուլը խժուեց, Ծովակուլն էլ մրզոքեց: Տնաշէնների փոքը հոր էր, ձոր էր, չէր լցում. մինը մնացած փշրանքներն էր հաւաքում, միւսը պուլկըների պուռնդներն էր լիզում: Դեք մնացել էր կրակի մէջ, ինքն իրեն մտածում էր.

— Թագաւորն այն էր, որ մեռաւ. հարսն էլ այս է, սըրանց ձեռքին է, իմ օգուտն ինչ է, որ պատուհասը քաշում եմ: Մտածեց որ գլուխը կենդան սրանց ձեռից պըճացնի, ամենից լաւ է: Ոչ քաղաքում էր պաշար մնացել, ոչ մօտակայ գիւղերում. երեք օրում վեց հոգին բոլորը հատացրել էին: Ի հարկէ մեծ մասամբ խժողները Ծովակուլն ու ծրմբակուլն էին: Մնացել էր միայն մի գիւղ գետի այն կողմում, որի ամբարները անարատ մնացել էին: Բայց ինչ կանես, վարար ջուրը արիւն էր բերում: Ով սիրտ կանէր զըժժոն գետի մէջ մանել, որ սար ու քոլ պիկած, ծառ ու քար իրար գլխի տալով, լելկոխ անելով ճուրնչելով սըկում էր: Ինչ անեն, ինչ չանեն, բերին եօթ գլխանի դեկին գցեցին մէջը: Սա տակն արեց ու չերևաց: Կարծելով որ ներքեւ դուրս եկած կլինի, Ապաւէնը ընկերներով երկար սպասեց նրա վերադարձին, բայց չէ, այն գնալն էր, ինչ գնաց: Բոլոր ժողովուրդը փախել ծակ ու ծուկն էին մտել թագաւորի մահից յետոյ պալատականներն էլ ցրուել էին ամեն ինչ անտէր անտիրական թողել: Ապաւէնը փնդուել գտել էր այն սենեակը, ուր փակուած էր Հուրհերը.

— Աղնիւ և հաւատարիմ տէգը, ուրախագին բացականչեց Հուրհերը, դարձեալ դու ես աշխարհէ աշխարհ ընկել և իմ ցաւը քաշում։ Ամօթ իմ եղբայրներին։

Ապաւէնն ասեց.

— Խելօք Հուրհերը, դրա ժամանակը չէ, այէտք է շտապենք, ճանաներս երկար է, միջոցը կարճ, յետոյ շատ կիօսենք, երբ կաշխատենք շուտ վրայ հասնել և Փափագին կենդան գտնել։ Եղբայրներդ նրա վրայ շատ են զարացած. մի ամիս ժամանակամիջոց եմ խնդրել քեզ գտնելու համար։

Ապաւէնը Հուրհերին լոյս հանելով ներկայացրեց իր ուղեկիցներին. հրամայեց որ Կոռոմբալ թագաւորի բոլոր գանձերը դուրս տան ալահարաններից և հակներ կապելով ջորիների վրայ բարձեն պատուիթեց թագաւորի ձիերից երկու ընտիրները թամբել իր և Հուրհերի համար։

— Դէ որդիք, մտէք ժամ աղօժելու, ասեց տէրտէրը։ Ժամ մտան։ Տէրտէրը գոտիկը պատ գցեց, շալակն առաւ ժամը իր ժամուռներով ու Տէր ուղղեա ասելով իր աշխարհի ճամբէն ըռնեց։ Աստուած լինի դրանց առաջնորդը։

Ուրախ և զուարթ հասաւ երէցի շէնը. Տէրտէրը յետ նայեց իր գեղերին, բայց կանդ չառաւ։ Ապաւէնը թէ՝

— Աջիդ մատաղ, տէրտէր, մեղք է ժողովուրդը, այսքան ժամանակ նրանց անժամ, անպատարագ ես թողել, հիմի էլ ուղում ես մեզ հետ գնլ չէ, շատ շնորհակալ եմ, գնա, հովուիր քո բարեպաշտ հօտը։ Աստուած քեզպէսները ժողովը միջից անպակաս անի։

Ամէնքն էլ տէրտէրի աջն առան. Ապաւէնը մի ջորուքեռ ոսկի աջահամբոյր տուեց։

— Աստուած օրհնի ձեզ, ասեց երէցն ու ժամը շալակած վազ տուեց դիմացի շէնը, ուր ժողովուրդը պատարագի էր սպասում։

Ապաւէնը ձի նստեց, նստացրեց և Հուրհերին. ճամբէն շարունակեցին. Երգչի աշխարհին մօտենում էին. ծառերի

տերեները ճլորած, թումոշկած, ծաղկներն ու խոտերը մնացել էին սքլած, ցրտատար եղածի նման ոչ հոտ ունեին, ոչ համ։ Անտառները լուիկ մնջիկ, ոչ ձայն կար, ոչ ձուն. Երգեցիկ թռչունները սւասրտել գլխները ծռել, թևները քաշ արել, աչքները ճամբէ վրայ սպասում էին։ Կարծես մէկի կարօտ քաշելիս, որ նրա դարդու լեռ ու քար, անտառ ու ծառ, իրենց շնչաւորներով սև սուգ էին նստել։ Սլու մէկը մեր ածոլերգիչն էր, որ մտադիր էր ճամբէն շարունակել Ապաւէնի հետ, որ նրան շատ տեսնի, նրա քազցը զրոյցը երկար լսի, բայց Ապաւէնն ասեց.

— Զուր տեղ մըջիմ չեմ կոխած, ինչպէս կարող եմ ոյսքան արարածների մեղքը մըտնել. մեծապէս շնորհակալ եմ։

Այս խօսքի վրայ երգիչ-ածոլը ցնծագին Վարդաբլուրն ելաւ, աչքը որ վարդապատ դաշտերին, ծաղկափթիթ գետափերին չգցեց ու մատները լարերին քաշեց, ինչ տեսակ դոնմի ու դրոնմի ասես, զլընդ ու ծլընդ ասես, կլկլոց ու գլգլոց ասես որ չհանեց։ Մի բոպէում մեռած դրախտը կենդանացաւ, քաշ վալերից բուրմունքն ու զեփիւռը իրար խըտիս եղած մըլալով բարձրացան վարդաբլուրի կատարը։ Նրա Հրեշտակաձայն երգեցողութեան վրայ ծառերի ոստերը նորից ուշի գալով իրար կուլով ընկան. տերեները խշացին, լուած առուների ջրերը վըրխալէ իրենց քչքչոցը շարունակեցին. Երգեցիկ թռչունները թեւին անելով, ծլվլալով եկան երգչի չորս կողմը պատ ընկան, շարոտուեցին։ ճամբորդներն այդ ծլվլոցի, ժվժվոցի, քչքչոցի ուրախ ձայներից զմալելով միաբերան շնորհակալութիւն արին, իսկ Ապաւէնը թէ՝

— Վարդաբլուրը կենդան մնայ քեզանսպ, Աստուած տայ, քու շնորհքը վարդաբլուրի թռոներն ու ծռները տարածեն ողջ աշխարհում։ Շնորհքը սփռուի և դրախտանման վարդաբլուրի հոչակը աճի, մեծանայ։

Մնաս բարեւ ասեցին ամենքը և անցան առաջ։ Շատ սար ու ձոր, շատ շէն ու գեղ անցկացած՝ քարուանը դէմ

առաւ մի ծովի: Նեղն ընկած՝ չէին իմանում ինչ անեն: Փարուանի ետնից Ծովակուլը ձեռովի արեց.

—Սպասեցէք, դրա հանգը ես գիտեմ: Արայ ընկաւ ծովին, ծարաւ գոմշի պէս պինչը վրէն դրեց, ցամաքացրեց ու բացականչեց.

—Ուխայ, փռանց այսօր խմած ջուրը ջանովս գնաց: Ուրիշ աշխարհի ջրերը աղու են, գառն են: Իէ հիմի անվլնաս անցկացէք:

Քարուանը անցնելուց յետոյ Ծովակուլը կամենում էր ուղեկցել. Սպաւէնն ասեց.

—Ազնիւ բարեկամ, ինձ պատուելու համար շատ նեղութիւն քաշեցիր, խնդրում եմ այսուհետեւ ծովատեղից չը հեռանաս:

Ծովակուլը յօժարուեց մնալու ու խմած ջրի ծանրութիւնից հանգիստ առնելու համար պարանուեց, մնաց, իսկ միւսները շարունակեցին ճամբէն. Հասան ճմբակուլի երկիրը. տեսան գութանը ոչ դաշտ է թողել ոչ հանդ: Այս գլխից այն գլուխ վարել են ուշակալ լծկանները ու քրտնքում մը խուել ճմբակուլին Սպաւէնն ասեց.

—Վարնորդ եղբայր, անչափ շնորհակալ եմ. տայ Աստուած, լծկաններիդ քրտինքը քեզ արժանի լինի, որդիքդ ու թոռներդ էլ քեզ պէս հալալ աշխատանք սիրեն ու մաճք բաց չթողեն:

Ճմբակուլը երկար ժամանակ անօթի էր. հէնց բաժանուեց քարուանից թէ չէ, վազեց ծրի գլուխը ու ճմբները կուլ տալով հասաւ գութանին:

Հետեւեալ օրը վաղ-վաղ Ականջեղը մօտեցաւ Սպաւէնին.

—Ողջումախպէրդ Գըմբ-գըմբ ձորում նեղ տեղն է, հասիր:

Սպաւէնը շատ ստիպեց որ պարզ ասի, թէ ինչ է եղել, ով է նեղացնում, Ականջեղը չասեց:

—Մէնակ գնամ, թէ ընկերով:

—Հուրհերին էլ հետդ վերցնես, լաւ կը լինի, միախ շնւտ հասիր:

—Վայ քու մէջքը չկոտրի, այս ինչ ասեցիր: Հուրհեր ձին նստիր, շտամպենք:

Կարգադրեց որ Ականջեղը քարուանը բերի ահալի տեղերը անցկացնի: Իրենք թռան, այնպէս թռան, որ թռչունն իր թեռվ, օձն իր պորտով չէին կարող նրանց կրունկը կոխել: Հէնց որ Սըռի գլուխն ելան՝ ներքեւում նկատեցին թէժացրած խարոյկ: Ապաւէնի սրտի քիթը մզկտաց, ախ արեց, գլուխը կորցրածի պէս շտամպեց: Այն ժամանակ վրայ հասաւ, որ վեց դեր չորս ու բոլոր շարոտուած տմենափոքրին հարկադրում են, կապկապուած Փափազի վզին դանակ քսել, ուրովհետեւ երեսուն օրը լրանում էր և Սպաւէնը չկար: Կըրտսեր դեր դողում էր եղբայրների սպառնալիքից, բայց Փափազի տիրամած դէմքին նայելիս սրտի արիւնը թան էր դառնում, ձեռները թուլանում: Փափազը կապկապուած ոտնու ձեռովի աչքերը Սըռին էր գցել, Սպաւէնի գալուն սպասում: Շատ էլ հոգը չէր, որ մորթում են, այլ տանջւում էր որ Հուրհերին ու Սպաւէնին կարօտ սրտով է մեռնում:

Յանկարծակի որ մի լախա չտրաքեց գևերի գլխներին, հէնց իմացան թէ երկինքը փուլ եկաւ, ու որ մի գոռոց չը լսեցին թէ «ախ անհամբերներ, ախ տմարդներ», գեերը տափից կապան ու ամօթից թէ երկիւզից չէին ուզում գլխները բարձրացնել: Փափազն ինչպէս մօրից նոր ծնուած, կապերից ազատուելուց յետոյ ընկաւ Սպաւէնի վզով, չէր իմանում սրտի փուքը, վիշտն ու կտրօտը ինչպէս փարատի: Զափազանց ուրախութիւնից համ լաց էր լինում, համ ծիծաղում: Սպաւէնը լախառվ գեերին մահուան տուր ուտացնելուց յետոյ՝ զալրագին խօսեց.

—Ասենք թէ մի ամիս ժամանակ եմ տուել, բայց դուք ինչ անհոգի, անդուժն էք եղել, որ մի օր գոնէ խնայել

չէք. Բա՛ փեսայութեանը ալդքան պատիւ չկար: Դրա գէմ ասենք, զայրացած էիք, բա՛ ինձ էլ խաթր չկար:

Եւ Փափագի բակ ընկած աչքերը տեսնելով առաւել մսրմոքուեց Ապաւէնը, հէնց ձեռը տարաւ սրին, որ բացի կը տսերից բոլոր դեերի զլիները տայ ու գրանով սրտի զնջղին-ջը հանի, մի քնքոյշ ձեռ նրա թեր բունեց.

— Դրանք այնքան յանցաւոր են, որ ամօթից երեսիդ նայել չեն կարողանում: Դրանց արիւնն ինձ բաշխիր, յոյս ունիմ Փափագն էլ խօսքիս ոյժ կտար:

Ապաւէնը յետ նայեց, Հուրհերին տեսնելով բարկութիւնը մեղմացրեց, բայց չը ներեց նրանց: Միայն կաղ գեի հետ ասեց, խօսեց:

Զըմբ-զըմբ գեերը Փափագի ոտն ընկան, միջնորդ գցեցին, որ Ապաւէնի սիրտն առնի: Սա պայման դրեց, «թող իւրաքանչիւրը յօժարտկամ քառասուն լախտ ուտի. հաշտութիւնը կկայտնալ:

Սմեն մինն էլ կաղ գեի ձեռով քառասուն լախտի յարուած կերան: Երեք օր յետոյ Ականջեղն եկաւ քարուանի հետ, ու շնորհակալութեամբ ու ընծաներով վերադարձաւ իր տեղը:

Միւս օրը գեերն սկսեցին իրենց բաժին հարսանիքի ուրախութիւնն անել, յետոյ ճամբու գ'ել քրոջը: Ուրախ կերուխումը եօթն օր եօթ գիշեր շարունակելուց յետոյ երեսուն ջորի անգին հարսանիթիւն բեռնած խառնեցին քառուանի հետ:

Ապաւէնն ու Փափագը Հուրհերի հետ ձիան նստած «մնաս բարե» ասին Զըմբ-զըմբ գեերին, Գըմբ-զըմբ ձորերին ու ճամբաւ ընկան: Կաղ գեը մինչև Մեծ-սըռի գլուխը ընկերացաւ և իջնելու գիւրին ճամբէն ցոյց տուեց:

Քարուանն այնքան հոգուց էր բաղկացած, որ իշխանած տեղը ահագին շէն էր կազմում: Աստուած լինի հարսանիքաւորների հետ:

### Ժամբ.

Ճամբայ գնալիս Ապաւէնի աչքը չէր գալիս ոչ գանձը, ոչ ահագին քարուանը: Նրա հոգսի առարկան Հուրհերն էր. մօր պէտ խնամք էր տանում, որ ապահով ու անվնաս տեղ հասցնի, այնուհետեւ ինչ պատուհան ուզում է՝ իր գլխին գայ: Զգում էր, որ աշխարհի ամենաբախտաւորն ինքը գտնուեց Հուրհերին դեերի ճանկից հանելու, բայց այն էլ գիտէր, որ ամեն մի թանգագին բան հազարաւոր փորձանքների ենթակալ է: Միշտ զգոյշ էր լինսւմ ուտել-խմելու մէջ, որ քունը շատ չմօտենայ: Ճամբին մի աչքը չորս արած էր գնում, ոչ ոքի չէր հաւատում. գիշերը ուր էլ մթնում էր՝ Փափագին ջոկ, Հուրհերին ջոկ քնացնում էր ու ինքը արթուն ոտի վրայ հսկում:

Անփորձ, անվնաս արդէն մօտեցել էին Պայ-պայ թագաւորի հողերին: Միշտ ժամանակ, երբ ամենը անուշ քնած էին, Ապաւէնը մի թամբը լսեց: Մի ծիտ, աչքերը չալիկ մալիկ, թեերը սսկու պէտ շողզողուն, մթնում ճրագի նման վառվառուն, կլափը բաց արեց ու այս խօսեց:

— Քաջ Ապաւէն, չար նազիրից զգոյշ կաց. Նրա թակարդը ընկնես: Նա մտադիր էր իւր տգեղ աղջիկը Փափագի վիզը կապել: Երբ ալդ կապը քեզանով քանդուեց՝ ալժմ կամենում է վըէժինդիր լինել: Ձեզ դիմաւորելու է գալիս և ձի է ընծայ բերում Փափագին: Թամբի մէջ պահուստ կտյ. հէնց օր Փափագը միամտաբար հեծնի՝ ձին կատաղութեամբ պէտք է արշաւի և Փափագին սար ու քարով տայ: Նենդաւոր նազիրի աղջիկը Հուրհերի համար մի զոյտ ոսկէկար մաշիկ է բերում ընծայ: Յալտնիր Հուրհերին արտաքին փալլով չխաբուի ու չհագնի. թէ չէ՝ նրանց մէջ տեղաւորած իժօձերից կխալթուի ու կմեռնի: Աչքաբաց եղիր, հոգսերդ զուր շանցնեն: Ալդ պատուէրները որ քեզ յալտնեցի՝ պէտք

է պահես քո մէջ, Փափագին անդամ չպէտք է ասես, թէ  
չէ քար կդառնաս:

Ապաւէնը չգիտէր ոնց շնորհակալութիւն անի այդ  
գաղտնիքներն իմանալու համար: Մինչև շուրջը աչք կածէր,  
որ իմանալ, թէ իրենից աւելի խօ ոքմին չլսեց—դառնալով  
նկատեց որ էլ քաղցլախօս ծիտը չկար: Նաև ափսոսաց:

Առաւօտը բացուելուն պէս քարուանը առաջ գցեց, ի-  
րենք ետ ընկան: Զիաւորը վաղուց էր շտապել թագաւորի  
մօտ և ականջաբռնուկ արել Փափագի գալու մասին: Ողջ  
քաղաքը իրար գլխով էր անցել. ամենն էլ շտապում էին  
Փափագին դիմաւորելու և նրա բաղդաւորութիւնը շնորհա-  
ւորելու:

Ապաւէնը քաղաքից դուրս բարձրաւանդակի վրայ վրան-  
ները վէր ժողել, դրօշակն էլ ցցել էր: Ժողովուրդը գլխա-  
բաց սպասում էր ներքեւ նորապսակներին տեսնելու համար:  
Փափագն ու Հուրհերը վրանի մէջն էին, Ապաւէնը դուրսը  
պահապանի պէս կանգնած: Թագաւորը մօտենալուն պէս՝  
չոքեց ոտն ու ձեռը պաչեց, թագաւորն էլ նրա ճակատից  
համբուրելով մտաւ վրանը և նորապսակներին ողջունեց, հո-  
գու մէջ ցնծալով, որ համ որդին սպանդըխտութիւնից ան-  
վընաս է վերադարձել համ էլ աշխարհիս կուռածաղիկ աղջ-  
կան հետն է բերել: Աստղուն հազար բերան փառք տուեց  
ու շնորհակալութեան փոխարէն Ապաւէնին նորից գրկեց.

— Ապրես, հաւատարիմ ողջումախպէր, երեստեսնուկի  
ամենամեծ ընծան քեզ է արժան. ինչ կուզես որ տամ, այ  
վեհանձն երիտասարդ:

— Թագաւորն ապրած կենալ, ինչ էլ ուզեմ նորապսակ-  
ների օգտին պէտք է ուզեմ:

— Ում օգտին ուզում ես, ուզիր, միայն այնպէս բան  
խնդրիր, որ քո արած ծառալութեան արժանաւոր վարձ լինի:

— Նաև բարի, երբ իմ կամքին ես թողում, խնդրում եմ

ալսօր անպայման իրաւունք տաս, ինչ հրամայեմ՝ կատա-  
րուի:

— Ուրախութեամբ տուի, վրայ բերեց թագաւորը:

Ապաւէնը թագաւորին վրանում թողնելով դուրս եկաւ  
հարսընտեսի, վեսատեսի համար բերած ընծաներն ընդունե-  
լու: Նախ ընդունեց նազիրին, որ շատ վշտացել էր, թէ ին-  
չու ընդունելութիւնը ուշացնում են: Սրա ընծան մի ամե-  
հի ձի էր, որի փրփրակալած սանձից երկու հոգի բռնած  
առաջ բերին: Գեղեցկութեան մաքրութեան խօսք չը կար.  
կասես ամպերի մէջ լուացած, հանած, բայց այնպէս էր փըռ-  
ռացնում ու բաշը թօթւում, կարծես ուզում էր կողքի մարդ-  
կանց կուլ տալ: Մինն ասում էր, ով գիտէ Զարզունի գաշ-  
տը մի շնչում անցնի, մինը թէ հէ կասես Մարալ-Դիւնովի  
լանջերում ծնած ու Ղըխբուլաղի ջրերով ու խոտերով սր-  
նուած:

— Զին պահեցէք, հրամայեց Ապաւէնը, մինչև թագա-  
ւորազնի վրանից ելնելը:

Նազիրին ներս ընդունեց: Եկաւ աղջիկը արծաթէ մա-  
տուցարանը ձեռին, ոսկէկար զուգ մաշիկը մարգարտահիւս  
քօղով ծածկած:

— Նազիրի օրիորդ, խնդրեմ այդ ընծան ինձ տուէք, դուք  
ներս մտէք, ասեց Ապաւէնը: Երբ բարձրաստիճան հիւրերի  
ալցելութիւնը վերջացաւ՝ Ապաւէնը ժողովրդի ցանկութիւնը  
հաղորդեց Փափագին, որ գուրս գալ, երևալ:

Կարգադրել էր, որ բարձրաւանդակից իջնելիս Փափագին  
պետք է ուղեկցէր նազիրը, իսկ Հուրհերին վրանից ելնելիս  
պէտք է ընկերակցէր նազիրի աղջիկը: Այդ պատճառով Ապա-  
ւէնը բարձրածայն լայտնեց:

— Թող Փափագին ընկերակցի նազիրը իր ընծայ բերած  
ձիով, որ հաւաստիանանք թէ տեսքին համեմատ շնորհք  
ունի, իսկ նորա հարսի հետ զբօսանքի թող գնայ նազիրի  
աղջիկը իր նուիրաբերած մաշկները հագին և քաղցը զլոյց-

ներով զբաղեցնի, մինչև թագաւորի հետ ասելիքս աւարտեմ:

Սյա ծանուցման առիթով միւս ընծալաբեր իշխանները դժգոհացին Ապաւէնի դէմ, թէ ինչու իրենց էլ այդպէս անուն-անուն չի կանչում և պատուասիրում: Զէին իմանում որ նազիրի սրտում արիւնը թան էր դառել երկիւղից, որ համ ինքն է փորձանքի մէջ ընկնելու, համ իւր տղջիկը, որն անտեղեակ է թէ մաշիկի մէջ օձ կայ պահուած:

Բարձրագոյն հրաման էր. պէտք է կատարուէր: Նազիրը լալագին սրտով ձին հեծաւ, որ սկզբում դեռ հանդարտ էր. հանդիսականներից ոմանք նախանձում, ոմանք երանի էին տալիս նրան: Թագաւորազը առաջ անցաւ սովորական ձիով: Հարսնացուն ևս դուրս եկաւ ճիշելու իշխանազուն հարսների ու աղջիկների հետ, որոնք բացի նազիրի տրաբքէշ աղջրեանից Հուրցերի շքեղ ծամերը, չինարի հասակը. սիկաճեմ գնացքը տեսնելով ինդում, ցնծում էին: Միջոցը մի քառորդ ժամ չէր անցել, տեսան նազիրի կատաղի ձին ագին տրաքացնելով, բերան ու սանձ փրփրակալած ծլկում է դէպի ժողովուրդը: Ապաւէնը բռնել տուեց ձին, քաշեց ծածուկ տեղ, խորդախ թամքը փոխեց ուրիշը դրեց: Թագաւորազնը մարդիկ էր ուղարկել նազիրի ետնից, որ իմանան մէջ կատաղի ձին ուր փախցրեց: Եկան, լուր տուին, որ նազիրը ջարդուած ընկած է անդունդի մէջ: Մինչև սրանք այդ դըժքադդ դէպիքի մանրամասնութեամբ էին հետաքըրքըլուում՝ յանկարծ մի օրիորդ շնչասպառ վագելով եկաւ յայտնեց.

— Նազիրի աղջիկը կլափին է տալիս, հօրն ուզում է, շտապեցէք, հօրէս կը մեռնի:

Մարդ գնաց սրան էլ բերեց մտհացած: Ոսկեկար մաշկները Ապաւէնը գցեց թէժ կրակի մէջ. կրակից մի ուժգին տրաքոց վեր եղաւ և երկու ոլորուն պէծեր տեղն ու տեղը մըճեղ կտրուեցին: Աղեղի ծալրով մորմոտը ետ ետ անել տուեց, միջից գուրս եկան մաշկները աւելի սիրուն, աւելի փալուն: Ամենքն էլ այս տեսիւքի վրայ երեսները խաչակն-

քում էին: Այս փորձանքներն անցնելուց լետոյ թագաւորը հրամայեց ոսկի և արծաթ բաժանել խմբուած ժողովրդին: Փափագը լուռ կացած չէր կարողանում բան հասկանալ պատահարից, իսկ Ապաւէնն աւելի ինդումերես դարձած այս ու այն կարգագրութիւններն անելով մաշկները Հուրցերին հազցրեց, ինքն էլ նազիրին խորտակող ձին նստեց խուռն բազմութեան նվաճնաների ուղեկցութեամբ ողջ և անվտանգ մտան քաղաքը:

Նորից սկսուեց հարսանիքի հանդէսը. ուրախ կերուխումը շարունակեց եօթն օր եօթ գիշեր: Ո՞վ ասես, որ Ապաւէնին չէր գովում, ամենքն էլ գլխովը պտոյտ էին գալիս և նրա հետ մի բերան խօսելը մեծ շնորհք համարում: Թագաւորին էլ ասել չէր ուզիլ, աչքին աչք էր բուել, ոտին ոտքը: Ծեր տեղովը առուղացել, զգրիկացել էր: Ապաւէնին սուրբ-սուրբ էր անում, այնքան պատւում, սիրում էր, որ ամեն օր առաջին բարի լոյսը նրան էր տալիս: Թէպէտ Փափագին ու Հուրցերին աչքի լուսից շատ էր ուզում, բայց սեղանի վրայ առաջին ազիզ կտորը Ապաւէնին էր համեցէք անում, նրա սիրտը շահում:

Թագուհին չկար. մինուճարի դարդը և կարօտը նրան գերեզման էին տարել: Դրա մահուան պատճառը մեծ մասով նազիրի հնարովի լուրերն էին, որոնք գուժում էին Փափագի ու Ապաւէնի գլխին եկած քամբախտութիւնները:

Թէպէտ նազիրը իւր արժանի պատիմն ստացաւ, բայց հակառակ սատանէն էլ մտաւ Փափագի սիրտը և մի մեծ դժբակտութիւն առաջացրեց: Ե՞րբ սատանէն չի հակառակ եղել, սէրը ատելութեան փոխել, բաղդաւորին դժբակտացրել, ծիծաղոցի արժասուքն երեսն ի վեր արել: Դեռ մի ամիս հազիւ անցած կլինէր՝ Փափագը եկաւ Ապաւէնի մօտ.

— Ողջումախովէր, գու ինձ սիրում ես, չէ:

— Հա, ի՞նչ է, ինչու համար ես այդպէս խիստ հարցում, խօսեց Ապաւէնը, իսկոյն գուշակելով Փափագի միտքը:

— Աշխարհն էլ գիտէ, թէ ինչե՞ր ես արել իմ սիրոյ համար. գիտեմ, ինձնից բան խնայողը չես, խնդրում եմ առանց ծածկելու ինձ բացատրես նազերի ու իւր աղջկայ մահուան պատճառները: Ոչով բան չհասկացաւ. բայց ես նըկատեցի, որ այդտեղ մի խորհրդաւոր բան կար: Դու այդ գիտէիր սկզբեց ու ծածկում էր: Ասա խնդրում եմ, ողջումախապէր ջան: Այս ասելով փարուեց Ապաւէնի վզով:

— Սիրելի Փափագ, դեռ կենդան ժամանակները չէի ուղում նազերի ու աղջկայ անունը լսել որովհետեւ մի անգամ աչքիս գէշ էին թուացել, ինչ շատ սիրելի են քեզ, որ այժմ էլ նրանց մահուան պատճառն ես հարց ու փորձ անում: Հարցում ես, բարի անձերի մասին հարցրու, աչքիս վրայ, թէ չէ դրսնց պէսներից պատուհասը ծլծլում է:

— Մեռել են պրճել, ինչ վնաս պէտք է գայ և եկած վնասը ինչ պէտք է լինի, որ երկու խօսքով չես ուղում հետաքրքրութիւնս յագեցնես: Զէ որ մինչև մահուան օրը ողջումախապօր կեանքը ողջումախապօր համար ետ դրած պէտք է լինի:

Ապաւէնը չէր կարող խնդիրը բաց է ի բաց մերժել, ոչ էլ աշկարայ ասել, թէ այդ գաղտնիք է, որ յայտնելով պէտք է քարանամ. ուստի դարձաւ ասեց.

— Փափագ ջան, որ շատ ստիպում ես, կասեմ, դարձեալ փորձով կտեսնես, որ կեանքս քեզնից խնայող չեմ, բայց յետոյ դու գիտես:

— Լաւ, լաւ, թող ես գիտենամ, պատասխանեց Փափագը ուրախ հետաքրքրութիւնով, դու ասելուդ շուտ ասա, որ Հուրհերը վրայ չհասնի:

Ապաւէնը կրկնեց մեղմ սպառնալիքը:

— Փափագ, տես, ես պատմելու եմ, բայց խիստ ես փոշմանելու: Եւ պատմեց ոսկեփայլ Ծիտիկի պատուէրները:

— Նազերի ընծայած ձին քեզ էլ իրեն օրը պէտք է դցէր: Նրա թամբը քրքրեցի, զարհուրելի սրհարներ գտայ,

որոնք տանջել էին ձիու քնքով մէջքը: Եթէ ասածիս կասկածում ես, կարող ես անձամբ տեսնել: Նոյն ձին ես նստեցի թամբը փոխած. տեսաք ինչպէս խելօք էր: Նրա աղջիկը Հուրհերին երեստեսուկ բերեց մի զորդ մաշիկ: Գաղտնիքը Ծիտիկի միջոցով ինձ յալանի էր: Հագցրի բերողին և տեսաք ինչ օրի հասաւ: Կրակի մէջ տրաքոցը իժի ճուտն էր, որ մաշիկի մէջ դրած էր: Նոյն մաշիկը հագցրի Հուրհերին, ինչո՞ւ մի վնաս չեղաւ:

Փափագը հետաքրքրութիւնով լսում էր և չէր նկատել ոչինչ: Ապաւէնը խօսքն աւարտելուց յետոյ մի երկար ախքաշեց և մնաց լուռած, քա..քա..ցած:

Փափագը պաշարող մտածմունքից սթափուելով խօսեց.

— Բայ, ողջումախապէր ջան, այդքան լաւութիւնն էլ նոր ես արել, ես դեռ անտեղեակ եմ: Ամեն կողմով ես շնորհապարտ եմ քեզ, մի ճանապարհ ցոյց տուր, ինքս էլ փոխարինեմ: Ի՞նչ անեմ: Փող տամ, ամաչում եմ, չէ որ կիսրար եղբայր ենք: Հարիւր անգամ կեանքդ ինձ համար վտանգի ես ենթարկել: Լեզուով շարունակ ասելը «սիրում եմ»՝ արժէք չունի: Ի՞նչ կլինի քեզ համար այնպիսի բան հարկաւոր լինի, որ ես էլ քու արած լաւութեան հարիւրելորդ մասը գործով ցոյց տամ: Գանձ մսիսեմ: Եթէ գանձը չբաւականանայ, թագաւորութիւնս էլ վրէն զնեմ. Եթէ դրանով էլ գըլուխ չգայ, կեանքս ու արևս քու սիրուն մատադ տամ, որ քու սիրտն էլ ճոխանայ, ուրախանայ:

Այս խօսքերը արտասանելուց յետոյ Փափագը կարմրատակած գլուխը բարձրացրեց, Ապաւէնի աչք-ունքին նայեց.

— Ճան հանիր, ողջումախապէր ջան, ինչո՞ւ լուռ ես, Հարցրեց Փափագը երեսն ի վեր նայելով. Մի ըոպէ զննող հայեացք գցելով երբ տխուր իրողութեանը վերահասու եղաւ, երկիւղից փայտ կտրուեց, մնաց արիւնալարտ:

Նոր գլխի ընկաւ, թէ ինչո՞ւ խեղճ Ապաւէնը նախազգուշացնում էր վնաս քաշելուց: Եատ արտասուք չափեց,

շատ փոշմանեց, թէ ինչու ստիպեց նրան գաղտնիքը բանաւու, բայց էլ ետնից չհասաւ: Խելքը կորցրածի պէս չկարողացաւ ոտ ոտի առաջ դնել. առաջը չոքեց. սկսեց գլխին, կրծքին խփելը իրեն դատապարտել և ազիսղորմ ձայնով Աստըծուն աղաչանք անել:

Այս լացի ու սուզի վրայ ներս թափուեցին թագուըրը Հուրհերը և պալատականները: Ամենքն էլ պատահարքը տեսնելով մնացին զարհութած: Փափագը լացը ուժով դադարեցնելով սկսեց քարանալու պատճառը պատմել: Լսողները աւելի սկսեցին ցաւել, մղկտալ, էլ հովանալու ճար չէին գտնում: Նրանց թափած արտասուքից քարէ արձանն ողովուել էր: Գիշեր-ցերեկ Փափագը ողջումախպօր արձանի մօտից չէր պոկ գալիս. անհաց, աննիւթ մնալէն բարակել մասունք էր դառել:

Թագաւորն ու միւսները այն կողմը մնան, ջրատար Հուրհերը ձեռից գնացել էր, կասես արևը խաւարած: Ախորժակն էլ էր կտրուել, ոտի թեն էլ, մղկըտալէն ու լալէն գիշերը ծով էր շինում անկողինը ու քիչ էր մնում արտասընքում խեղդուի:

Թագաւորը գիտուն, բանիմաց մարդիկ կանչեց, գանձը առաջները թափեց, որ նրա սիրու ամեն հնար գործ դնեն, կենդանացնելու հնար գտնեն: Դէս չարչարուեցին, գէն չարչարուեցին — մի յոյ չեղաւ: Թագաւորի դուռը մէկ էր, եկողը օրեկան հարիւր ու հազար. խաչի ուխտաւորի պէս գալիս նայում էին քարէ արձանին, լալիս ու ափսոսալով իրենց տները դառնում: Չտեսնողներն էլ նկարագիրը լսելով ալբում, փոթոթւում էին: Փափագը տեսնելով որ ժողովրդի ձայնը իրեն դատապարտում է քարացնելու համար՝ կանգնեց մի օր հօրն ասեց.

— Թագաւորն ապրած կենալ, ինչ արի, ես արի: Ա՛լս կէ՞ անելով ոքմին իւր մեռած եղբօրը չի կենդանացրել: Արա ինձ արած բարութիւնների կէ՞ո՞ր հարազատ եղբայրը

չէր անիլ: Ես սրան կեանքով եմ պարտական. Աստուած առաջս է բերել այս գէպքը, սր գործով ցոլց տամ, թէ ես էլ անձնուիրաբար սիրել գիտեմ և ընդունակ եմ տեղն եկած տեղը ազիզ ողջումախպօր համար կեանք ետ դնել: Երկաթէ տրեխներ կհագնեմ, աշխարհէ աշխարհ ման կդամ մի ճար ու հնար գտնելու համար: Ինձ համար կործանուած է թագաւորութիւնը, քանի որ ողջումախպօրս քաղցը արևը ես խաւարեցրի լիմար հետաքրքրութիւնովս: Իմ կեանքը ինչի նման կլինի, երբ տմեն առաւօտ Ապաւէնի արձանը տեսնելով պէտք է անվերջ տիրեմ ու առանց սփոփուելու դառնապէս զղամ արածիս վրայ:

Փափագը ճամբի սլատրաստութիւն տեսաւ, կոտրած սըրտով հօրն ու պալատականներին բարեց և ժամանակ զրեց մինչև նախրաթող, բայց չէր իմանում ինչ հանգի տուն մտնի, Հուրհերին «մնաս բարե» ասի: Հա, իսկոյն Հուրհերն ինքը գէմն ելաւ ու իմանալով նրա մտադրութիւնը՝ միխթարիչ հրեշտակի պէս նրան քաջալեց:

— Փափագ ջան, ալժմ աչքումս դու աւելի բարձր ես, քան թէ առաջ: Քու արած վճիռը ինձ տիրեցնելու փոխարէն ուրախացնում է: Եթէ օտարութեան մէջ մի փողձանքի կհանգիպես, կը միխթարուիմ գոնէ նրանով, որ ամուսինս իւր պարտքը կատարեց գէպի իւր ամենահաւատարիմ ընկերը: Իսկ եթէ Աստուած մեղք կգալ մուրազոր ողջումախպօրդ և մի ճարի դուռը նշանց կըտալ քեզ՝ հաւատացնում եմ որ ունեցած սէրս գէպի քեզ եօթն անգամ կըփարարի, կը բազմապատկուի: Այն ժամանակ կենդանացող, յարութիւն առնողը սրտով՝ ես կըլինիմ, մարմնով Ապաւէնը: Ուրեմն գնա, սիրելիս, ինչ որ չես փորձել, Աստուած հանգիպեցնում է, որ անձնուեր ընկերի արժէքը, տեղը իմանաս: Եթէ ողջումախպօրդ պէս քո սէրն էլ անկեղծ է՝ յոյս ունիմ, որ Աստուած ամօթով չի թողնիլ:

Համբուրեց Հուրհերը և ճամբուր դրեց Փափագին հանգիստ սրտով:

Փափագը հասարակ շորով, երկաթէ տրեխներով, առանց ուղեկցի, Ապաւէնի նետ աղեղը վերցրած՝ գլուխը փէշը դրեց ու իր աշխարհից դուրս գնաց:

### Ժ.Պ.

Փափագը հօր տանից դուրս գալով օրերով, շաբաթներով, ամիսներով շրջեց, շրջրջեց. միանգամայն անօգուտ և ապարդիւն: Վեց ամիսը կեռն էր ընկել խեղճը գեռ թափառում էր. ում էլ պատահում էր, միշտ այն էր հարցնում, թէ իւր եղբօրը կենդանացնելու համար ճարի տեղեակ չէն: Ամենքն աղանձուել, պապանձուել էին, մի լուսատու խօսք չէին հանում բերաններից. հենց բոլորն էլ գլխները ժաժտալով պատասխանում էին.

— Ա. Եղբայր, նա Աստըծուն մի հոգի էր պարտական, տուել է պըծել, էլ նրան ինչ ճար ես ուզում:

Հողը, քարը, փայտը, որ անշունչ, անլեզու բաներ են՝ նրանց անգամ դիմում, օգնութեան էր կանչում Փափագը: Վերջը հասաւ մի հովուի, որ մահակը դիմհար տուած մըտամոլոր կանգնել էր: Հովիւը սրան թէ:

— Ա. մարդ, ուր ես գնում:

— Դնում եմ Աստըծու մօտ այս ինչ ճարը հարցնելու եղբօրս համար:

— Քեզ մատաղ լինի իմ ջանն էլ, իմ ոչխարն էլ. Աստըծուց մի ճար էլ հարցրու ոչխարիս համար. ասա ամբողջ հօտը կոնդացել է, չի կարողանում ոտ փոխել արածելու համար. սրանք մնացել են մեղք ու կըակ, ես էլ երեսները պահելիս:

— Լայ կլինի, պատասխանեց Փափագն ու շարունակեց

Ճամբէն. տեսաւ մի բախրա այնքան մեծ, այնքան ահագին պողեր ունի, որ մինը գնացել է տմպերի մէջ թաղուել, միւսը եկել քերծին դէմ է ընկել: Խեղճ անասունը չարչարւում է, չի կարողանում ազատուել: Փափագին նկատելուն պէս պողնգնոտ ոլով ասեց.

— Ո՞ւր ես գնում, սիրուն տղայ.

— Աստըծու կուշտը:

— Բա Բնչ կլինի, բարի լինես, ինձ համար էլ հարցնես, թէ պատճառն ինչ է, որ եօթը տարի շարունակ ալսպէս խեղճ մնացել եմ սոված, ծարաւ:

— Նատ բարի, պատասխանեց Փափագը ու գնաց: Երկար գնալով լոգնեց ու շոքի ձեռից քաշուեց մի քերծի շուաք: Բարին թինկը տուած միջոցին քունը տարաւ: Երազումն այնպէս էր թուում թէ Աստըծուն մօտեցել է: Զարթնեց թէ չէ՝ մի մեղրաճանճի բզզոց լսեց: Քանի օր էր բերանը ոչինչ չէր գրել. բզզոցի վրայ գնաց, որ մեղրով նիւթ առնի: Առաջև մի ալր բացուեց: Քանի գնում, ալրն այնքան մթնում էր և բզզոցն ուժովանում: Փափագը ալրի մութ խորշերին, ծերպերին նայելով սսրափում, զարզանդում էր: Ասում էր չը լինի թէ սա գողագարան է. մեղրաճանճը ալոչափ խոր տեղերում ինչ է անում: Ալրի խորքը հետզհետէ լայնանում էր ու բզզոցը պարզ, մեկին լսում: Փափագը մի քանի անգամ ուզեց յետ գառնալ, մի երկու ոտ իւտ էր դառնում, կրկին ինքն իրեն սիրտ տալիս. «ոչ վախենալն է մի բան և ոչ ճամբի կիսից յետ գառնալը, գնամ, տեսնեմ ինչ կայ»: Ալս ասելով միսն ատամի տակն առած գնայ, գնայ և տեսաւ ալրի ընդարձակ տեղը մի ալեոր, ձնի պէս սիպտակ միրուքը գոտկից հետ՝ չոքած աղօթք է անում: Փափագը ալս տեսարանի վրայ վշաքաղուեց, չկարողացաւ երեսին մտիկ տալ: Սուրբ ճգնաւորն էլ դէմքը աղամորդուց շուռ տալով խօսեց.

— Ա. անփորձ հողածին, խնդրուածք ունիս առ Սատուած, թէ զուր եկել ես հանգստութիւնս գրդովելու:

Փափագը դողդոջուն ձայնով պատասխանեց.

—Ո՞վ սրբազն հայր, ես մի անմիտար ճամբորդ եմ և առ Սստուած աղերսալի խնդիր ունիմ: Բարեխօս եղէք Տիրոջ մօտ և մի հնար ասեցէք իմ սիրելի ողջումախօրս կենդանացնելու համար: Նա քարացել է թշուառիս ձեռով և ես նրա սիրոյ համար ամեն վայելչութիւն, արքայական գահ ու գաւազան թողած՝ շըջում եմ անդադար: Մինչև ճար չգտնեմ, ես տուն գարձողը չեմ: Զարհուրում եմ ամեն անգամ ողջումախօրս քարացած տեսնելով, նրա ուրուականը ինձ հանդիսա չի տալիս. գիշերցերեկ հալածում է: Սրբազն հայր, մեղքացիր ինձ, ասա ի՞նչ անեմ, որ ջրում խեղդուիմ, որ կրակում ալրուիմ, որ նրան մի հնար լինի:

Ճգնաւորն առանց դէմքը ցոյց տալու՝ մեկնեց ճկոյթը:

—Առ այս մատանին, ասեց, սրա մէջ տմեն բարերար զօրութիւն կայ. ջրի մէջ կը զցես և այն ջուրը կըսրսկես երեսին, իսկոյն կըկենդանանայ:

Փափագին ապարանքներն ասեց. դրանց պատասխաններն էլ տալուց յետոյ ալեորն աներևութացաւ. Քարանձաւը լուսաւորուած էր, ոքմին չկար:

Փափագը հասկացաւ, որ ճգնաւորը հէնց Տէր ի՞նքն էր: Գնաց չոքած տեղի հողը համբուրեց, ջերմեանդութեամբ ծունը դրեց ու ելաւ ալրից:

Դարձաւ բախրի մօտ, սրբազն մատանին քսեց պողերի չորս բոլորը, իսկոյն տեղահան եղան թափուեցին: Բախրէն աղատուեց, Փափագին շնորհակալութիւն անելով վազեց արօտ:

Այդ տեղից գնաց հովուի մօտ, ասեց.

—Երկու կտոր երկաթ ճարի, ճղների պէս իրար կպցըրու, ոչխարի բուրդը խուզի, կըթեթևանալ և կըոտնաւորի:

Հովուի մօտ կաթնաբրդուշ ուտելուց յետոյ ճամբայ ընկաւ ուրախուրախ: Ոտներն այնպէս էր փոխում, կասեմ հրեղէն ձի: Նատ գնալով հանդիսեց մի առուի. ուզեց ճա-

քաւը կոտրել, ջուրը շատ պղտոր էր. վերև գնաց ակը գըտնելու: Տեսաւ բաւական հոգիք աղբեկը վրայ եղած, որը շորն է թափ տալիս, որը երեսն է լուանում. որը մազերն է սանդրում. բոլորն էլ ջահէլ, բոլորն էլ զէնք ու զրահով, հեռաւար երկրի մարդիկ:

—Բարով, այ հոգու աղբեկտինք:

—Աստըծու անհատ բարին քեզ:

—Ի՞նչ մարդիկ էք, ուր էք գնում:

—Մենք հեռու գաւառների իշխանազուններ ենք, եկել ենք բազգներս փորձելու:

—Ում վրայ, որտեղ էք փորձելու, հարցը Պափագը:

—Ե՛, այն հեռու սարալին տեսնում ես. Լանգաբերդ են ասում, նրա տէրը մի հատիկ սիրուն ողջիկ ունի: Տարուայ հինգ նաւակատկին փեսաժողով է անում: Նատ երիտասարդների վերջ է արել, մենք էլ գնում ենք մրցահանդէսին մասնակցելու:

Փափագն ասեց, «ես էլ ձեզ հետ»:

Գնացին, Լանգաբերդ այն ժամանակ հասան, որ աղիկը կանուխ ներկայացող իշխանազուններին նեղն է լծել: Ուզում էր պնդոցը ժողովել հանդիսականները նորեկ երիտասարդներին տեղ տալով բարձրածայնեց.

—Նորերը քաջ կըլինեն, սրանց փորձեցէք, գեռ պնդոցը մի բանաք, մի բանաք:

Հարսնացուն նաժիշտների արանքից ականեց, տեսաւ եկող փեսացուները բազմաթիւ են, որը տարաժամած է, ժամանակ չի լինիլ առանձին-առանձին փորձելու, այս առաջարկն արեց մարդամիջով.

—Երեւութով ամենքդ էլ քաջ, կտրուկ երիտասարդներ էք. բայց ինքներդ լաւ կը ճանաչէք, թէ որն է ձեր մէջ արժանաւորագոյնը. ձեր յօժար կամքով նրան ընտրեցէք. Ժող առաջ գալ, իմ ձեռից կովկիթն առնի ու կաթով լիքը

տանի այս բարդու կատարը և առանց մի կաթիլ թափելու վեր բերի:

Հարսնացուի այս առաջարկի վրայ երիտասարդները կարմըրատակեցին մին. մինի նայելով, ոչովի վրայ մատնացոյց չարին: Նրանցից ամեն մինն էլ ցանկանում էր ինքը հարսին տիրանալ, բայց խորագէտ հարսնացուն աչքի տակով նշմարելով նրանց ծոլ-ծոլ վափոոյն ու փնթինժոցը կամեցաւ երիտասարդներին ատամի տալ կարդով կանգնեցնելուց յետոյ քօղն երեսին եկաւ փեսացուների առաջով անցնելու: Իւրաքանչիւրին մօտենալիս հէնց որ քօղը բարձրացնում էր, դէմի երիտասարդը շափաղից շփոթւում էր ու աչքերը գետին գցում: Ներթը հասաւ Փափագին, քօղը կէս խուփ նայեց, տղէն այնումը չգցեց, աղջկը քօղը ճակատը հասցրեց, երեսբաց նայեց, տղէն աչքն էլ չճպեց: Աղջկը սրա կոնից բռնած քընքշաբար բարդու մօտ քաշեց.

— Բոլորի միջից ընտրեցի սրան, որ աւելի անվախն է երեւում: Եթէ, ինչուես ասել եմ, կովկիթը, կաթով լիքը անարատ կտանի, անարատ էլ կրերի՝ ես կլինեմ որա բաղդը: Այնուհետեւ իր կամքն է, ուր ուզում է տանի: Բայց եթէ առաջինների պէս անշնորհք կըլինի, ձեռները կըդողդողան և ներքեւ կաթան նշան կլինի՝ իսկոյն գլուխը կը կտրուի. այս առելով կաթը մեկնեց, ունքամէն էլ քաղցրացրեց: Փափագն անթարթ աչքերով իրեն ուզած ժպիան ընդունեց կովկիթի հետ միասին:

Փափագը իր հօրն ու բարեկամներին միջոց էր որոշել մինչև նախրաժող եթէ եկաւ, եկաւ, եթէ չէ, իմանան որ ոտով գլխով կորել է:

Հէնց այդ նախրաժողի պասն էր ու երկու օրից յետոյ նաւասարդ: Ժողովուրդը տես պէտք է գնացել էր իւր թափաւորին, շնորհաւորելու այդ ազիզ տօնը: Թափաւորն ըստ սովորութեան ուրախակցում էր ժողովրդին, դրամ կամ թանգագին ընծաներ բաժանում: Փափագը տարակուսած բարդու

տակին մտածում էր. «Ապաւէնի քարանալու պատճառով արդէն աշխարհը սգաւոր է, ալժմ եթէ ես էլ ժամակորոյս լինիմ ու որոշեալ օրը չերեամ, իս հօրս ու ժողովրդի վեշտը աւելի կսաստկանայ»: Այս մտմըտուքի մէջն էր. աղջիկը կարծելով թէ ազօթք է անում, ասեց.

— Քաջի ալօթքը կարծ պէտք է լինի, որ գործելու միջոց շատ ունենաբ:

Փափագն անխօս սկսեց բարձրանալ ծառը: Բարդու տակ բերին ու շալ փռեցին, որ կաթիլը նշմարուի: Ճգնաւորից ստացած մատանու մի կողմը կովկիթում թաթիւց, կաթը թանձրացաւ ոնց որ գոմշի մածուն: Դրեց գլխին ու վէր թափուելուց ապահով հասաւ կտարը: Բայց ծառն էլ ծառ չէր է. նրա տունը ծակուի, գլուխը, ով գիտէ ամպից էլ անց էր կենում: Մինչեւ այդ օրը ոչ մի ադամորդի սիրտ չէր արել կատարը բարձրանալ. գեռ կէս տեղը չհասած՝ աչքերը շաղում էին, գլուխը պտոյտ գալիս: Այդ ծառի կատարից շատ աշխարհներ երեւում էին պարզ, ինչպէս ձեռիդ միջին: Փափագի զուարծութեանը շափ չկար, ամեն կողմ նայեց ուրախացու. վերջը իր երկրի վրայ էլ նայեց: Նշմարեց իւր սահմանի վրայ բաւական բազմութիւն կանգնած. գուշակեց որ դա իւր հայրն է իւր երկրի ժողովրդով, որանք եկել են Փափագին դիմաւորելու: Սպասում են իր գալուտեան: Երբ կըտեսնին օրը մթնում է, դարձեալ չի երեւում, կիմանան որ ինքը կորած-մեռած է, տիտր-տրտում տները կըդառնան:

Այս մտածելով Փափագը ծառի վրայ լաց եղաւ. բոլոր արտասուքը կուլ տուեց, բայց մինը որ շատ խոշոր էր, գլուխը ընկաւ ներքեւ:

Հարսնացուի հայրը բացականչեց.

— Կորան, այդ տղէն էլ կորաւ:

Ժողովուրդը տիրեց այդ անաջողութեան վրայ, բայց տիրելը աղջկանն էր, որ փռանց այդ երիտասարդին հաւանել էր և մտքումը սիրել: Անաջողութեան լուրն առնելով

նուաղեց ու նաժիշտների օգնութեամբ հասաւ իւր առանձնարանը: Փափագն անտեղեակ այս ամենին՝ կովկիթը դլիխն իջաւ, զգուշութեամբ մատանու միւս կողմը թաթխելով՝ կըրկին հեղուկ դարձրեց կաթը և գետնի վրայ դրեց տիրագէմ: Դահիճներն եկան որ կոները կապեն, Փափագն ասեց.

— Ինչու էք կապում, դեռ սպասեցէք կէս խօսք ասեմ թագաւորին, լետոյ կապեցէք, ընդդիմացող չեմ:

— Ասա, ասա, պատասխանեց թագաւորը, բոլորի լուսն էլքեղ վրայ էր, ափսոս գրաւդ տանել տուիր:

— Թագաւորն ապրած կենայ, սխալում էք, գրաւը ես տարել եմ: Կովկիթը անարատ տարել եմ, անարատ բերել, բայց եթէ կաթիլի համար էք ասում, նա կաթը չի:

— Զուռ երեսում է, էլ որտեղ չի կաթը. մի բան որ աչքով տեսած լինիմ, էլ խօսքով խարել կլինի: Սև շորի վրայ սիպտակ կաթիլը աշկարայ բղաւում է կոլը մարդուն էլ, որ ես կաթն եմ, կովկիթիցն եմ ընկեր:

— Նատ բարի, ողորմած թագաւոր, Աստուած միջնորդ է այստեղ. բերել տուր մի արդարասէր մարդ. թող լիզի թէ քաղցը լինի, քու տարածն է, թէ աղի լինի, իմ տարածն է:

— Յօժար եմ, թող այդպէս լինի, պատասխանեց թագաւորն ու ընտրեց մի ճշմարտախօս մարդ: Ֆողովուրդն իւրաք հրելով, իրար քունչ տալով, գլխների վրայ մէջ էին ընկնում, որ ժամ առաջ տղի վախճանն իմանան: Ըստրուած մարդուց էր կախուած դատավճիռը: Չոքեց լեզուն դիպցրեց.

— Թագաւորն ապրած կենայ, ասեց. ճշմարտին հաւատա, սա կաթան համ չի:

— Բա՛ ինչ է, հարցրեց թագաւորն այլայլուած:

— Ի՞նչ լինելը չգիտեմ, միայն խիստ աղիէ: Ֆողովուրդը ինդաց ու բարձր աղաղակներով օդը թնդացրեց: Երբ թագաւորն աղիութեան պատճառը տղից պահանջեց, սա թէ՝

— Ի՞սկ պատճառը հարսնացուին կասեմ: Փափագին առաջնորդեցին աղջկայ մօտ: Սա խնդումերես ընդունեց, ձեռ

տալով ճակատից համբուրեց ու կողքին նստացրեց: Փափագը նրա խնդրով պատմեց իւր գլխի անցուանքը. երբ արտասուքի պատճառը պէտք է բացատրէր՝ կապ ընկաւ ու լոռեց: Աղջիկը պահանջեց որ շարունակի: Տղէն թէ՝ «խօմ չես նախատիլ, որ սրտինս ուղիղ խոստավանեմ:

— Ո, յն ժամանակ տմարդ կասեմ, երբ սրտինդ կեղծես, պատասխանեց աղջիկը:

— Նատ բարի, ասեմ: Իմ ալսքան նեղութիւն կրելու նպատակն այն չէր, որ քեզ վրայ պատկուեմ:

Սյս խօսքի վրայ աղջկալ ունքերը թռումեցին:

— Ես քեզ հաւանել եմ, շարունակեց Փափագը, իմ եղբօր համար, որ իմ սիրու համար քարացած է:

— Նա որ քարացած է, ինչպէս կլինի մեր պսակուելը, հարցրեց աղջիկը:

— Դրա համար իւր հաւատարիմ ողջումախպէրը ճարը գտել է ու հիմի գնում է, որ կենդանացնի:

— Ես յօժար եմ, ինչպէս կամենաս, քու ընկերին ես էլ եմ հաւան անտես, անձանօթ:

Թագաւորը ներս մտնելով մանրամասն տեղեկացաւ աղջկայ ու տղի զլոցներին: Վերջն իր կողմից ասեց.

— Հաւատում եմ որ այստեղ Աստըծու մատը խառն էր: Քեզանից պարթե ու գեղեցկադէմ երիտասարդներ շատ են պնդոց մտել երեկ քարացած ողջումախպօրդ բազդիցն էր, որ ամենին տուիր անցկացար: Երբ որ աղջիկս հաւատալով քեզ յօժարում է քարայած եղբօրդ կին լինել՝ ես էլ իմ կողմից յօժար եմ: Եթէ Աստուած իմ ծերութեան խղճայ, քարացածին կենդանութիւն տայ՝ ձեզ էլ ուրախութիւն կըլինի, մեզ էլ. եթէ չի լինիլ՝ իւր կամքն է: Փափագը հասկացրեց, որ հարկաւոր է շտապեր ինքն ու աղջիկը նստեցին ընտրովի ձիան ու ճամբայ ընկան:

Խեղճ հալըն ու Հուրհերը աչքները դռան կթած գեռ սպասում էին Փափագի երեւալուն: Ողջ քաղաքը նաւասարդի

պատրաստութիւնը տեսել, թագաւորի կտրի սև դրօշակին էր նայում, արդեօք Փափազը չի եկել, որ կարմիր փոխեն: ԶԵ, չեկաւ մինչև ուշ գիշեր: Աշխարհի սովորութեան համաձայն քաղաքացիք առաւոտը պէտք է թագաւորին տես գնալին. բայց միտքները փոխում էին, «ախր ո՞նց սգաւոր թագաւորի երեսը գնան»:

Թագաւորն էլ որդու բացակայութեան միջոցում մէկ գնում էր Հուրհերին միսիթարում, մէկ գալիս Ապաւէնի երեսն ի զեր նայում, կորած որդին մտաբերում, փուլ գալիս ու ձնանման մազերը արտասուքով ողողում:

### ԺՊ.

Ադամաւ մութը նոր բացուած միջոցին, երբ Աստծու չարն ու բարին իրարից նոր էին բաժանուել, երկու հոգի Պայ-պայի թագաւորի պալատին մօտեցան. նրանցից մինը ծոցից կարմիր թաշկինակ հանեց, կատելով նետին, նշանակի տուեց գրօշակի ձողին:

Հուրհերը լուսամուտի տռաջ աչքերը սրբում էր. նկատեց թէ ինչպէս մի սովոր ձեռ մեծ դռան սողնակը քաշեց ու սրարշաւ երկու հոգի միասին բակ մտան:

Հոգին մի բան վկայեց. Էլ տեղը չհամբերեց, նետի պէս սրացաւ և ուրախ բացականչութեամբ եկողներից մէկի վզովն ընկաւ:

— Ո.՝ ի Փափագ, Աստծուն փառք, ողջ եկար. այսքան տանջել կլինի:

Ամենքն էլ դուրս թափուեցին ակնթարթում ու խընդումից չգիտէին ինչ անէին: Փափագը չթողեց ժամանակ կորչի, տեսնելով որ նրանց արտասուքին վերջ չի լինի, տսեց.

— Խնդրեմ այս քոյլացուիս ձեզ մօտ ընդունէք, շուտով ինձ մի աման ջուր բերէք, յետով ամեն բան լաւ կըլինի:

Խնդրել կատարուեց իսկոյն: Մատանին ջրի մէջ զցեց, ջրից մի բուռ ածեց քարեարձանի երեսին, Ապաւէնը թերթերունքը շարժեց, աչքերը բաց արեց: Երկրորդ բուռն ածելիս, արձանը խոր ախ քաշեց. երրորդն էլ ածելուց յետոյ Ապաւէնը վերկացաւ և զուարթ խօսել սկսեց, կասես քնից կշացած մարդ: Թագաւորի ուրախութիւնն անսահման եղաւ, երբ տեսաւ կորած որդին գտնուած, քարացած հոգէորդին կենդանացած: Հրամայեց ընդհանուր մեծ սեղան պատրաստել, պալատականներին, հշխաններին, ժողովրդին աւետիս տալ:

Փափագն Ապաւէնի առաջ չոքած՝

— Ապաւէն չան, ասաց, արդեօք ներում ես քու Փափագին իւր անգգոյշ սխալանքի համար:

— Ապաւէնը ամենին պատրաստ է ներելու, ինչ թէ իւր ողջումախալորը, որը իւր հերթում ապացուցեց իւր անձնուի ըութիւնը:

— Նատ բարի, ուրեմն կըլսես հատիկ խնդիրս:

— Ինչո՞ւ չէ:

— Դու ինձ մուրազիս հասցըիր, ուզածս տեղաց արիր անհուն նեղութիւններ յանձն առնելով: Քու արածի հարիւրական մասը դեռ ես արած չունիմ. մնում է որ քեզ կենդանացնելուց յետոյ արժանաւոր հարսնացու էլ ճարեմ: Արդեօք ընտրելու կատարեալ իրաւունքը ողջումախալորդ տալիս ես:

— Տալիս եմ, լիաբերան պատասխանեց Ապաւէնը: Այդ խօսքի վրայ սկալատի միջի գոները կըլնկի վրայ բացուեցին ու երկու լուսադէմ աղջկերք ներս եկան: Ապաւէնը երկսին էլ խոր գլուխ տուեց. մինը Հուրհերն էր որ Փափագի կողմն անցաւ, իսկ միւսը մօտեցաւ Ապաւէնին և իրար հետ կըռնաբունուկ մտան ճաշարան, ուր թագաւորը աշխարհ գլխին հաւաքած նրանց ճամբէն էր պահում: Որ չորսը միասին չեկան ու անուշ ժպիտով հանդիսականներին չողջունեցին, հէնց իմանաս արև ծագեց: Նրանց շղանգից պատ ու առատաղ ճրագի պէս վռվացին, հուրհերատոցն ընկան:

Թագաւորը կթխան ձեռն տռաւ.

— Ենորհաւոր նաւասարդ, աչքներդ լոյս, սիրելի ժողովուրդ:

Ժողովուրդն էլ գաւաթն ու քարէղանները ձեռներին.

— Աչքդ լուսի կենայ, մեր պատուակտն թագաւոր. ջահեները միշտ ջուխտ մնան, ոնց որ նանի ծիծը ջուխտ է:

ԱՌ էրէց, դարձան տէրտէրին, Ապաւէնի նշանը օրհնիր: Այսօր նշանաւոր տօն է, թող աւելի նշանաւոր դառնայ: Օրհնիր որ մեր աշխարհի ջահէները միշտ մէկ մէկու այնպէս սիրեն, ինչպէս այս երկու ողջումախպէրները:

Հէնց այս խօսքում էր, ձիւորի տուտը բաց եզաւ դէպի պալատի բակը: Եկողն Ապաւէնի աներացուն էր, որն իր փեսալին կենդան տեսնելով դուրեկան պատկերի վրայ հիացաւ. Դեռ սեղան չնստած մօտեցաւ, համբուրեց ճակատից ու մատի մատանին նրան տալով:

— Դեռ չտեսած, քու պատմութիւնները լսելով, յօժարուեցի միակ աղջիկս արձանիդ գերի տալու, ալժմ որ տեսնում եմ կենդան ու ողջ՝ տալիս եմ քեզ ամբողջ թագաւորութիւնս:

Հէնց այս խօսքում իմաց տուին, որ մի ծեր իշխան բակում կանգնած է: Փափագը շտապեց դուրս, ճանաչելով ուշախուրախ ներս բերեց: Ապաւէնի աչքն առնելուն պէս արտասուքն առուի պէս հոսեց, ուրախ ճիչ արձակելով վեր թռաւ նորեկի ձեռը համբուրեց.

— Սա էլ իմ հայրացուն է, ասեց Ապաւէնը, թագաւորին ու աներացուին ներկայացնելով:

Ուրախութիւնն աւելի թնդացաւ ու աշխարհովի դարձաւ:

Բազմականները հիացած Ապաւէնի ու նրա քաղցր աստղի վրայ՝ միաբերան լիասիրտ մաղթեցին.

— Տիսուր օրդ անցկացաւ. այսուհետեւ կեանքով կշտանաս, մինչեւ մահ-դերեզման ծուխդ ծիրանի մնայ, մեր աշխարհի ապաւէն:

## Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ալարկոտ — ծոյլ, հեղպ.

Ախպէրացեղ — եղբալրացեղ, ողջումեղբայր.

Ածովի — ձուլած.

Ածիսակօթ — կիսալրեալ փայտ օջաղի վրայ.

Ականել — աչք ածել.

Ականջաբռնուկ — աչքալոյս.

Անտառիներ — անտառում բնուկուղ հսկայ էակներ.

Աննիւթ — անհաց.

Աչք կթել — սպասել.

Ատամի տալ — փորձել.

Ատամը մազ մանել — ուժը պատել.

Արա — տօ.

Արեւնպարտ — արեան պարտական, յանցագործ.

Բախրայ — եղջերու.

Բան գցել — գործադրել.

Բամբաչել — գլխին ամուր խփել.

Բարակ մանել — տկարանալ.

Բլդուզ — բերանն ուռած, լրցրած թուշերով.

Բղլալ — վտանգի ժանանակ եւ զան բառաչելը.

Բրիշակ — աւերակ.

Գինոս — շատ գինի խմող.

Գիտկան — գիտուն.

Գլուխը փէշում դնել — հպատակուել տիսուր բաղդին.

Գեղապէտ — հիւանդի սրտի ուղելիք.

Գեղնակօթել — գոյնը թռցնել, դեղնել.

Գմբուզ — կռուվի.

Երեսհարք — դէմք.

Երեսում փուշ ունենալ — աղդու հայեացք ունենալ.

Գուռ — ահագին, մեծ.

Պաշտամոշ — ապտակ.

Թթուել — զալրանալ.

Թոնթորալ — փնթփնթալ.

Թուալ — ազգել.

Թռըմոշկած—թռչնած.

Ի՞նչ աստղի ադամորդի—ի՞նչ  
բազդի ադամորդի.

Լախո—կաշէ կամ ամուր լա-  
թէ ոլորած կարճ պարան.

Լաջ—հակառակ.

Լելոխ—տիղմում շաղախուած.

Լիսնահող—կաւահող.

Լոշտակ—տափակ.

Խախալի գլուխը բան գցել—  
օգտառել յաջողեցնել.

Խաղահան անել—յօդահան ա-  
նել.

Խելքամաղ լինել—խելքը թըռ-  
ցնել.

Խէճ ու զռէճ—խիճ.

Խոճուել—լափել, ուտել.

Խոլալ—անհամար բազմու-  
թեամբ այս ու այն կողմը

շարժուել, մարգիկ, ձկներ.

Խոնչա—փայտէ երկար ձեր մա-  
տուցարան.

Խոտոր գցել—պարկեցնել.

Ճեր—ակօս.

Ճշլալ—կաթկաթել, հոսել.

Ճկրակել—թաքնուած տեղից  
անթարթ նալել.

Ճպրտալ—բղաւել.

Ծմակ—անտառոտ.

Ծմբանները կտրել—լուել, պա-  
պանձուել.

Ծուլ անել—վերև գցել, բար-  
ձըր նետել.

Ծուլ-ծուլ լինել—ճախրել,  
բարձրանալ.

Ծուռն—թռռան որդի.

Ծրծոքել—մինչեւ յատակը  
դարտկելու աշխատել.

Կածան—նեղ, ոլոր-մոլոր շա-  
փիզ.

Կարմիր ուսկապը կապել—  
հարսանիքի նշտնը՝ կարմիք  
թաշկինակ կամ աբրեշումէ  
վիլա (թաթուկ)՝ կապել  
թագաւորացուի ուսից.

Կեռն ընկնել—լրանոլու մօ-  
տենալ (տմիս, տարի).

Կզնուած—բարկացած.

Կթխալ—գինու մեծ թաս.

Կիսրար—հաւասար կէս բաժ-  
նի տէր.

Կլափ—բերան, ծնօտ.

Կլափին տալ—բերանը բացու-  
խուփ անել մերձ ի մահ  
ժամանակ.

Կնկուշտուրիկ—սիրուն, գե-  
ղեցիկ.

Կշկուռ—հանդոյց, կապ.

Կոնդորնալ—գալլի կամ շան

Լալը.

Կոնդանալ—ոտից խեղճանալ,  
անդամալուծուել

Կորած-մոլորած—անյալտ.

Կուլ-բուկ, —ծնօտի ստորին  
մասը.

Կուլ-կուլ լինել—ձգուել դէ-  
պի մէկը.

Կոնառոր —ուժդին կերպով.  
դարբինը երկաթ տափա-  
կացնելու միջոցին զարկում  
է կոնառոր.

Հակառակի ձին նստել—սա-  
տանի ձին նստել.

Հաղակել—տրորել.

Հանդերձի փէշը զլխով գցել—  
որդեգրել

Հիւսել—իրար ետնից խփել.  
ծեծել.

Հլէ—գեռ.

Հոթ—կաւէ լախաբերան ունկ-  
նաւոր մեծ աման.

Հորէս—ահաւասիկ.

Հուրհրատոցն ընկնել—փայլ-  
փլել.

Հեռոց—հեռոց, թանչոց.

Զեռի խաշուն խմել—ուժը  
փորձել. ծեծ ուտել մէկից.

Պընած—լցուած, զգացուած.

Ղժժոն—սրընթաց (գետ).

Ղժրիկանալ—առուգանալ.

Ղնջղնչ—կսկիծ, մղկիտ.

Ղոչ—խոյ.

Ղունթալ—հաստ, խոպոտ շը-  
շուկ հանել. ձին գարին ու-  
տում է զունթալէ.

Ղրթալ—պարանի ուժդին քը-  
սուելլը. ուժով կտրուելլը.

Խանչալի կամ գանակի մի  
բանի մէջ ուժով միելլը.

Ճլել—վազել մէկի ետնից.

Ճլմկոտալ—մարմինը կոտրա-  
տել յօրանջելով.

Ճլուլուել—հաւաքուելով բար-  
ձուել մի բանի վրալ. ծտեր,  
միջատներ.

Ճլորած—թառամած.

Ճոխանալ—հրճուել.

Ճումբ—հողի մեծ կտոր.

Ճպել—աչքը թարթել.

Ճումեռուել—ջարդել, ուժաս-  
պառ անել.

Պաղը թեքուել—վնաս դիպ-  
չել.

Պաթրաթ—կաւէ մեծ քրեղան.

Պակառ—թագաւորացուի ըն-  
կեր.

Մասունք դառնալ—նիհարել.  
Մեղմէրեց տալ—առանց բոյի  
և ծուխի ինքն իրեն այ-  
րուել.

Մէրը—մալրը, խաղի գլխաւոր  
անդամ.

Մթնաժոռ—իրիկնադէմից յե-  
տոյ գէպի իրիկուան մութը.

Միսն ատամի տակն առնել—  
նամուս ընկնել.

Մլալ—թանձր ծուխի կամ  
որեւէ բուրմունքի ծանը  
բարձրանալը.

Մխուել—թխանալ.

Մղակ—գուան ետեւ, շէմք.

Մշմեղած—հանգչելու մօտ  
հասած.

Մորմոտ—տաք մոխիր.

Մուրզազոր—վաղաժամ մե-  
ռած.

Մրգոքել—քամել, հատացնել,  
(գինի, ջուր).

Մրճեղ—կայծերի վրայ նստած  
աճիւն.

Նախրաթող, նախրաթողի  
պաս—Յիսնակի պաս.

Նիւթ առնել—ուտել, կազ-  
դուրուել.

Նղղել—թմրել թուլանալ.

Նշանուկի տալ—նետով, գնդա-  
կով մի բանի խփել.

Ջէխ-շէխ անել—օրօրուելով  
գնալ.

Շրանգ—շող ճրագի, կրակի.  
Շողոմքոր—խոնարհ.

Աւշիարանալ—սթափուել.

Ոտների թելը հատնել—ոտ-  
ների որժը սպառուել.

Ոտը լինել—կանգնել, հան-  
գըստանովլ.

Ոտնառտել—մանգալ, շրջել.

Որձակ—աքաղաղ.

Զալիկ-մալիկ կխտար—նախ-  
շուն եղնիկ.

Զալտըլուրիկ—խայտախարիւ.

Զանթել—բռնել մատներով  
գցած բանը.

Պատ քցել—պարանը շուրջ  
բոլոր անցկացնել.

Պարանել—շրջել, շուռու տալ.

Պարան գցել—վէր գցել, գե-  
տին տալ.

Պելացած—ապշած.

Պէծ—կայծ.

Պնդոց—բերդ, ամրոց.

Պող—կայծ, պէծ.

Պուլիկ—կաւէ աման առանց  
ունկի.

Պուլնկնատալ—սլաղատել.

Պուլքած—ինդացած, անմը-

### Խիթար նստած.

Սալանի—սալ մեծ տափակ  
քար. այդպիսի մի մի քարի  
վրայ կանգնեցրած են հին  
տների ահագին հաստու-  
թեամբ սիւները.

Սալարած—թառամած.

Սալ, սալեր—խաղի մէջ որո-  
շած թիւ, որը լրացնելուց  
յետով խաղը տարուած է  
որևէ կողմից: Տղամարդիկ  
այդ թուին իրենց խաղե-  
րում սալ են տառմ, իսկ  
ազիջները լաչակ.

Սասում—անթիւ բազմութիւն  
շնչաւորների.

Սարալի—աշտարակ.

Սըկել—քշել, խրկել (ջուր).

Սըկսըկալ—ահ քաշել, վախ-  
վախնել.

Սմբակներից հետ—սմբակնե-  
րից սկսած.

Սըռ—լերան կատար.

Սըհար—սրածալը մեծ փուշ  
կամ բեկու.

Սըտմա լինել—զզուել.

Սըտումը մի բան տպալ—սըտի.  
մէջ մի բան գուշակել,

զգալ.

Սըտի փուք—սըտի վիշո.

Սըտի քիթը մղկըտաց—ան-  
չափ կոկծաց.

Սփարթնել—գոյնը նետել,  
թալկանալ.

Վէգ—կոճի.

Վշտի տալ—խալտալ.

Վովուալ—բոցավառուած այ-  
րուել.

Վրխալէ—առատօրէն հոսելով.

Տալ—Սողոմաշէն հին տների  
(որևէ կոչւում է գարբազէ  
տուն) ծածկը ունի չորս  
կողմ, որոնք սրանալով վեր-  
ջանում են հերթմակով,  
իրաքանչիւր կողմը իւր  
գերաններով, տախտակնե-  
րով կոչւում է տալ ևս նը-  
շանակում է փեսի քոյր.

Տմբամբացնել—շարժել.

Տրտըքէշ—տգեղ, գէշ.

Ցալքուն—ցալտումն.

Փլանչա—մեծ կտոր.

Փոթոթուել—վշտից նեղանալ  
ալրուել.

Փորձանքից պատրաստ մտրդ—  
վախկուտ մարդ.

Փռւմփիսիկ — գանգրաձև ճիւշ տոր.  
զեր կամ սաղարթ. Քերծ — ժայռ.  
Փռանց — հազիւ. Քուլնչել — հըել.  
Քրտնքել — քրտնել.  
Քարագրոն — քարի մեծ կը-



ՀՀ Ազգային գրադարան  
  
NL0685895

